ցաւ Ահարոնի աթոռը, և երեք տարի ալ ա-
նարժանութեամբ պաշտօնը վարեց, բայց երբ
որ Անտիոքոս այս բաներս չարագրդիու մարդիկ-
ներէն լսեց, կարծեց որ Հրեայները իւր թա-
գաւորութենէն ապստամբած են, ուստի զօրաց
բանակ կազմելով փութով Արուսաղէմ եկաւ,
և լի ցասմամբ երեք աւուր մեջ ութսուն հա-
զար մարդ ջարդելով, և քառասուն հազար ալ
գերի բռնելով օտարքաղաքներ խրկեց ու ծա-
խեց։ Կա եւ Վենեղաւոսի մատնութեամբը
Տաճարը մտաւ, արծաթները ոսկիները և բոլոր
պահուած գանձերը, մանաւանդ ոսկի սեղանը,
լուսոյ աշտանակը, վարագոյրները, խնկանոցնե-
րը, պատկերները, և զարդերը՝ ամենը հազար եօթն
հարիւր քանքքարի չափ ժողովեց տարաւ, և մնա-
ցեալ Հրեից վրայ ալ Փռիւգիացի Փիլիպոս
անունով մեկ չար մարդ մը վերակացու դրաւ,
և ինքը գնաց իւր տեղը։

Յ 4

Ըստ ժամանակ չանցած խրկեց Ապողոնիոսը
20,000 զօրքով, որ ամեն չափահաս մարդիկնե-

ըր ջարդէ, և կանայքն ու տղայքը գերի ծախէ : Եկաւ հասաւ այս խարամանի մարդը Երուսաղէմ, և ապասէց մինչեւ Նրէից շաբաթ օրը, որուն մէջ ամենեւին գործքի մը ձեռք չեն զարներ . յանկարծակի վրանին հասնելով շատ մորդիկ ջարդէց, և քաղաքին պարխապներն ալ կործանեց : Իսյց Անտիոքոսին կամքն էր, որ մնացած ժողովուրդը կուռք պաշտէ, անօր համար Աթեներիսը Երուսաղէմ խրկեց որ շատ չարշարանքներ տալով անոնց կուապաշտութիւն առվ րեցնէ . որ և եկաւ և շատ հեղգասիրտ մարդիկ դարձուց, և օր մ'ալ երկու կանայք իրենց տղայքը Առվակի օրինաց համեմատ Թրիատեւնուն համար, Աթեներիսը զանոնք անգթութեամբ պարխապէն վար նետել տուաւ : Այս աղէտալի և անգութ տեսարանները խղճալի ժողովուրդը տեսած ժամանակնին շատերը ինդնակամ թողուցին իրենց հայրենի ժառանգութիւնը ու հեռացան, և լեռներու ու ծերպերու մէջ սկսան բնակիլ, սովոր և նեղութեանց համբերելով, և Երուսաղէմն եղաւ տուն կուոց և տեղի կուապաշտութեան . երեք տարիի չափ Ատուածուածուաշտութեան ձայնը գէպ ՚ի երկինք առ Ատուած զբարձրացաւ : Առեցին ու դադարեցան Ատուածոյ զոհերու ու պատարագներու նուերները, և կռապաշտութեան ձենձերները երկիրը ապականեց, (Ա. Առիւ. Ա. 29) :



Յուրա Ուղիբեկ և իր Եղբայր Հայուն-Ական:

Այսանով պատիժը:

ՅՅ

Կատուած՝ որ եղբէք ձեռքէ չթողուց խա-
րսիլի ժողովուրդը, յարոց նախանձախնդիլ
հայրենի օրինաց Յուդայ Վակաբեն, քաջ պա-
տերազմովը. որ երկու անգամ հայրենի օրինաց
նախանձովը վառուած, թշնամիւաց ժանիքները
խորտակելէն և շատ դանձեր կողովուտներ բե-
րելէն զինի, խրախուսեց իւր եղբայրները՝ որ
իրեն հետ արիանան օրինաց աղասութեանը հա-
մար: Կանք քաջալերուելով Յուդայ Վակաբե-
ն՝ մեծ պատրաստութեամբ կրուսաղեմեկան,
և թշնամիները հալածեցին. և քաղաքին կոր-
ծանման և աւերակներուն վրայ շատ ողբալէն
յետայ, խրախուսեցին զիբար, որ կռապաշտու-
թեան պղծութիւնները սրբեն, և յետ այնորիկ
սկսին Կատուծոց տաճարն ալ նորոգել և Արքու-
թիւն սրբութեանցը շնուր, զոր և կատարեցին.
քաղաքի սրբիապներն ալ կանգնեցին և մեծա-
մեծ շնուրթիւններ ընելէն յետայ, Կատուծոց
շնորհակալութեան համար եօթն օր նաւակա-
տեաց տօն կատարեցին, և զո՞ մասուցանելով
փառաւորապէս Տաճարը զարդարեցին, (Ա. Վակ.
Դ. 44): Իսայ տաճարին և քաղաքին փառաւո-
րութիւնը դարձեալ առիթ եղաւ թշնամու-
թիւն յարուցանելու. վսան զի Կատայ ցեզի
ոյլագիները նախանձելով քաղաքին շքեղու-
թեանը, շատ չանցաւ եկան պատերազմեցան Ա-

բաւսաղէմի հետ . բայց Յուդայ Վակարէն զա-
նանք արդարութեան սրալ ջնջեց հալածեց , այն
առհմաններէն ու խաղաղեցաւ . (Ա. Վակ . Ե . 3) :

Իսպա երկար ժամանակ չաեւեց այս խաղա-
ղութիւնը , վասն զի քիչ ժամանակէն յետոյ | ու-
սիս ոուտ հաշութիւնն խոստանալով եկաւ
վերին քաղաքը (Վիօն) մնաւ , և հրամացեց որ
բոլոր սրարիապները քանդեն :

Յ 6

Այս միջոցին էք որ Վելեւելիխացւոց | ուսիս
թագաւորի հրամանաւ . Ավելանովը խորամանելու-
թեամբ Արտսաղէմ եկաւ , և Վակարէն հետ
ինամութիւն ըրաւ , որպէս զի դաւադրութիւն
ընէ : Օր մը քահանայները զինքը պատուելով
ըստն , տես թագաւորին կենացը համար զահ
կը մատուցանեմք . բայց Ավելանովը փախանակ
չնորհակալութեան , ձեռքը դէալ ՚ի Տաճարը
երկիցաւնելով ըստ . այս Տաճարը պիտի քան-
դեմ ; և անոր տեղը կուռքեր պիտի կանգնեցը-
նեմ : Այս յանդուգն և անակնելալ խօսքիս վայ
քահանայները երկիւղով պաշարուած՝ անդադար
գիշեր և ցորեկ կ'աղօթեն որ անոր չար-
հուրդը Վատուած խափանէ : Ավելանովը իւր չար
կամբը կատարելու համար՝ մեծ պատերազմ՝
բացաւ , բայց պատերազմին մէջ ինքը սպան-
նուելով , բանակը ցիր ու ցան եղաւ . և խ-
րայէլացիք անոր ամբարտաւան ձեռքը ու գը-
լուխը Տաճարին պարապէն կախեցին , ՚ի նախա-
տինս անոր ամբարտաւանութեանը :

37

Ըստ այս նախառական գործը Անդեւկիաց-
ւոց Ա. 'Վեմեար թագաւորը լսելով , ասասիկ
շիսթեցաւ , և (3859) Բաքեար և Վզկիսնար
իրկեց . որոնք եկան մեծ պատերազմ բացին և
Յուղայ Մակաբէն սպաննեցին , և Խիօնի բերդն
ալ առին : Ըստ Յովիսաթան Վզեքսանդրի հետ
դաշնադրութիւն ընելով և քահանացակետու-
թեան իշխանութիւնն ալ ընդունելով՝ սկսաւ
Երաւաղէմի պարխապները շննել , և քաղաքը
փառազարդել . (Ա. Վակ. Ճ. 18) : Թէպէտ Վե-
մեար երբ որ լսեց այս դաշնադրութիւնը շատ
զղջոցաւ իր ըսածին վրայ , բայց օգուտ չեղաւ ,
վասն զի այս դաշնադրութիւնը 'Վեմեար լսած
ժամանակը՝ խոստացաւ որ իւր արքունական
գանձէն Տաճարը շննուի , և քահանայներուն
ալ ռոճիկ կապուի , բայց Յովիսաթան յանձն չա-
ռաւ , որովհետեւ քաջ գիտէր 'Վեմեարի չարա-
մառ թիւնը : Եւ այս դաշնադրութիւնը առիթ
Եղաւ 'Վեմեարի և Վզեքսանդրի իրարու հետ
պատերազմելու , և պատերազմին մէջ 'Վեմեար
կրկին յազմուեցաւ : Եւ Յովիսաթան վերսաին
եկաւ Երաւաղէմի պարխապները ամրացոյց :
Եւ միջոցիս ալ չարախօսները գնացին Մատիո-
քայ միւս 'Վեմեարին , բայց այն ալ կրկին ան-
պամ Յովիսաթանը հաստատելով , քահանայա-
պէտութիւնը ու Հրէաստանի ընդհանուր իշ-
խանութիւնը անոր յանձնեց , (Ա. Վակ. Ճ. 31).
և Երաւաղէմին Վարւոց զօրքերը հանել որք

ւաւ, որպես զի միամիտ լինի Յովիաթան: Բայց
Յովիաթան երբ որ տեսաւ՝ որ Ասորւոց զօր-
քերը Երուսաղէմին գնացին, եկաւ վերատին
նուիրական տեղերը սրբեց և ամրացները հառ-
տատեց, սկսեց Հռովմայեցւոց հետ դաշնակցիլ,
որով Քիչ ժամանակ մը խաղաղութեան մէջ մը-
նացին:

Պիտի շնորհ շիշուաղէմ իւսուն - և շառվաեցի՞ւ իւ
աիրեն Պաղէստին - : Հերովուեւ Ա. Ասկաղոնցի .
Օհունդ Տեսուն Երոյ Յիսուսի Քրիստոսի :

33

Յովիաթանի մեռնելէն յեւաց քահանայա-
պետութեան ամժուը անոր եղքայրը Ծմաւնն
նուսաւ, և երբ այս ալ կոչունքի մը մէջ սպան-
նուեցաւ, աեղը անցաւ խոր որդին Յովիաննեւ ո
Հիւրիկանոս (3869): Երբ որ լսեց Անտիոքոս անոր
իշխանութիւնը՝ յարձակեցաւ վրան, և Հիւրիկ-
անոս Երուսաղէմ փախաւ, և սկսեցին խաղաղու-
թեան միջոցներ գանել, գաշինք գնելով Ասոր-
ւոց հետ աղատութեամբ իրենց օրէնքը կը սպա-
տէին, և բաց Երուսաղէմ՝ ընդհանուր Հրե-
աստանէն 500 քանիքար արծաթէ հարկ տալ խո-
տացան Ասորւոց ամեն տարի: Եւ այսպես մին-
չեւ 3938 ին վարուեցան. բայց մէջերնին գըժ-
առութիւն իցնալով, իրարու թակարդներ կը լս-
րէին, մանաւանդ քահանայապետութեան վոց.
և այս գժառութիւնները մանաւանդ երկու եղ-

բարց մէջն էին՝ այսինքն Հիւրկանոսի և Արխա-
տաբուղոսի, որոնք պատճառ եղան որ Պամպէոս
Հռովմայեցւոց զօրապետը եկաւ Երտւաղէմն
տռաւ, և երեք ամիս Տաճարը պաշարեց, և
մէծ կոտրած մը տալով պարիսպները քանդելով
զայն ալ առաւ. բայց Արբութիւն որբութեան-
ցին շմօտեցաւ և պատուեց ալ ընծաներով:
Մհա դարձեալ կորանցուց Երտւաղէմիւր պա-
րփակները և շքեղութիւնը:

39

Երտւաղէմ կարծես թէ գատապարտուած
էր ՚ի սկզբանէ անտի միշտ խռախտթեանց և
պատերազմներու: Վասն զի հաղիւ թէ Պամպէ-
տո առբը քաշեց Պաղեստինու երկրէն, Կնտիգո-
նոս ը. Հայոցմէ օգնութիւն առնելով (3964)
եկաւ Երտւաղէմն առաւ, և Հիւրկանոս և
Փասայէլ երկիւղով պաշարուած ձերբակալ ե-
ղան. և Կնտիգոնոս թագաւորը Հիւրկանոսին
ականջը կտրել առաւ, որպէս զի չկարողանայ
քահանայալետութեան պատուցին հանիիլ, և
հետերնին Հայաստան տարին. իսկ Փասայէլ
ինքընքը սպաննեց, որ այլոց ձեռօր չսպաննեւի:

40

Իսկ Հերովդէս Կակաղնացին, որ արդէն
Հրէից քաղաքական գործերուն մէջ մտնելով մէծ
դեր մը կը խաղար, այս շփաթութիւնները տես-
նալով, իւր տունը և Հիւրկանու տունը, և շատ
միամիտ ժողովուրդներ առնելով փախաւ Հռոմ

գնոց, և շատ սիրով ընդունուեցաւ Վնտոնի նոսէն, և Հոկտաւիանոսէն, և անոնցմէ շքով թագաւորութիւն ընդունեց, և նոցին ձեռընտուութեամբ, մանաւանդ վարձաւոր զօրքեր ժողվելով Հերովդէս Հրէաստան եկաւ, և շատ քաղաքներ առնելէն յետոյ, Երաւսաղէմն եկաւ պաշարեց երկար ժամանակ. և շատ պատերազմն եւ մեծամեծ կոստրածներէն յետոյ տիրեց քաղաքին, և Վնտիգնեան ալ չարաշար գլխատեց: Եւ յետ այսորիկ սկսաւ եղեւնագործութիւն ընել, և բոլորավին այլակրօն ըլլալով, Երաւսաղէմի մէջ սկսեց թէատրօն և ամփիթէատրօն շինել. և ձիարշաւի և դաղանամօրտութեան տեսարանները կը հանդիացունէր, և Վակաբայեցւոց ցեղն ալ բոլորավին ջնջեց: Աս և Հրէից աչքին հաճելի թուելու համար՝ սկըսաւ Տաճարն ալ նորոգել, որ 46 տարին հազիւլացաւ, թէպէտ և ինքը անոր աւարտումը չկտեսաւ, որովհետեւ որդնալից սատակեցաւ 4001 ին՝ եօթամասնամեայ հասակին մէջ, 37 տարի անորժանութեամբ թագաւորելով (Օգոստոս կոյսեր հրամանաւ ընդհանուր խորակէլի վրայ:

41

Այսի Հերովդէսի թագաւորութեան երեսունութեցերորդ տարին Վենարարն մեր Յիսուս Քրիստոս ծնաւ ի Վարիամայ Ա. կուսէն: Եւ նորին թագաւորութեան վերջին տարին Եր՝ որ Տելմէհէմի անմեղ մանեկանց արիւնը մանելով,

ամենն ալ կրտքեւ տուաւ , որպէս զի Յիսուսն
ալ անոնց մէջը դանաւելով սպաննուի , որ ինքը
իւր թագաւորութեան մնատիտպաաիր փառքը
չկորսունցընէ : Բայց Յիսուսը՝ հրեշտակին աղ-
դեցութեամբ Յավէփի և սուրբ կոյսն Արքամ՝
Ճշգիտոս փախուցին , մինչեւ ըստ Կէտա-
րանին՝ Յիսուսի ծննդեան առաջին տարին մե-
ռաւ Հերովդէս , և անոր տեղը Աքքեղայս յա-
ջորդելուն համար , Յիսուս վերսաին Գալիլեա
դարձուցին . ուր օր ըստ օրէ կ'աճէր և կը զօ-
րանայր : Պատմութեանն կարութել կրտպահանջէ որ
համառօտ տեսութիւն մ'ալ տամբ Յիսուսի
Վրիտասաի և իւր աշակերտացը վասյօք :

Քիսուսի Վրիտասաի սահնչելեաց և պարէնո-նեան վրայ
Համառօտ պէտութիւն : Աբգարու հասադալը : Առա-
ժելոյ նահապակութիւնը . (1 - 34) :

42

Յիսուս երկոտասանամեայ հասակին մէջ
իւր ծնողաց հետ կըտսաղէմ գալով , Տաճարին
մէջ քահանայապեաններուն հետք նատած սուրբ
գրոց վրայօք հետերնին կը խօսէր , մեկնութիւն
կուտար և զամենիքը կը զարմացընէր . բայց իւր
աստուածային քարոզութիւնները և հրաշքնե-
րը սկսաւ Վկրտութենէն ետքը : Տասնուերկիու
հոգի ընտրեց ժողավրդեան մէջէն և իրեն ու-
ռաքեալները անուանեց : Յետ անորիկ սկսեց
հրաշագործութիւնները ընեւ , ինչպէս Գալիլեայ

Հարսանեաց մեջ ջուրը գինիի վախարեց . կոյրերը լուսաւորեց , անդամալցները առաղջացաց , չորեքօրեաց մեռելը այսինքն՝ Վաղարը և միամօր որդին յարսց : Այս վերջին հրաշագործութեանս միջնցներն էր , որ Վրդար թագաւոր գիր գրեց Յիսուսի որ երթայ զինքը բը ժըշկէ իւր հիւանդութենէն : Իսկ անոր Յիսուսի աստուածութեանը հաւատալուն սրատձնան ու պարագաներն այսպէս կը պատմնի :

Վրդաստափ ծննդեան 24 թուականին Պարակաստան երթալով Վրդար՝ Պարսից թագաւորին որդւոցը մեջ խաղաղութիւն ըստ : Իսյց այս գործը Հռավմայեցւոց հակառակ թուեցաւ , և անսանկ կը կարծէին՝ որ Պարսից թագաւորութիւնը իրեն ձեռնառութեամբը Հռավմայեցւոց դէմ պիսի յարուցանէ , վասն որոյ Վրդար զինքը արդարացըներու համար այս անհիմն կարծիքէն՝ դեսպան խրկեց Վասինսա հաղարապետին որ Հռավմայեցւոց կողմանէ կարգուած էր Վիշագետաց վրայ . բայց երբ որ դեսպանները Յիսուսի հրաշագործութիւնները լսեցին , վրդադարձին Վրդարին սրատմեցին , և այն ալ լի յոսով գիր գրեց Յիսուսին որ երթայ զինքը բը ժըշկէ , ըստ խորենացւոյն : Իսյց Յիսուսի փրկարգործ չարչարանաց օրերը մօտ ըլլալով , թումաս առաքելոյն ձեռօք գիր գրեց , թէ իմ երկինք համբառնալէս յետոյ , աշակերտներէս մեկը պիսի գայ և զքեզ բժշկէ , ոչ միայն մարմնաւոր՝ այլ և հոգեւոր հիւանդութենէդ : Եւ այս գրին հետ նա և դաստառակի վրայ նկարուած

Յիսուսի պատկերն ալ տարին, որ աստուածային հրաշխոք ապեցաւ . և դեմի Տեսոն մերս համբարձման, սուրբ առաքեալին թագէսս դընաց Աշեսիա, և միլլանց զի՞քդար՝ բժշկելով ամեն հոգեւոր և մարմնաւոր հիւանդութիւններէն, և միլլանց յետոյ Յ տարի ապրելով մեռաւ խաղաղութեամբ ՚ի՞քիատա՝ անդրանիկ հաւատացեալ Վքդար թագաւորն Հայոց :

43

Իակ յԱրուսազէմ Յիսուսի կենարարին մերոյ ըրած սքանչելահրաշ գործերուն վրայ, շատ նախանձեցան Նրէայները, մանաւանդ քահանները, որոնք ճշմարտութեան անունով սոսութեան մէջ կը դեգէրէին, իրենց փառասիրութեանը ծառացելով. ուստի կ'ուղէին որ կերպիւ մը կորսնցունեն կամ մեռցունեն դՅիսուս, ինչպէս որ ըրին. վասն զի՞ Յուդոյ խելարիսվոացիի ձեռօք, որ իւր տասներկու առաքեալներէն մէկն էր՝ մատնուեցաւ. Աւ յետ այնորիկ Նրէայներէն չարչարուեցաւ, խաչուեցաւ, թաղուեցաւ, և իւր աստուածոցին ամենակարող զօրութեամբը յարեւաւ, և համբարձաւ յերկինս առ Հայր (34): Աւ յետ ութ աւուրեկաւ սուրբ Նորին առաքելոց վրայ իջաւ. լոցաց զանոնք գերբնական շնորհօք, որոնք սկըսեցին այլ և այլ լեզուաւ ճշմարտութիւնը քառ և ՚ի հաւատաս հրաւիրել զմարդիկ, և մը կըրսել զանոնք Հօր, Արդւոյ, և սուրբ Նորւոյն անուամբը : Աւ այս միջոցներս Տիրերիսս կը

տիրեր Հռովմայեցւոց կոստերական իշխանութեամբ , և Պաղեստինի Երկիրն ալ իւր իշխանութեան տակն էր :

Ա Ա

Այն կայսեր իշխանութեան ժամանակն էր՝ որ սուրբն Աստեփանոս արքաքը Արուսաղեմի Գելմաւմանի ձորին մշջ քարկոծեցաւ կամակցութեամբ փարիսեցի Պօղոսին , որ և յեաց առաքեալ եղաւ : Այն ժամանակէն սկսան առաքեալներն ալ ցրուիլ բոլոր Երկրիս Երեսը , դՔրիստոս Վաստած քարտղելու բոլոր արարածոց . և ըստ գուշակելոց Փրկչին ամենքն ալ մարտիրոսական մահուամբ պատկեցան , որոց կասարումն և աւզեղերը հսանշանակելու պատշաճ կը դատիմ ; Դանաօթութիւն փափաքող ընթերցալոց :

Սուրբ առաքեալն Յմագեսոս ըստ հրամանի Յիսուսի դնաց յԱշտեսիա՝ Արգար թագաւորը մկրտելու , որ և ըւտաւորեց զինքը , և նարին խցրաբար Վգդէն եպիսկոպոս ձեռնադրեց . յետոց դէպ ՚ի վերին Հայուսանն անցաւ , և շատերը դարձուց ՚ի ճշմարիս հաւասար ու մկրտեց . Զաքարիս անուն մէկն ալ անոնց վրայ Աշուակոս ձեռնադրեց : Եւ Արգարու քեռորդին Անատոլուկը և անոր Անդրուխոս դուստրը միկրտելով , անցաւ Վզուանից և Կապաղովիսայի կողմերը , ուր շատերը դարձուց ՚ի Քրիստոս . և կամեցաւ կրկին դաւնալ ՚ի Հայուսանն Անատոլուկի քով : Եւ Ոիլոգետաց սահմանները եկած ժամանակը Հռովմայեցւոց հինգ դեւ-

սպանները մկրտեց , որոնք Ասկեանիք կոչուեցան , և Յիառափի 107 թուականին նահատակուեցան : Եայց Ասնասորուկ յետոյ ուրանալով՝ Քրիստոսի ճշմարիտ հաւատոքը , սուրբ Յանդէոս առաքեալը և իւր Ասնդուխոտ գուստորը Շաւարշան . քաղաքին մէջ սովաննել առւառ . բայց շատերը անոնց նահատակութեան ժամանակ հրաշքներ տեսնալով հաւատացին ՚ի Քրիստոս , և նահատակեցան :

Պօղոս առաքեալը շատ քաղաքներ քարողեւին զինի , Վերոնի հալածման ժամանակ 68 թըւականին Հռովմքաղաքէն երեք մղնն հեռու : Ապօւեան ջուրին մօտ գլխատեցին : Եւ այս սրբազն առաքելոյս քարողած քաղաքները առներ են . նախ Կիլիկիա , Փոխագիա , Դաղատիա , Վակեդոնիա , Վիժէնք , ուր որ Կիտուսիս մէծ գիլխատիոյն դարձուց , Կորնմոս և Փիլիպոլէ :

Պետրոս առաքեալը քարողեց նախ Պինտացւոց , Կապադովիկացւոց , Եիւթանացւոց կողմերը , առաջին աթուը գրաւ Աննախոք , և վախտառն և եօթի թուականին՝ ըստ Տիեզերական պատմութեան Հռովմք գնաց , և Պօղոսի հետինները ամիս բանալը մնալով՝ յետոյ Տիերերեց գետոյն միւս կողմը , Հրէից բնակութեան սահմանները յանիկողեան բլուրին գլուխը գլխիվոյր խաչեցին . և այս միջոցիա Վարկս աւետարանից Վղէքսանդրիա քաղաքին առաջին եսլիակուպոսը րլալով , ուր որ աւետարանը գրեց , այն տեղիատարեցաւ :

Յովշաննէս աւետարանիչ փոքր Վոիոց մէջ

քարոզեց, ուր որ Աշխետափի եկեղեցին հիմնեցոց, և հարիւր տարաւան հասակին մէջ լի որդեամբք, յաւուր կիւրակեի իրեն կեանքը կատարեց, և իւր դարմանապանչ ննջման շատերը հիացան :

Ենդրեաս առաքեալ քարոզեց Վիխթացիներուն, Աթովագյներուն, Թրակացյներուն, և շատ հալածանիքներ կրելն զինի, իւր ճշմարիս վարդապետին նման զինքն ալ խաչեցին,

Փիլիպպոս առաքեալը Վիխթացւոց քարոզելն յետոյ, Փոխւգիս, Տրոտօլիս գնաց, և Տրայիանոսի կայսերութեան ժամանակ, ութ սունամեայ հասակին մէջ նահատակուեցաւ :

Թովմաս առաքեալը քարոզեց Խարաց, Պարսից, և Հնդիկներուն, ուր որ վկայական մահուամբ կատարեցաւ, և իւր սուրբ սկզբները Հայաստանի Ենձեւացեաց գաւառը բերին ամփափեցին :

Սուրբն Շարժուղիմեոս քարոզեց Վեծն Հայաստանի ժողովրդոց, Արկացոնացւոց, և Աստացւոց և ուրիշ գաւառներու . և այս սրբազնի առաքելցո մորթը՝ Աննատրուկ թագաւոր հանելավ խաչել տուաւ Եղբակ ըսուած գաւառը : Աւ սցս սրբազնի առաքեալն սուրբ Կուսի ննջման ժամանակ Արտապղէմ չգտնուելով, կը փափագէր նորին մարմնոյն տեսութեանը . բայց երբ սրբազնի առաքեալները Տերումօր սուրբ Կուսի տապանը բացին, որ սուրբ առաքեալը աւենիէ, և իւր փափագանոցը հասնի, մերափոխեալ աւեսան անոր սուրբ Վարդի-

նը . ուստի ՚ի միսիմժարութիւն Առաքելցն վըշտացեալ սրամին , ՚Կյուին կենդանագիր սրատկերը իրեն սուին : Եյտ այն սրատկերն էր , որ ըստ խնդրոց առաքելց՝ սուրբ Աստուածածին իւր գերամաքուր երեսին վրաց դնելով , և ազօթու սունելով անսնց ընծայեց , և ային : Տես Խորենացոյն թուղթն գրեալ առ Ասհակ Արծրունի : Քարթուղիմէոս առաքեալ առաւ Հայաստան սարաւ զայն , և անով շատ հրաշագործութիւններ ըրաւ . և Հոգւոց վանք ըստւած տեղը հրաշակաւոր կաւոանաց վանք մը շնորհով , նոյն սուրբ Պատկերը հոն դրաւ :

Ապրսաւոր ՚Եւի Արմեան , որ Անտմէսս սւետարանիցն է , Յիսուսի համբառնալէն ութ տարի ետքը Արտասաղէմացւոց խնդրանօք՝ նոյն սուրբ քաղաքին մէջը Աբրայեցւոց լեզուաւ Աւետարանը գրեց , և շատ ազգաց քարողեց , մինչեւ որ քարբարասաց երկիրները հասաւ , և այն տեղուանքը կասարաւեցաւ :

Կամանացի նախանձայոցն Շմաւոն , որ և Ախմոն , Ասիայի Վիջագետաց կողմերը քարողելով , ըստ եկեղեցական պատմութեան , և ըստ Վարք սրբոցի վկայութեան՝ Աշտունեաց կողմերը նահատակուեցաւ :

Յուղաց Օերեսար , որ և Թաղէոս , Արմիքաղաքը կատարեցաւ , ըստ Վարք սրբոցի :

Յակոբոս Արմեայ կոչեցեալն , որն որ Անտմէտաւ աւետարանի եղբայրն էր , Հրէից և հեթանոսաց քարողելէն յետոյ՝ Աստուոց երկրին մէջ կատարեցաւ :

Վաստամիան որ աստուածային աղդմամբը
մետասան առաքեալներէն Յուղայի աեղ լնտ-
րուեցաւ, շատ աեղեր քարոզելէն յետոց, վերը-
տին Նրէաստան դառնալով այն կողմերը կատա-
րեցաւ, լսու Տիեզերական սպասմութեան. իսկ
ըստ Վարք սրբոցի՝ Խմովպիոց մէջ կատարեցաւ :

Յակոբոս Օեքեդեան Յովհաննու եղբայրը
Պաղեստինու կողմերը Նրէից թելադրութեամբ
Ներովդէս չորրորդապետէն բռնուելով՝ Փիլիպ-
պետ Ավարիայի մէջ սրով նահատակեցաւ,
Յիսուսի 42 թուականին՝ որուն մարմինը հրա-
շեւք Ապանիա գնաց, և գլուխը Ճրուսաղէմ
քաղաքը Յիօն լերան վրայ՝ հրեշտակի ձեռօք
սուրբ Կյոս Վարիամ Կատուածածնի յանձնուե-
ցաւ, երբ նստած էր Յակոբ արդար առաքե-
լոյն տանը մէջ. և նոյն որասուական Գլուխը
այն աեղ ամփափեց Վարիամ Կատուածածին,
իւր ամենամաքուր ձեռօքը. ուր որ անշարժ կը
մնայ մինչեւ ցայսօր ժամանակ : Եւ այս սուրբ
տեղս Յակոբ արդար Կռաքելոյնը լինելով, այն
Արքազան տռաքեալն ալ, որ Ճրուսաղէմի առա-
ջին Պատրիարքն էր, այս տեղս թաղուեցաւ,
վասն որոյ սոյն աեղլոյս կը բառուի Վանք Արքոց
Յակովեանց : Իսկ Յակոբ սրբազն առաքեալն
որ սուրբ Ճրուսաղէմի առաջին Պատրիարքն էր,
ինչպէս ըստինք, միշտ ճշմարտութիւն քարոզելով՝
Նրէայները նախանձեցան, և Տաճարի աշտա-
րակէն վար ձգելով, և թափչաւ գլուխը ճրմ-
լելով նահատակեցին, և մարմինը իւր տանը մէջ
ըստ նախնի սովորութեան ամփափեցին . որոյ

վրայ այժմ եկեղեցւոյ աւագ խորանը կառուց
եալ է . և այս սուրբ տեղո՞ւ որ Ա անք Արքոց
Յակովիւնոց կ'ըստի , Հայոց ազգիս սեպհա-
կան ժառանգութիւնն է . ՚ի սկզբանն անտի , ո-
րուն փառաւորութիւնը ճշմարտասրատում ա-
կանատեսներուն առաւել արժանի կը համարիմ
պատմելու , քան թէ իմ անհեթեթեթ գրչիս . բայց
և այնպէս խր տեղը վաքը ՚ի շատէ կը ծանու-
ցանեմ ձեր կրօնատեր և ազգատեր լսելեաց :

Առ-ը Տեղեաց և վահօրէից շնորհիւնը . Հեղնէ լադո-
դի կիւ Աբգորու . (34—49 . իամ ըստ Հաս . թու . 46) :

45

Արքազան Վապերոց քարոզութիւնը խիստ
արդիւնաւոր եղաւ նորածին եկեղեցւոյն . վասն
զի շատերը հաւատացին ՚ի Քրիստոս և մեր
տեցան , և գիմեցին այս սուրբ Արկիրս , և տնօ-
րինական տեղերը սպայծառացուցանելով , երե-
ւելի մեծամեծ վանիքեր շննեցին և պաշտպանե-
ցին սուրբ Տեղերը . և ճշմարիտ հաւատքը օ-
րէ օր սպայծառացուցեալ հաւատացելոց թիւը
բաղմացուցին :

Խուրբ տեղեաց այցելութեան եկողներուն
մէջ առաջին կը համարուի Վագար թագաւո-
րին քարեպաշտ կինը Հեղինէ թագուհին , որ
խր էրկանը մեռնելէն յետոյ կռապաշտ տղա-
յէն զզաւելով , մանաւանդ լսելով թէ Արու-
ազէմ սաստիկ սով իրայ , իրեն սպարագ համա-

ըեց, և Հայոց խուրանն Արծրունի զօրավարը՝ որ
ժամանակաւ Ներսվդէսին հետ պատերազմե-
ցաւ, հետք առնելով Կղողիայ կոցսեր ժամա-
նակ (42 հաս. թուա.) Երուսաղէմ եկաւ, և շատ
գանձեր խրկելով՝ Եգիպտոսէն ու Կիոպրոսէն
ցորեն բերել տուաւ, քրիստոնէից և առհասա-
րակ ամենայն աղքատաց բաժնել տուաւ՝ մին-
չեւ որ սղութիւնը անցաւ : Եւ յետոյ սկսաւ հոգ
տանիլ և ձեռնարկութիւն ընել սուրբ Տեղեաց
շինութեանը, ինչպէս որ Կինարարին մերոյ Յի-
սուսի Վերեղմանին վրայ փոքր մասուռ մը շի-
նեց, եւս և մասուռ մը ձիթենեաց լեռը Յի-
սուսի ոտնատեղւոյն վրայ, որու նշանը քարի
վրայ մինչեւ ցացսօր յայտնի կ'երեւայ : Իսյ քար
մ'ալ Խօմերի տաճարին մէջ, զօր Տաճկաց շէ-
խը քրիստոնէից համբուրել կու տայ, որոյ հա-
մար կ'ըսուի թէ համբարձման ժամանակ կո-
խած քարին մէկ կտորն է :

Նեղինէ թագուհին Յեթլէհէմի մէջ ալ
Յիսուսի ծննդեան սուրբ Այրը քարասպատեց :
Եւ բաժակարբու սրբազնն Յակոբ առաքելոյն
գլխոյ ամիտիուած տեղն ալ որ Ոիօն լերան վը-
րան է, փոքրիկ կամար մը շինել տուաւ : Եւ
այս ամէն բարեսպաշտ գործքերը ութ տարուան
մէջ լրացունելէն յետոյ խաղաղութեամբ հան-
դեաւ ՚ի Քրիստոս (լու 46 հաս. թուակնին) ՚ի մէծ
կոկիծ երախտապարտ ժողովրդոց, որոնց այնչափ
բարերարած էր, և քաղաքին հիւսիսային կողմը,
նշանաւոր բլուրի մը վրայ թաղուեցաւ, որոյ
տեղը հիմայ յայտնի չէ :

Հըմեւ կողծանման մօքենաւը . և անոր նախագուշակ ստանչելունուրը . իւսով-իւնուս և պատաղանք Հըմեւ . (46-69) .

46

Այս միջոցներս կ'իշխէր Հռովմ 'Վերան կայսրը , որու ժամանակ երբ Յակոբ տեառնեղ բայրը նահատակեցաւ (62) , և իւր Շ մաւսն եղ բայրը տեղը յաջորդեց , Հըմեյները նախանձեւ լովքրիստոնէից բազմանալուն վրայ , մանաւանդ իրենց ընտիր ազգ ըլլալուն վրայ սպարծենալով՝ Հռովմացեցւոյ դէմ կը մաքառէին , և անսնց լուծը իրենց ծանր կու գար . և որովհետեւ իւրենց անօրէնութեանց թիւը լեցուած էր , ուստի և կործանումնին ալ մօտ էր : Եւ Վոտուած թոյլ կու տար դատաւորաց ձեռօք զանազան նեղութիւններ կրելու : Այն միջոցներուս (62 թուականին) Յետու անունով մէկը երեւնաւ լովքաճարի մէջ կ'աղաղակէր ու կ'ըսէր . “ Չայն բարբառոյ յարեւելից , ձսյն յարեւմտից , ձայն ՚ի չորից հողմոց , բարբառու ՚ի վերայ Երուսաղէմի և Յաճարի , և ՚ի վերայ արանց և կանանց , և ամենայն ժողովրդեանն ո : Եւ յետ այնորիկ լուսէպ տոէպ գիշեր և ցորեկ կը կանչէր . “ Ա այ , վայ , վայ Երուսաղէմի ո : Ուէպէտ այս ահռելի ձայներ դադարեցրնելու համար շատ կը ծեծէին զինքը , բայց երբէք շանտալէն յետոյ , եօմը տուրի ամէն տեղ նոյն զարհութեցուցիչ ձայնը կը կանչէր . և երբ որ բաղաքը թշնամիներէն սպասրուեցաւ , պարագաց վրայ շընելով՝ բարձր ձայնով մը վերջին անգամ սուսաց . “ Ա այ Յաճա-

բին, վայ քաղաքին, վայ ժողովրդեան . և յետոց
աւելցուց, վայ և ինձ ալ ո . և նոյն պահուն
քարբնկէց մեքենաներէն մեկը մեծ քար մը իրեն
զարնելով մեռցուց :

Դայց ասկէ ուրիշ նշաններ ալ երեւցաւ . 65
թուականին զատկի տօնին, կէս գիշերուան
մէջ յանկարծակի Տաճարին պղնձէ դուռը ինք-
նին բացուեցաւ . և օդը լուսաւորեցաւ, և նոյն
օդին մէջ արեւմտից կողմէն պատերազմի կառ-
քեր, և պատերազմող զօրքեր տեսնուեցան :
Եւ Պենտէկոստէի գիշերը քահանայները Տա-
ճարին մէջ աղմուկ մը և շփոթութիւն մը լսե-
լին զինի, ետեւէն զարհութելի ձայն մըն ալ լը-
սեցին թէ, “Գնամք աստի գնամք” :

47

Դայց սյս նշաններէն մէկն ալ Նրէից կարծ-
րացեալ սրտին՝ իրենց չարիքներէն ետ դառնա-
լու կակզութիւն մը չքերին : Ուստի չորս կող-
մէն թշնամիները բազմացան, և ապստամբնե-
րը եկան Երուառաղէմի վրայ պատերազմեցան,
և անոր մէջ գտնուած հռովմայեցի զօրքերը,
որք տակաւաթիւ քրիստոնէից հետ բնակած է-
ին Այրուսաղէմ, զանոնք մինչեւ երրորդ աշ-
տարակը փախուցին : Այս երրարդ աշտարակը
առաջին Ներուղիւսէն շինուած էր շատ ամրու-
թեամք . և քանի մը օր եաքը հռովմայեցիք շա-
բաթ օրը պարասպ գտնելով ապստամբներուն
մէծ ջարոդ մը տուին, և հեռացուցին Երուառ-
պէմէն . բայց ինչ օդուտ որ սյս միջոցներս Եւ-

սորուոց Կեսարիսո Գաղաքա կուսակալը 25000 զին-
ուորով խաղաց Հրեաստանի կողմերը, և շատ
քաղաքներ հիմն ՚ի վեր տապալելով Արուսա-
ղեմ հասաւ, և քաղաքի տուաջ մէկ մզնն հե-
ռաւորութեամբ բանակը զարնելով նստաւ :
Յէպէտ հռովմայեցւոց հետ միաբան գտնուող
Հրեաները այս բանակին վրայ յարձակելով մէծ
ջարդ մը տուին, բայց վերջը իրենք յաղթուե-
ցան, և Վարեստանի զօրքը Արուսաղեմը առ-
նելով Տաճարին ալ տիրեցին հինգ աւուր մէջ,
և շատ կոտորած ըրին : Յետ այսորիկ Հրեայք
և Քրիստոնեայք Արուսաղեմին խորտակեալ նա-
և մը դուրս ելելու պէս, այս կողմ այն կողմ
ցիր ու ցան կը փախչէին : Յէպէտ մնացեալ
Հրեաները վերստին քաջալելուելով յարձակե-
ցան թշնամեաց, վրայ և անոնցմէ քսան հաղաք
մարդ մեռցունելով փախուցին, բայց անօգուտ .
վասն զի իրենց մէջ մէծ խոռվութիւն կար, մա-
նաւանդ օրինաց նախանձաւորներուն կողմը
բռնացեր էր միւսներուն վրայ, և Աղիազարի մը
առաջնորդութեամբ Արաւսաղեմ մանելով Տա-
ճարը գրաւեցին, և շատ վասնգներ գործելէն
զինի՝ շրջակայ գաւառներէն Ադովմայեցիները
իրենց օգնութեան կանչելով, գիշեր մը քաղա-
քին գռները բացին, և յանկարծակի տասն և
երկու հաղար երեւելի անձինք սրով կոտորե-
ցին : Վյո մէծ կոտորածը տեսնելով, Հրեաց
շատերը Կեսարիա հռովմայեցւոց Վեսպասիա-
նոս զօրապետին դիմեցին, ամբատանութիւն
մասուցանելով նախանձաւորներուն վրայօք :

Ա էսպասիանոս կայուր կ'ընդուռելի ի-ը շօրտերեն . և
ի-ը որովհ Տիտոս շլուր-շլուր պաշտելով ի-առան-
-- Տաճարը իւ իւծանե . (69-70) :

48

Այս միջոցիս Երուսաղէմին դուքս աւազա-
կապետ մը Ախման անուն , քսան հազար զին-
ուորէ բաղկացեալ դունդ մը կազմեց , մանա-
ւանդ իւր կողմն ձգեց քսան և հինգ հազար
Եղովմայեցիները , որոնք պաշարեցին Երուսա-
ղէմ . և ոյն ժամանակը հարկ համարեցին Ախ-
մանն ալ իրեններավը ներս առնել , և անհնա-
րին խռախրաթիւն տիրեց Երուսաղէմին վրոյ .
և կուսակցութիւնը երեքի բաժնուելով՝ որոնք
իրարաւ արեան ծարաւի էին , խղճալի ժողովուր-
դը կը տառապեցրնէին : Իսայ Վ Եսպասիանոս
մեծագունդ զօրքավ Եղովմայեցւոց երկիրները
ասպատակելով առաջ կը խաղացր , և դեռ Երու-
սաղէմը չառած Վերոն կոյսրը աթոռէն ինկաւ :

Տան և ուժ ամսուան մէջ երեք կայսերք ի-
րարու ետեւէ նստելով՝ Հոռվմ սասաիկ խռո-
վութեան մէջ կը ծփար : Իսյն միջոցին (69) Վահոց
զօրքը Վ Եսպասիանոս կոյսր հրատարակեցին , զօր
ընդունելով գնաց ի Հոռվմ . Տիտոս որդին իւր
տեղը դնելով : Եւ իւր թագաւորութեան երկ-
րորդ տարին , որ եօթանասուն թուականին էր ,
չորս լշգէնն հռավմայեցի զօրք խրկեց Տիտոսին ,
որովք եկաւ՝ մանաւանդ Վսիացւոց ձեռնոու-
ութեամբը Երուսաղէմը պաշարեց , որ երեք
պարիսպ ունէր : Թէպէտ երեք անդամ հաշ-

տութիւնն առաջարկեց, բայց չհաճեցան Արու-
 սաղեմացիք. յետ այնորիկ սկսաւ Տիտոս սաս-
 տիկ քարբնիեց մեքենաներով զարնել քաղաքը,
 որ քառասուն օր տեւեց: Յէպէտ այս միջոց-
 ներս երեք կուսակցութեանց գլխաւորները քա-
 ղաքին մէջ մէկմէկ ամսուր տեղուանիք բռնած
 զիրար կը հալածէին, բայց երբոր հասարակաց
 թշնամին իրենց վրայ յարձակուած տեսան, այն
 ժամանակը միաբանեցան զանիկայ մերժելու,
 բայց չկարողացան դիմադրաւ լինել. վասն զի
 քառասնօրեայ սաստիկ յարձակումէ մը ևտքը
 թուլացան .քաղաքի սրաշապանալ զօրքերը և
 ընտկինները, վասն որոյ Հռովմացեցիք առաջին
 պարսպէն ներս մտան, և հինգ օրէն եւքը երկ-
 րորդ պարիսայն ալ կործանեցին. թէ եւ Տիտոս
 իրենց կենաց տղասութեանը համար հաշոտւ-
 թեան պատգամ խրկեց՝ իրենց ազգակից Յով
 սեպոսին ձեռօք, բայց երբոր անոր ալ մտիկ ըր-
 նելով զինքը նետով խոցեցին, քարկացաւ Տի-
 տոս ու .քաղաքի շրջասրատը պարսպաւ պաշտ-
 րեց, որպէս զի մէկը ելու մուտ ընէ: Յէտ այ-
 սորիկ մեծ սով մը տիրեց քաղաքին մէջ, այնպէս
 որ մինչեւ անգամ մեռելոց և սպանելոց դիա-
 կունքը սկան ուտել. կանանց կարգէն մէկը
 իւր վեցամսեայ մանուկը մօրթելով եփեց կե-
 րաւ: Այս սաստիկ սովոն ասենը ժանտամահն
 ու դարտի տան և վեց աւուր մէջ պարսպէն
 ի վար վեց հարիւր հազար մեռելոց դիակներ ձը-
 գեցին. ուստի Տիտոս ի գութ շարժեալ իւր
 պարսպին դուռը բանալով, շատերը վախան,

և ըստ Յովսեպոսի պատմութեան, Հարիս-ր
տասն և վեց հազար մեռելոց դիակներ գըռ-
նեն գուրս հանեցին. սմանք ալ չոռվմայեցւոց
քով փախչելով անձնաստուր կ'ըլլային, որոնց վը-
րոյ կատկած ընելով զօրականները, անոնց փո-
րերնին կը ճեղքէին և կրյած սոկները փարո-
ակիքներաւն մէջէն դուրս կը հանեին: Այս ա-
մենը կատարուելէն յետոյ, դարձեալ Տիտոս
վեհանձնութեամբ լուր տուաւ որ քաղաքը ե-
րեն յանձնեն. բայց Նրէայք քաղաքը չյանձնե-
լէն զատ՝ անոր խաղաղասէր սկւով ըրած այս
առաջարկութիւնն ալ կ'արհամարհէին, և կը
կարծէին թէ տկարանալու և յաղթուելու նր-
շն էին անոնք: Խակ հռովմայեցւոց զօրքը Նր-
էից այս մեծ յանդգնութեանը չկրնալով ժուժ-
կալել, ընդդէմ Տիտոսի հրամանին Տաճարին
պարիսպը խկոյն քանդեցին: Նրէայք այս ան-
ակնունելի գէալքը տեսած ժամանակնին թու-
լոցան, և հռովմայեցւոց զօրականները կրակ
ձգելով Տաճարը այրեցին, թէ եւ Տիտոս շատ
աղաջեց որ Տաճարը աղատեն, բայց անհնարին
եղաւ. միմիոյն քիչ մը եկեղեցական անօթներ
աղատեցան: Այսափով գոհ չեղան Տիտոսի
զօրքերը, այլ եւ սրով մաշեցին ծերերն ու երի-
տասարդները՝ առանց խորելու անոնց աստի-
ճանները, որոնցմէ շատերն ալ անոնց սուրէն
աղատելու համար հրոյ մէջ կը նետէին զիրենք,
և սմանք պարապէն գահավէժ կ'ըլլային: Բայց
յանդուգն խոռվիները, որք ընտանի թշնամի-
ներ էին աղգին, քաղաքին մէջ զիրոսր կը կոտ-


ըելն, և զգաստանելէն ի զատ վութացան ամշ
բանալ վերին քաղաքը՝ այն է Ախօնի մէջ, և իւ
թենց ազգականներէն ութ հազար հոգի մեռ-
ցընելով հոն ամրացան : Իսպա Աշուսաղէմ գե-
րեցաւ Հռովմայեցիներէն, և անթիւ անհամար
մարդկանց դիակներով լեցուեցաւ աւերակ
գարձած վողոցներն ու թաղերը :

49

Տիտոս Քրիստոսի Եօթանասուն թուոյն Ա-
րուսաղէմը հիմնայատակ ընելէն յետոյ յարձա-
կեցաւ Ախօնի վրայ, և անհնարին սպատերազմաւ
սեպտեմբերի ութին՝ սաստիկ կոտորածով մը
զայն ալ տռաւ : Քաղաքը մոտած ժամանակը, հիւ-
սցաւ անոր ամուր շինուածոց և անսպարտելի
սպարապաց վրայ, մանաւանդ երեք մեծամեծ
աշտարակներուն վրայ . և այս յաղթութենէն
ետքը Նրէից երիտասարդները գերի բռնելով՝
անոնց մէկ մասը Ճշգիպտոս խրկեց հոն բռնի
աշխատութեան մասնելով՝ հանդիսական խաղե-
րու միջ սպաննել տռաւաւ, և ամենափոքր տղայ-
քը գերի ծախեց . և ըստ Յովսեպոսի՝ մէկ միլիոն
մարդէն աւելի սոյն սպաշարման ժամանակ մե-
ռան այլ և այլ մահուամբ . խակ գերիներուն
թիւը՝ իննասուն և Եօթը հազարի կը համնէր :
Աւ այսպէս պատժեց Կովուած Տիտոսի ձեռօք
տիրասպան ազգը, և հարթ հաւատար ըրաւ տա-
ճարը քար քարի վրայ չմնալով՝ ինչպէս գուշա-
կեց Տէրն մեր : Յովսեպոս կը սպատմէ թէ այս
սպատերազմին մէջ Տաճարին այրած ժամանակը

ներսէն աղաղակ կը լուռէր , թէ “ Արթամք ,
ասկէ երթամք , և ալ չդառնամք ” :

Տիտոս Արուսաղէմը կործանելէն յետոյ գունդ
մը զօրք սպահապան ձգեց անոր աւերակներուն
վրայ , և խորանի եօթնաջահեան աշտանակը և
մեծագին անօթները՝ որոնք կրակէն աղատած
էին , և Տաճարի վարագոյրը , եւս և օրինաց գիր-
քը առաւ հետը Հռովմ տարաւ :



Հըլեայք նորէն իւ շատնան Արուսաղէմ մէջ , որոնք
Արքիանոս կայսեր յետօս իրին իւ յըսէին . Արուս-
աղէմ շնուռելով հերանոս և քրիստոնեայք իւ բնակին .
Ուրբ աեւէլը իւ տերու իւ պատի . (70—327) :

Յ Օ

Այսպէս Հրէից աղքը ցրուեցան և սկսան
աստանդականն թափառիլ բաւական ժամանակ :
Յետոյ յիշեցին իրենց սեպհական հայրենի ժա-
ռանդութիւնը , և զայն չկողանցունելու համար ,
յանձն առին Հռովմայեցւոց հնազանդիլ . և
եկան Արուսաղէմի աւերակները ըստ կարեաց
նորոգելով հոն բնակեցան . Աւ շատերը գետնի
տակ խորունկ այրեր փորելով անոնց մէջ կը բը-
նակէին . և այսպէս մինչեւ Տրայիանոսի կայսե-
րութեան ժամանակը քիչքիչ սկսան շատնալ-
Շայց այս միջոցներս՝ Բարկոքեբաս անունով
Հրէայ մի երեւնալով , զինքը Ուսիս կ'անուա-
ներ , և սպարզամիտ ժողովրդոց միտքը գողնալով՝
զանոնք վերատին ասլատամբեցոյց Հռովմայեց-

ւոյ դեմ, որոնք իրենց առջի խստութիւնը թողլ
լով՝ թոյլ տուած էին որ իրենց հայրենի օրինօք
վարուին, և տուրքի կողմէն համարեա թէ ա-
զատ էին, և հանգստութեան մէջ բնակած :

Իսց այս ապատամբութիւնը երկար չու-
եց, վասն զի 136 թուականին Տրայիանոս կայ-
սեր Եղբօրորդին Վշրիանոս կայսրը, շատ հե-
ծելազօրօք Արտսաղէմ գալով՝ ապատամբներէն
շատերը կուրեց, և մնացեալները ցիր ու ցան ը-
նելէն յետոյ՝ Տիտոսի աւերած քաղաքը վերըս-
տին շրջապատեց պարապու և շնութիւններ
շինեց, և Հրէայները խաղառ մերժելով՝ միայն
հեթանոսաց և քրիստոնէից թողուց որ հոն բը-
նակին, և Գողգոթայ լեռը որ քաղաքէն դուրս
էր, քաղաքին հետ խառնեց, և Արտսաղէմի ա-
նունը իւր մականուամբ Հեղիսյ անուանեց .
և Ասղամօնի տաճարի մնացեալ քարերը քանդե-
լէն յետոյ Յովսափաթու ձորը լեցնել տուաւ :

5 |

Վշրիանսափ քրիստոնէից Արտսաղէմայ մէջ
բնակեցրնելլ մարդասիրութեան համար չէր,
ոյլ առաւել թշնամութեամբ . վասն զի Հրէա-
ները խաղառ տարագիր ընելէն յետոյ, ձեռք
զարկաւ քրիստոնէից հաւատոքն ալ ջնջելու . բայց
երբ տեսաւ որ անանց ուրացութիւնը անհնա-
րին էր, ակառւ թամաւզայ արձանը Վշրիանսի
ծննդեան տեղը, և Վաղկան արձանն ալ Գող-
գոթայի վրայ . և Վիրոդիանէի արձանն ալ կեն-
տասու Վերեղմանին վրան կանգնել տալ, որ-

պես զի Ծխուսի փրկագործութեան յիշատակը
խախանուի :

Այս ժամանակներէն քրիստոնեայք հալածա-
նաց և նեղութեան մասնեցան , մինչեւ բարե-
պաշտ Կրտտանդխանոսի առենք . Կրուտաղէմ-
իւր քրիստոնեայ բնակիչներավը մնացին անշքու-
թեան մեջ և զուրկ սուրբ Տեղեաց շնորհքնե-
րէն՝ զորոնք թագուն կը պաշտէին : Եսց ինչ-
պէս ըսմիք՝ Կրտտանդխանոսի թագաւորութիւնը
վերջ տուաւ այս հալածանաց , և սկսաւ քրիս-
տոնէութիւնը բարձր ՚ի գլուխ պարծել :

Առ-ը աւեղեաց նորոգութիւնը :

Ճ 2

Կրեք հարիւր քտան և եօմը թուականին ,
իւր բարեպաշտուհի մայրը Նեղնեւ դշխայն Ե-
րուսաղէմ սուրբ Տեղեաց այցելութեան եկաւ ,
և Ծուդայի ձեռքալ Ծխուսի կենսատու Խացը
Գիւա խաչ ըստւած տեղէն մեծաւ աշխատու-
թեամբ հանել տուաւ , և մեռեալ պատանւոյն
կենսագործութեամբը միւս երկու աւաղակնե-
րուն խաչերէն որոշելով , մեծ փափաքանօք մեկ
մասը իւր բարեսէր Կայսր որդւոյն խրկեց , խկ
միւսը արծաթեաց տապանակի մը մեջ ամփափե-
լով՝ Կրուտաղէմ թողուց ՚ի միսիթարութիւն
քրիստոնէից : Եւ այս անդին գանձը գտնելէն
յետոյ սկսաւ անհետացեալ սուրբ Տեղերը
քննել և իմանալ , և Վարիանոս կայսրէն սուրբ

Տեղեաց վրայ դրած կուռքերը խորտակել տալվ, ձեռք զարկաւ հիմնարկութեան երկնանը ման սրբոց Յարութեան տաճարին, որ արդէն սրգւոյն հրամանաւը և Վակար հայրապետի ձեռք սկսած էր շինուիլ: Այլ և Յիսուսի օննդեան տեղւոյն և Համբարձման լեռան վրայ սրանչելի և փառաւոր եկեղեցիներ շինելէն յետոյ, խաղաղութեամբ և աստուածատուր սպարգեւներով իւր տեղը դարձաւ, և լի արդեամբ հանդեաւ ՚ի ՚Վրիսասս:

53

Այս միջոցներս քրիստոսական սիրով կապուեցան միմեանց հետ լուսաւորիչն Հայոց սուրբն Գրիգոր և Մըղեստրոս սուրբ հայրապետները, և բարեւպաշտ Կատանդիանոս և Տըրդատ թագաւորները, որոնց շահաւետ արդեամբը սպայծառացաւ եկեղեցին քրիստոնէից, և ընդարձակեցաւ քրիստոնէութեան ասպարեզը: Վասն զի սոյն համամիտ և միակամ՝ սուրբ Հայրապետները և թագաւորները իրենց բարձր հրամանաւը շինեցին և բարեկարգեցին հռչակաւոր եկեղեցիներ յԱշուսաղէմ անօրինական սուրբ Տեղեաց վրայ. և աշխարհիս չորս կողմեն քրիստոնէական կրօնից աղասութիւնը լսելով հաւատացեալք՝ սուրբ քաղաքը դիմեցին, և իւրաքանչիւր աղդ իւր սեպհական բնակութեան համար վանքեր և եկեղեցիներ շինեցին, և քրիստոսական հաւատոքը պաշտպանեցին: Եւս միջոցիս ըստ Ագաթանգեղոսի, Կիրակոսի

և Տաթեւացւոյն պատմութեանց, Աիօն լերան
վրայ եղած սրբոց Յակովը եանց վանքը, ուր
որ Վրդարու կինը բարեպաշտ Հեղինէն կա-
մար մը դարձուցած էր սուրբ Յակովայ պատ-
ուական գլխոյն վրայ, եւս և սուրբ Գողգոթան
և սուրբ Յովհաննաւ մատուռը Հայոց ժառան-
գութիւն ինկաւ : Եւ այսպէս եղբայրական սի-
րով վայելեցին սուրբ տեղեաց շնորհքը ամեն
քրիստոնեայ ազգ, որոնք ՚ինշան հաւասար ի-
րաւանց զոր ունեին սուրբ Տեղեաց վրայ, ե-
րեք ազգ՝ Հայք, Ղատինք և Յօյնք մէկ մէկ
կանթեղ կախեցին ամենասուրբ Գերեզմանին
վրայ յանուն ազգին իւրեանց : Յետ այսորիկ
սկսան մեր նախարարներն ալ առանձին վանքեր
շննել իրենց տահմին անունով՝ ըստ Հայաստա-
նի Հնախօսութեան (Երե 72), և ըստ Առվանդի
Կաղանկայտուացւոյ պատմութեան (Երե 100)
զանազան վանքեր շննեցինս ուրբ քաղաքին մէջն
ու բոլորափը եղած նշանաւոր տեղերը, որոց
վրայօք իրենց տեղը համառօտ պիտի պատմենք :

Երեսուն խաչի : Յուլիանոս իայսեր անիրաւ հրամանը :
Քրիստոնեութեան իրին ուսցաւածաւը. (37—363):

54

Քրիստոնեութիւնը երկրորդ անգամ նոր
սրայծառանալու սկսած ժամանակ, Աստուած
ու զեց նորագոյն նշաններով աւելի փառաւորել
զայն յաշ Հրեից և հեթանոսաց, ուստի 352

Թուականին Վիւրեղ հայրապետի ժամանակ ,
յսնկարծակի լուսեղէն խաչ մը երեւցաւ եր-
կընքի երեսը , որ Գողգոթայէն ցողանալով դէու
ի ձիթենեաց լերան վրայ տարածուեցաւ ու
մնաց երկար միջոց մը ցորեկ ատէն . որուն զար-
մանառանչ երեւումը ամենքը հիացոց և ապ-
շեցոց : Այս հրաշալի տեսիլը քրիստոնէլից հա-
ւասոց խորիսիը ամբացընելէն ի զատ՝ բազմա-
թիւ անձինք Քրիստոսի հաւատալով՝ Վիւրեղ
հայրապետի ձեռօք մլլրուեցան , որ նոյն մլլր-
ութեան աւազանը մինչեւ ցայսօր սրբոց Յա-
կովքեանց վանքը՝ Ա. Ստեփաննոս անուանեալ
եկեղեցւոյ որմոյն մէջը դրուած է արեւմտեան
կողմէն , և Վիւրեղ հայրապետի տօնախմբու-
թեան օրը սուրբ սբատարագ կը մատուցաւի
նոյն աւազանին վրան :

55

Երբոր սուրբ տեղերը երկու սրբազան Հայ-
րապետաները և երկու բարեպաշտ Յագաւոր-
ները սկսեր էին պայծառացընել , չարն սաստա-
նայ նոր փորձութիւն մը հանեց եկեղեցւոյ վր-
այ : ՅԵ թուականին ուրացողն Յուլիանոս թա-
գաւոր բնաշինջ ընել կ'ուղեր բոլոր քրիստոն-
եաները . սաստիկ հրամանաւ վերսափին կուռ-
քերը կանգնեցընել սուտաւ սուրբ Գերեզմա-
նին և արիւնամած Գողգոթայի վրայ . և Յէ
սուսի անսուտ վճիռը ոչինչ համարելով՝ զար
սուած էր Տաճարին համար , ըսելով՝ թէ քար
քարի վրայ չմնայ , զանիկայ սուտ հանելու հա-

մար հրաման ըրաւ Հրեից ազգին, որ Տիառ-
սին ձեռօք աւերեալ Տաճարը կրկին շինեն :
Իսյց վերնախնամ Տեսչութիւնը միշտ շարա-
խորհուրդ մարդկանց գործը կը խափանէ այլև
այլ պատճառներով . ինչպէս որ ոյս Տաճարին
շինութեան ալ արգելը եղաւ . հիմք փորած ժա-
մանակ կրակ ու բոց մը դուրս ցատկելով՝ հոն
աշխատող Հրեաները և Տաճարին համար սպառ-
բաստուած ամեն նիւթերը այրեց մոխիր դար-
ձոց , որով գործը խափանուեցաւ : Այս սպր-
մանէն միմիայն Տաճարի սպարապի մէկ անկիւնը
անվեաս մնաց , որ մինչեւ ցարդ կը տեսնուի
և Վելսվամ ըստած աղբիւրի կողմը կ'իյնաց հա-
րաւային կողմէն :

56

Յուլիանոս որ Պարսից դէմ պատերազմի
կ'երթար այն ժամանակ , շարաչար սատակեցաւ
Ճանապարհին , և տեղը յաջորդեց Յուլիանոս .
(363) որ ըստ Հկեղեցական պատմութեան քր-
դիաստնեաց էր կրօնքավ , և խիստ բարեսէր և
կրօնասէր . վասն որոց իրեն սրբազն սպարոք հա-
մարեց սուրբ Տեղերը մաքրել և սրբել , և ըս-
կիզք ըրաւ ամեն կուռքերը խարտակելու , կու-
տունները կործանելու , և անսնց տեղ եկեղեցի-
ները պայծառացունելու , մանաւանդ հրաման
ըրաւ որ սուրբ Տեղեաց կուռքերը բոլորովին
խարտակեն և անհետանան , և այն տեղերը պայ-
ծառանան քրիստոնէական հաւատով . և Վատու-
ծոյ սպաշտոնը անխափան կատարուի բոլոր իւր
իշխանութեան ներքեւ եղած երկիրները :

Պարուին կառաւուն շլաքուսալէմ . և սուրբ Խոաչը գերեւ
կը բանին . նորա վերաբարձը . (363 – 629) :

57

Այս աղետալի գեղքերը կրելէն յետոց , Երաւասաղէմ մինչեւ Փրկչի 614 թաւականին քարոզութեան մէջ էր . յետ այնորիկ յունիտ ամսոյն մէջ Պարսից Խասրով Եքուսւղ ըսուած թագաւորը՝ որ Հահվարապ , կտմ Իշազման ալ կ'անուանէր , իւր Եռազմայուղան Խուռէմը Յունաց Ներակլ կայսեր վրայ պատերազմի խրկեց , որ Երաւասաղէմ ալ գալով և անհնարին կոսորածններ տարով սուրբ քաղաքն առաւ , և յիտուն և եօթն հազար մարդ կոտորելէն զինի , երեսուն հազար մարդ , և փրկչական սուրբ Խաչը , և անոնց հետ Օպքարիա պատրիարքն գերի տարաւ Պարսկաստան . ուր սուրբ Խաչը Խասրով թագաւորին կռոց մեհեաներ գրուեցաւ , ՚ի նախատինս Ներակլ կայսեր . (Սէբէռ . Երեւ 156) :

Օպքարիա պատրիարքի բացակայութեան ժամանակ ըստ Եերէսոփի պատմութեան , Են գետոտոք փոխանորդ կարգեցին . որ շատ խնամք տարրաւ սուրբ տեղեաց նորոգման , և միսիթարական նամակ մ'ալ գրեց սրբազնն Կոմիտաս Խաթուղիկոսի Վաջմիածնայ , և պատասխանն ընկալաւ լի իմաստնական և միսիթարական բանեւք (անդ Երեւ 131) :

Օպքարիա պատրիարքը և կենսատու Խաչը երկար ժամանակ գերութեան մէջ չմնացին . որովհետեւ 629 թուականին Ներակլ կայսեր

ձեռնտու լինելով խուռեմայ խոսրով թագաւորի փեացին, սպաննել տուաւ այն ժամանակի Պարսից Արտաշլր թագաւորը . և անոր տեղը յաջորդեցաց զխուռէմ, որ ըստ խոստման իւրում տուրբ խաչը կրտանդնուալիս դարձուց մեծ սպատուով, և Ներակլ կայսր հետք առած հանդերձ ժողովրդեամբ և Պատրիարքաւ Արտասպէմ եկաւ . և կենաատու խաչը իւր տեղը դնելով Վերացման խաչի տօն կատարելը սահմաննել տուաւ, որ մինչեւ ցայսօր կը կատարէ անխափան տուրբ եկեղեցին :

58

Ասոր վրայ չորս տարիի չափ հազիւ անցեր էր, երբ Արտասաղէմ նոր փոփոխութիւն մը կրեց, և քրիստոնեութեան ազատութիւնը քիչ մը վետանգեցաւ : Արավիշեաեւ Արտասաղէմի սահմանները գտնուող Նրէից շատերը ապստամբած էին Ներակլ կայսրէն, ուստի 633 թուականին՝ չորս կողմէն մանաւանդ Ադեսիս քաղաքէն դիմեցին հագարացւոց Արդալայի սրդի Ահմէտին, որ գայ իրենց օգնութեան հանի, և ազատէ զիրենք Ներակլի իշխանութենէն : Աւ նա եկաւ բազմաթիւ զօրքով երեք անդամ սպատերազմեցաւ Ներակլի եղբայր Յմեսդոսի հետ և յաղթեց . և Յորդանան գետէն անցած ժամանակը Արտասաղէմի բնակիչ քրիստոնեայները երկիւզով սպաշարուած, կենաատու Ա. խաչը և եկեղեցական սպասները Կրտանդինուալիս առաքեցին՝ սպահովութեան համար :

Հայութացին կառավան զԵրուսաղեմը : Խօմէր Խոստ-
պապոյի հշիկը : Ու Յարութեան Տաճարի և ուղիւ-
սուրբ բեղեաց սպորագրութեանը . (633 - 972) :

59

Թէպէտ Վահմէտ իւր վերահաս մահուամբն
չկարողացաւ իւր բաղձանացը հասնիլ Երուսա-
ղէմի տիրելով, բայց իւր երկրորդ յաջորդը,
այսինքն Խօմէր Խատոսապ ամիրապէտը շատ զօր-
քով 637 թուականին շատ քաղաքներ առնելով,
Յունաց Ասֆրոնիսաի պատրիարքութեան ժա-
մանակը Երուսաղէմն ալ առաւ : Խւ այս Խօ-
մէր Խատոսապին համար կը պատմուի՝ թէ հան-
դիսաւոր օր մը Ասֆրոնիսաի հետ միատեղ սուրբ
Յարութեան երկնանման Տաճարը մտած ժա-
մանակ, անոր փառաւորութեանը շատ դովու-
թիւն տալէն զինի, ուղերէ որ իւր ազգն ալ այն-
ովէս փառաւոր Տաճար մը ունենայ, ուստի կ'ա-
ռաջարկէ Պատրիարքին որ յարմար տեղ մը ցու-
ցընէ իրեն . և նա կը տանի զինքը Ասղոմօնեան
Տաճարի տեղւոյն վրայ որ աղբիւս դարձած էր
կանգնեցունելով կ'ըսէ . Վհա յարմար տեղ այս
կրնայ ըլլալ . քանիզի Ասղոմօնին շինած հրաշ-
կերու Տաճարին տեղն է, զոր Տիտոսի ժամա-
նակէն մինչեւ ցարդ աւերակ մնացած է : Վմի-
րապէտը Պատրիարքէն շնորհակալ ըլլալով՝ ան-
միջաւովէս Տաճարին հիմք փորել կուտայ, և իւր
ազգին համար վայելուչ մկնիթ մը կը շնիէ : Ալ
պատմեն նաև թէ Խօմէր սուրբ Յարութեան
Տաճարին մէջ չէ ուղած բնաւ իւր կրօնիքին պա-

Հանջման համեմատ օրական աղօթքն ընել, որպէս զի հետագայ կրօնակիցք իւր աղօթքը պահառ ընելով՝ հրաշաւոր Տաճարը քրիստոնէից ձեռքէն չյափշտակեն : Եւս և դաշնց գիր ալ տուաւ Ասքրոնիտաին, ինչպէս և Հայոց առանձին Պատրիարքին ալ տուած էր, որ չըլայ թէ այն տեղը էլան կանչեն, այլ միշտ ապահով մը նայ քրիստոնէից ձեռքը :

Ասւրբ Յարութեան տաճարին նոյն ժամանակի ունեցած ձեւոյն և չէնքին, նոյնպէս ուրիշ սրբազն տեղեաց և եկեղեցեաց վրայ Վակուս Կաղանկայտուացին այսպէս տեղեկութիւն կուտայ :

“ Անձնաչափ կենարարին Վրիստախ լայնութիւն տապանափորած վիմին գիրկ և կէս հեռի են ՚ի միջի գմբէթին որբոյ կենարար Վերեզմանէն . և ՚ի վերայ եկեղեցւոյն, որ շինեալ է 100 կանգուն բարձրութիւնն և 100 կանգուն լսութիւնն՝ բօլոր յայս և յայն կողմն երկոտասան սիւնք ներբռոյ, և երկոտասան ՚ի վերայ վերնատանն . և յայն վերնատանն գեղարդն և ըստունգն և սկաւառակին Վրիստափ պատեալ ուրով : Իսկ եկեղեցին կաթուղիկէ, որ մասուռն անուանի, որ է Վիւտ Խաչի՝ 20 կանգուն հեռագոյն ՚ի Յարութենէն, 65 սիւն վեր և ՚ի ներբռոյ երկայնութեան : Իսկ սուրբ Վաղգոթայի եկեղեցին 40 քայլ հեռի է ՚ի Յարութենէն, որ Վագանյ գերեզմանն կոչք . և ՚ի վերայ սեղան խորհրդայ, յորում խաչեցաւ Քրիստոս ՚ի վիմին վերայ : Իսկ սուրբ Արօն եկե-

զեցին մով սապարիզաւ բացադայն է ՚ի Յա-
 րութենեն , 190 կանգուն ՚ի յերկայնն և 70 ՚ի
 լայնն , 80 օւրամբը կամարակապօք . և չէ վեր-
 նասինք , ոյլ թարբ կապեալ է փայտեայ , և
 պատկ փշոյն կայ ՚ի կախ գթարբէն , որ եղին
 Կենարարին ՚ի գլուխ : Եւ յաջմէ եկեղեցւոյն
 վերնատունն խորհրդոյ և փայտեայ գմբէթ , յո-
 րում նկարեալ է զընթրեացն խորհուրդ Փրկի-
 չին , յորում է սեղան խորհրդոյ , և պատարագ
 մատչի ՚ի վերնայարկին Վիօնի , և վերնատուն մի
 լինի : Եւ սուրբն Վիօնի ընդ աջմէ խորանն Պի-
 ղատոսի , որ Կապակաթա անուանի . և վեմն յո-
 րոյ ՚ի վերաց կայր Փրկիչն առաջի Պիղատոսի ,
 յոր սոխց տեղն երեւի ցարդ եւս , և աւա-
 զանն ներբոյ նորին , ուր զաշակերտացն լը-
 ւաց զատան . և յահեկէ Վիօնի բանոն , ուր
 զՔրիստոս արդելին . անդ սեղան է , և պատա-
 րագ մատչի : Եւ յայնմ սեղւոջ ուր զատրը Կու-
 սին գագաղն կալու Հրեայն արտաքոյ քազա-
 քին չուալ թաղել գմբէթ կապեալ ՚ի չորից
 սեանց , և սեանցն պղնձի խոչ զգեցուցեալ , որ
 են մարմարինք . և անտի ցվայր 250 քարեաց
 աստիճանիք մինչեւ ցուուրը գերեզման Կուսին
 որ ՚ի ձորն Վեթուեմանի . և անտի մինչեւ ՚ի
 լեռն ձիթենեաց ուստի վերացաւ Քրիստոս՝
 800 աստիճանիք : Իսկ ՚ի տեղւոջ Համբարձմանն
 ըստ Յարութեան եկեղեցւոյ ձեւոյ գեղեցկա-
 տես գմբէթաձեւ շնուռած 100 կանգուն յեր-
 կայնն , և 100 լայնն . անտի երեւի Յորդանսն
 գետ և Հովք լեռն և բաղում գաւառք : Իսկ

ՅԵԹՂԷՇԵՄ ՀԵռագոյն է ՚ի Յարտեթենէն 220
 հրասախ յարեւմտից կողմանէ : Չափ մեծու-
 թեան եկեղեցւոյն 200 կանգուն յերկայինու-
 թիւնն և 100 ՚ի լայնն , 90 սեպամբը մարմարիա-
 նովք , քարեաց կամարակապ . և ՚ի նման է կրկին
 այլն , զոր Աքրահամ գնեաց ՚ի կալուածս շիր-
 մացն : Եւ ՚ի ներքոյ բեմին սուրբ Այրն և ՎՃ-
 սուրն , ուր սեղան է և պատարագ մատչի : Եւ
 յաջմէ եկեղեցւոյն մատուռն , յորում մանկանցն
 սպանելցն ՚ի Ներովդէէ նշանակ սպահին : Եւ
 անտի յարեւմտից կուսէ ըստ Յորդանանու կող-
 մանէ Յ ասպարիզօք հեռի ՚ի ՅԵԹՂԷՇԵՄ՝ հո-
 վանացն , ուր (գոն) երկու եկեղեցի . Ե հրասախ
 հեռի է յլրուսաղէմէ յարեւելից կուսէ , ուր
 Փրկիչն մկրտեցաւ . յորում եկեղեցի սագաշէն
 խոշոնման յարմարեալ 80 կանգուն երկայն , և
 80 լայն , երեք սեղան խորհրդաց , և պատարագ
 մատչի . և լեառն ձիթենեաց յլրուսաղէմի յա-
 րեւելից կուսէ լինի » :

ՉԾՂԷՇԵ իայորը կառնու շլուսուշէ Հայ սօրոց օԳ-
 նութեամբ : Առա նախիլ աւ Աշու գրեալ . (972) :

60

Յլրուսաղէմ 335 տարիի չափարացւոց
 ձեռքը միաց մինչեւ 972 թուականին , յորում
 Յովհաննէս Չմջկիկ որ աղդաւ Հայ էր , Յունաց
 Ամիեվար կայսեր տեղ յաջորդելով ՚ի Կոստան-
 դինուազօլիս , և Աշու թագաւորէն շատ զօքը

առնելով՝ խաղաց Ասորեստոսնի կողմերը. և շատ քաղաքներ առնելէն եաբը՝ եկաւ սուրբ Երուսաղէմի ալ առաւ այլազգեաց ձեռքէն, և շատ քաջութիւններէն և յաղթութիւններէն զենի, Հայոց զօրքերը մեծամեծ պարգեւներով և շրնորհալի նամակաւ մը ետ խրկեց, և այս է նոյն նամակին համառօտութիւնը, զօր Ամբատ Վահրամի պատմութեանը մէջէն առնելով հսա կը նշանակեմք :

“ Աշոտայ արքայի Հայոց մեծայ՝ հոգեւոր որդւոյ խմոց ՚ի Տէր խնդալ :

“ Օանիցէ իմաստութիւն քո, թէ որչափ եղեւ սղորմութիւն Այտուծոյ ՚ի վերայ մեր, և ետ մեզ յաղթութիւն ՚ի վերայ թշնամեաց մերոց, զօրութեամք և սղորմութեամբն Աստուծոյ մաշեցաք զզօրս Տաճկաց ՚ի սուր սուսերի, և զմնացեալս հարկատու կացուցոք : Եւ յետ բազում յաղթութեան ելին առ մեզ Ախամբայէ և Աշրուտաղէմէ շատ աղաչեցին տալ մեզ հարկս, և առնուլ ՚ի մենջ զօրաւորս. և թափեցաք զսուրբ Գերեզմանն ՚ի ծառայութենէ Տաճկաց, և շահեցաք ՚ի Գաբաւոն զհողաթափին Վրիստոսի, և ՚ի Յերիտոն զպատկերն Վրիստոսի, զօր յետ ժամանակաց Հրեայք խաչեցին : Եւս և զհերս Յովհաննու Վկրտչի, և տանեմք աստուածապահ քալոքին մերոց Կաստանդինուպօլաց ՚ի սպահանութիւն և ՚ի սրաշտաբանութիւն : Եւ զայստիկ լուեալ Աշոտայ արքայի Հայոց, առաքեաց զբազում

եսլիսկոպոսա, և զՊանտաղեւմն ՚ի Պօլիս, և կատարեցին զմեծ հանգեստ՝ վասն սուրբ Պատկերի և հողաթափի Փրկչին, և հերացն Յովհաննու. և այլն ։

Հըստառը Յանիկեանց . յերոյ Ալելյուիւնց և Ուրբաժեաց յեւուշ կանցնի . Այն ժամանակի Եկեղեցոյ վէճակը Խաչակրաց Երիտեն Արքառութեանքին . (1011—1187)։

61

Դայց Արտասաղէմ երկար առեն չմնաց քրիստոնէից ձեռքը . վասն զի 1011 թուականին Հագիպտոսի Վասթիմեանց հարասութենէն Հարիմի Խալիֆէ Վանսուր՝ Արտասաղէմն առնելով, Ա. Յարութեան Տաճարը կործանել տուաւ՝ Յունաց ստութեանը չկրնալով հանգուրածել, որոնք կ'ըսէին թէ՛ Օտակի ճրագալցցի երեկոյին հրաշալի հուր կ'ելք սուրբ Կերեղմանէն։

Արեսուն և եօթն տարիի չափ աւեր մնաց սուրբ Կերեղմանը . մինչեւ Հարիմի որդին 'Դահիք յաջորդելով, խաղաղութիւն ըրաւ քրիստոնէից հետ, որոնց խնդրանոքը հրաման ալ շնորհեց որ սուրբ Կերեղմանի Տաճարը նորոգուի . Այս շնորհեան ծախսւց Դահիքի մամբ Վարիամ անուն՝ որ քրիստոնեաց էր, նմանասղէս և Յունաց Կատանդին Վանամախս կայսրը համագանակեցին . իսկ Արտասաղէմ 'Դահիքի մեռնելէն եաքը գարձեալ տառապանաց մէջ ինկաւ, Պաղեստինի երկրին իշխանութիւնը Վելսուկ-

եան և Արդոգեան և ուրիշ ցեղեր իրարու ձեռքէ յափշաակելով՝ քրիատոնելից խաղաղութիւնը կը վրդովիլը և եկեղեցին կ'անշբանացր : Վինչեւ որ անոնց բողոքները և վիշտերը Եւրոպացւոց ականջն հասնելով երեւելի իշխաններ , գուքսեր ու պարտներ սոք ելնելով և շատ ժողվուրդ հետերնին առած , որոնք խաչակիր կոչուեցան ուսերնուն վրայ խաչի նշան կը եւնուն համար , ու գիմեցին զէնիքով և մեծամեծ պատրաստութեամբ գէպ 'ի արեւելք 1099 թը ւականին , և շատ երեւելի քաղաքներ և աւաններ առնելով Արուսաղէմ եկան , և քառասուն օր պաշարելով զայն , առին Տաճկաց ձեռքէն : Այս միջոցին Երուսաղէմայ մէջ գտնուեցաւ մէծն Գրիգոր վկայատէրը՝ որ սուրբ Տեղեաց ուխտի եկած էր : Խակ խաչակիրը Երուսաղէմ քաղաքը առնելէն յետոյ Կոթիֆրատոսը թագաւոր կացուցին անոր վրան , և անոր յաջորդեցին իրարու ետեւ երկու Պաղոփին թագաւորները , Ֆուլգներ , երրորդ Պաղտինը , Ալմերիկը , չորրորդ Պաղտինը , Գուխտոն Լուսիննեանը . ու բնոնց գերեզմաններն ալ Ո . Յարութեան երկնանման Տաճարը մտած ժամանակ Պրիատոսի Ո . պատօնատեղւոյն գիմացը կ'իյնան , որ հիմոց Յունաց Տաճարի պատին տակն է :

Կոթիֆրատոս թագաւորին համար կը պատմուի՝ թէ բարեսիրտ լինելով շատ բարեկարգութիւններ ըրաւ , և յետոյ կանոնիկոսարան մը և անոր մերձ փառաւոր պալատ մը շինեց , ու բուն մէջ խաչակիր զօրքերը բնակեցոց : Այս

միջոցներս (1169) Նեթմոյ մայրը և 'Աերակսի
| ամբը բանացւայ Շահանդուխտ մայրը բաղում
մեծամեծ սրարդեւներավ ուխտի Եկան սրբազն
անօրինական Տեղեաց :

Առահապետին կ'առանու շիրուաղը : Առ-բբ Յակո-
բոյ Հանհը իրին Հայոց իւղարդեւէ . (1187-1266) :

62

Ութսուն և ութ տարիի չափ Խաչակրաց
ձեռքը մնաց Երուսաղէմ. յետոյ Եուտուֆ Վա-
լահատաին, որ Եգիպտոսի Վուլթանն էր, զօ-
րանալով և շատ քաջութիւններէն ու յաղթու-
թիւններէն ետքը Երուսաղէմ Եկաւ և Վափ-
նաց Գուխտոն վերջին թագաւորը և մեծամեծ
իշխանները բոնելավ՝ շատ նեղութիւններ տր-
ւաւ. վերջապէս տուգանքներ և գանձեր տո-
նելէն ետքը արձակեց, և ինքը տիրեց Երուսա-
ղէմին և անոր սահմաններուն (1187): Այս այն
Վալահատաինն է որ, ըստ Վարինոսի պատմու-
թեան սուրբ Յարութեան զանդակատունը
քանդելէն յետոյ, ամենափառաւոր Տաճարն
ալ ձեռք զարկաւ քանդելու . բայց ուրիշ տե-
րութիւններ միջնորդ լինելավ, Կաստանդինու-
պօլսոյ Վալաթիայի Վրապ Ճամփախն Յունաց թո-
գաւորին նորագել տուին, որպէս զի նոյն տան-
նափառաւոր սուրբ Յարութեան Տաճարը ը-
քանդէ :

63

Եւ ըստ սպատմութեան Հաննա վարդապետի, Արքահատութիւն Առաջանը նախանձեցաւ նաեւ Հայոց սեպհական վիճակին վրայ, այն է սուրբ Յակոբայ վանուց և եկեղեցւոյ, որ Տրդատայ և Կոստանդիանոսի ժամանակէն սկսեալ իրենց ձեռքն էր հաստատուն կերպով. և մինչեւ անգամ Խաչակրաց իշխանութիւնը չէր ուղած յափրշտակել: Իսպայ Արքահատութիւն անոր բարձրութեան և ընաշխարհիկ գեղեցկաշէն փառաւորութեան ցանկարով կը բաղձար իւրացուցանել, ուստի կ'ըսէ Հաննա սպատմիչը. “Արքոր Ագիպտոսի Առաջան Արքահատութիւն եկաւ լատինաց ձեռքէն այս սուրբ քաղաքս առաւ, մեր սուրբ Յակոբայ վանուց գեղեցկութեանը և բարձրութեանը զմայլելով՝ կ'ուզէր իւրացուցանել վայն, որ այն ժամանակը Հայոց ազգին լուսաւոր աչքը պիտի խաւարէր: Արքոր կը մըտաբերէր այս գործը կատարելու, մեր օրհնեալ ազգը արք և կանայք ծերք և տղայք, արտասուաթոր աչօք և կակծալի աղէտիւ, մորմաքեալ սրտիւ անոր նախարարներուն ոաքը իշնարով, մանաւանդ բարձրեալն Աստուած միջնորդ կը բռնէին, որ չղրկէ Հայոց ազգը իւր բնիկ հայրենի ժառանգութենէն: Արքոր լսեց Առաջանը մեր ազգին անմիտիթար աղքերը և արտասուաց հառաջանիքները, մանաւանդ բարձր ձոյնով բարձրելոյն Աստուածոյ մեծ անունը անոր լսելուացը կրկնուելով՝ ի գութ շարժեցաւ, բայց

ոչ բոլորովին շնորհեց : Այս, ըստու, պիտի տամ
ձեզի ձեր Վարեազուակն, այսինքն սուրբ Յա-
կոբը, բայց ոչ այժմ : Ահաւտափիկ կը հրամացեմ
որ անոր լուսամուտը՝ նոյնապէս դռւռները կըն-
քուին . և ներսը նշան մը կը գնեմ մինչեւ որ
Դամասկոսէն դառնամ . եթէ եկած ժամանակս
անոր մէջ դրած նշանս դտայ ինչպէս որ դրի,
այն ժամանակ ձեզ կը շնորհեմո : Ինչպէս որ
ըստու, այնպէս ալ կատարեց : Ա ասն զի աւագ-
խորանի կանթեղը վառ թող տալով առանց մէ-
կու մը գիտութեան, գնաց Դամասկոս : Իսկ
մէր եկեղեցականները անձարանալով՝ եկեղեց-
ւոյ դաւիթը պատէն քանի մը քար հանելով
մերձ եկեղեցւոյ դրան, պատուհանաձեւ փոքր
խորան մը շնորհին յանուն որբոյն Գեորգոյ ե-
րագահատ վիրային . և անոր առաջը կը կատարե-
ին ժամերգութեան պաշտօնը, և նոյն փոքրիկ
պատուհանին մէջ պատարագ կը մատուցանէին,
և զԱստուած կ'աղաքէին որ այցելութիւն ընէ-
իրենց կրոծ թշուառութեանցը : Եւ այս տա-
ժանելի նեղութեան և երկրպայութեան մէջ եօ-
թը տարի մնացին, մինչեւ որ վերսոյիշեալ Առ-
թանն եկաւ . որուն դիմուորելու գնացած ժա-
մանակ յիշեցուցին իրեն : Այն ժամանակը թո-
գաւորն խուռն բազմութեամբ գալով եկեղեց-
ւոյն դուռը բացաւ և դիմեց դէպ ՚ի աւագ-
սեղանը, և Վաստուծոյ շնորհօք և որբոց Յա-
կովեանց զօրութեամբ և միջնորդութեամբ .
իւր գաղտնի նշանակած կանթեղը տակաւին
վառ տեսնելով որուն շըջապատը տարդի տո-

տայիններ հիւսուած էին, յայսնապէս ըսաց, թէ
այս եկեղեցւոյ Հայոց ձեռքը մնալը առանց
Աստուծոյ կամացը չէ: Ուստի ես ալ բոլորու-
վին կը հաւանիմ և կը հաստատեմ՝ որ այս վանքս
Հայոցն է, և անոնց ձեռքը պիտի մնայ: Կա
և վանքի դրանը վրայ իրենց օրինաց համեմատ
արաբերէն լեզուաւ անէծք գրեց, որպէս զի
մեկը այս վանքս Հայոց ձեռքէն շհամարձակի
առնելու. և նոյն դիրք մինչեւ ցայսօր անեղ-
ծանելի կը մնայ:

| Եւան Հեթանութան և Հեթամ Բ յիշրուաղէմ իր-
գան. իրենց չինո-թի-ննելը. (1266—1301):

64

Հաղպար երկու հարիւր վախտունելելց թուա-
կանին, Հայոց առաջին Հեթում թագաւորի
արքայորդի | Եւոնը, որ գերի գնացած էր յիշ-
գիստաս, հրաման առնելով յիշգիստակէն կա-
պանօք յիշրուսաղէմ եկաւ սուրբ Տեղեաց
ուխտ և երկրագութիւն ընելու, և գարձաւ
իւր տեղը: Եւ 1269 թուականին գերութենէն
ազատելով | Վիլիկիա գնաց իւր վախճանեալ հօրը
տեղը թագաւորեց, և շատ բարեկարգութիւն-
ներէն զինի, սուրբ Յակոբայ վանաւց կից սուրբ
Հրեշտակապետի վանքին պարիսպը շինել ար-
ւաւ, և իւր թուրա որդին որ յիշրուսաղէմ
մեռած էր, ՚ի յիշատակ անոր՝ սուրբ Յակոբայ
վանքին մեջ սուրբ թուրա անունով առանձին

մատուռ մը շինել տուաւ , և հսն հիւսիսակողը
մը պատին մէջ ամփափուած է թորոսի մարմինը :
Այն եկեղեցւոյ մէջ երեք անդամ հանդիսաւոր
տօնախմբութեամբ պատարագ կը մատուցուի :
‘Եախ՝ մեծ պահոց մէջ առաջին շաբաթ օրը՝ թէ՛
սդորոսի զինաւորին տօնախմբութեան պատճա-
ռաւ : Երկրորդ՝ թագէսոսի առաքելոյն և Ասե-
դիսոյ կուսի տօնին : Երրորդ՝ Վերկեռխոսի զի-
նաւորի տօնին : Եվկեղեցիին աւագ խորանը կա-
ռուցեալ է յանուն որբոյն թէսդորոսի , և ձա-
խակողմը առանձին մատրանաձեւ սեղանը յա-
նուն Վերկեռխոսի , և աջակողմն ունի պահա-
րան մի և խորան յանուն որբոյն Կարապետի ,
և խորան մը ևս արտաքոյ մեծ դրան հարաւային
կողմը՝ յանուն թագէսոսի առաքելոյն և Ասե-
դիսոյ կուսին :

65

Իսկ սուրբ Հրեշտակապետի վանքը՝ որու-
սկարիսալը միայն շինել տուաւ կեւսն թագա-
ւորը , խիստ հին ժամանակէ ՚ի վեր շինուած էր ,
զոր ոմանք Հեղինէ դշխոյին , այսինքն Վրդարու-
թագաւորի տիկնոջ կընծայեն : Եւ ինչպէս որ
Հաննա վարդապետ կը պատմէ և ուրիշ օտա-
րազգի պատմիչք ալ կը վկայեն , այս վանքս Վե-
նայ քահանասապետի տունն էր , ուր որ կե-
նարարն մեր Յիսուս մատնութեան գիշերը
քաղաքին ազբիւսաց դռնէն բերելով , դատա-
ւորի դիմացն հանեցին՝ մահուան և անիրա-
վճիւր կտրեցին : Այս վանուցս մէջ ձիթենի

ծառ մը կրայ, որուն կապեցին գչիտուս, և 'ի յիշատակ այս տակալի և ահեղ շարչարանաց մեծ թագուհին եկեղեցի շինել տուաւ, գեղեցիկ ձեւով ու քարաշէն, մէջ տեղը բարձր և երկու կողմերը ցած, և երեք խորանաւ նուիրեալ յանուն սրբոց Հրեշտակապետացն Վարքիելի և Վիքայելի: Եւ հիւսիտացին արեւմտեան անկիւնիլ պղղափիկ մատուռ մը կազմուած է, որ է Վրիտանի տուածին բանոր, և կից է սուրբ ծառոյն. խակ եկեղեցին չորս քառանկիւնի սիւներու վրայ կառուցեալ է: Հարաւային կողմը աւանդատուն մը կրայ, զոր Հայոց՝ Ածառ թուականին Վրիտոր շղթայակիր սուրբ հայրապեան մեծացոց, և Հռոմանիմէ սուրբ Կուսին անունով գեղեցիկ սեղան մը շինեց, որ և սուրբ կուսին գագաթէն մաս մ'ալ նոյն սեղանին տակը ամփոփեց: Եւ այս սուրբ հայրապետը սուրբ Հրեշտակապետի վանքն ալ սպիտակացուցանելով՝ համարեա թէ նոյն վանքը վերատին նորոգեց, և շատ պատկերներ նկարել տուաւ, որով եկեղեցին առաւել պայծառացաւ 'ի պարծանս աղքիս Հայոց: Յիշեալ վանուց մէջ կը բնակին մինչեւ ցարդ յաշխարհէ հրաժարուած պառաւունք, կամ կոյս մարտապետները, որոնք իրենց հոգեւուահիկ կերակուրը սուրբ Յակոբէն կ'ընդունին: Եւ քաղաքի Հայ ժողովաւրդները բաց 'ի հանդիտաւոր օրերէն, այս եկեղեցիս կուգան աղօթքի և ժամերդութեան. և երկու դուռ ունի, մէկը կը բացուի Ա. Յակոբայ վանքին մէջ Շեմարանի կողմէն, խակ միւսը Հայոց ժաղին մէջ:

66

Հայոց Երկրորդ Հեթում թագաւորը կ-
դիսպասի սուլթանը յաղթելէն զինի, մեծ փա-
ռօք և հանդիսավ սուրբ Կրուսաղէմ ուխտի ե-
կաւ, ուր տան և վեց օր մնաց և դարձաւ ՚ի
Ավելիիս : Հին յիշատակարսնաց մէջ գրուած
կը գտնեմք սցապէս . “ Երկրորդ Հեթում ար-
քայն Հայոց, յերկրորդ թագաւորութեան իւ-
րում, ողորմութեամբն Վատուծոյ զինի յաղ-
թութեան սուլթանին Կոդիսպացւոց, եկն ՚ի
սուրբ Քաղաքս յուխտ և Երկրպագութիւն
տնօրինական սուրբ Տեղեսց, և յետ ՚ի սակաւ
աւուր բաղտւմ շինութեան, կառաց հրաշա-
ւոր սեղան մի ՚ի սուրբ Վատուածածնաց սրբոց
Գերեզմանի յորմն յարեւմտակողմ ՚ի յիշատակ
ազգիս Հայոց, և ՚ի հաստատութեան իւրոյ
մ. ճազօր թագաւորութեան : Յամի Տեառն,
1301, յուլիս 13 ” :

Կաեւ կը պատմուի՛ թէ սց բարեպաշտ
թագաւորը շատ վանաբայք շինել տուած է, և
իւր բարեպաշտ իշխաններն ալ Կրուսաղէմ
Հայոց ազգիս շատ բարի յիշատակներ ձգած
են . ՚իշխաւոր է Ա. Յարութեան Երկնանման
Տաճարին մէջ սուրբ Գերեզմանին արեւմտեան
կողմը և կից անոր՝ հրեշտակի վէմին վրայ սե-
ղան մը շինելը , որուն վրայ սցմմ փաքք մառուռ
մը կոյ և խպանները կը պատարագեն :


ԵՇԻԿ ԿՐՈՒ ԱՆ-ԼՂԱՆԻՆ ԽՐԱՅՆ ՊՐԵՄԻՆԵԼԻ ԽՐԱԾ
ԱՐԱՐԱՏԻ ԱՐԱՐԱՏ ՀԱՅԱՍՏԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ ԱՐԱՐԱՏ . (1301 - 1369) :

67

Այս միջոցիս երեւելի գեղքեր սպասահած
կը գտնեմք : 1365 թաւականին Պետրոս Վիպրո-
սի թագաւորը տանել հազար զօրքը Վղեքանդ-
րից վեց յարձակելով կը տիրէ , և իւր անկիրթ
և ընչափաղ զօրքը քաղաքը կողականելով և Ե-
գիստասի Առւլժանեն վախնալով՝ կ'այրեն Վղեք-
անդրիան՝ շատ մարդիկ ու աղջկունք գերի տա-
նելով : Այս յանդուգն գործքը աւելի վիսասա-
կար եղաւ քրիստոնելից . վասն զի Շէխվեխս
Առւլժանը զայրացած շատ զօրքով եկաւ բոլոր
Պաղեստինի տիրեց . ուստի քրիստոնեայք շատ
նեղութեան ու չարչարանաց մատնուեցան չորս
տարի , և շատ եկեղեցեաց և մանաւանդ սուրբ
Յարութեան դուռը որմավ փակեցին , ու ինչ
պէս կը գրէ յիշատակարան մի , “ Վմեն քրիստո-
նելից ընչից չօրսէն մեկն առին , և շատ մարդիկ
դարձուցին և շատերն ալ սպաննեցին . և զմեզ
ամենքս շատ զնտան դնելով՝ աղգի աղգի նե-
ղութեամբ չօրս տարի սպահեցին . երկու տար-
պայ (երկու անգամ) ՚ի ՚ աղէ տարան . զինչ ե-
րեց , աբեղայ և եպիսկոպոս կայց , և երկու ման-
կագոյն աբեղայ Վրիգոր և Վիրակոս այնչափ չա-
րացար հարին , մինչեւ ՚ի մարմնացն կաշին ան-
կաւ , որով մարտիրոսացան վասն Վրիստասի . և
զՎիսիթար ու էյիան և մի միայնակեց մէջնէ
տարան ՚ի Վըսքը և սպանին . և տէր Վկրտիչ

Արուստղեմայ Ասլիակոպոսն բռնեցին, և բազում խստմամբ և ազգի ազգի կապահօք և տաննջանիօք չարչարեցին վասն հաւատոյն, և համը բերեաց վասն Քրիստոսի, և յաղթեաց նոցա Քրիստոսիւ, որ տայ համբերութիւնս սիրողսոց իւրոց : Եյսոյ նեղութիւնս զիմ աւետարանն ՚ի Գողգոթայ մնաց և չկարացի հանել, և բազում նեղութեամբ վշտացաւ հոգի իմ, և հատաւ ակնեկալութիւնն առ ՚ի բաց տեսանել զՅարութեան դուռն և զաւետարանն : Յայնժամ զմոտաւ ածի թէ զաւետարանն գողացան, և ես անցիշատակ մնացի . թող տարեգիր ճաշոց մի գրեմ թէ ասպրիմ, և տայ Քրիստոս վիսաղազութիւնն և տեսնուլ առյ ինձ ՚ի մարմնաւոր պէտս ՚ի կարիս խարճեմ : Աղորմածն Աստուած, որ զամէն բարի խնդիրը կու կատարէ, տեսնուլ ետ մեզ յետ չըրա տարւոյ հէնց ուրախութիւն՝ զր սյլ չեաք տեսեւալ, և զաւետարանն գտայ, բոկ խացն և զկոճակն, կոստեղն քակեւալ էին, և ուրախացայ ՚ի փառս Քրիստոսի . և վասն առաջի ուխտին որ գրեցի զսա սուրբ Գողգոթայիս, ոչ կարացի ուխտազանց լինել, այլ ետու զսա Քրիստոսի ըստ այնմ զքոյս ՚ի քոյս քեզ ընծայեմբ յամենայնի կարող Տէր . . . :

“ՊՃԸ յուլիս ամսոյ ժէ, գրեալ ՚ի Արդան վարդապետէ Շաբերդցի, ՚ի գեղջէ Արմենու” :



(Օմանցիւ կը տիրեն Երուսաղէմ . պարսպին նորդու-
թիւնը . անոր բաներն ու բերել . (1369—1613) :

68

Այս գեղքէս իբր հինգ կամ վեց տարի
ետքը (1375) Ախլիկիոց վերջին թագաւորը | Եւ-
սն | ուսմնեան , որ իւր Վարիամ թագուհին
և Փեննա օրիորդ աղջկանը հետ գերի վա-
րեցան Եղիպատափի բռնակալէն 'ի Գահիրէ քա-
ղաքը , եօթը տարիին ետքը ողորմութեամբն
Կատուծոյ գերութենէն ազատելով , սուրբ Եր-
րուսաղէմ տնօրինական սուրբ Տեղեաց ուխտի
եկան 'ի շնորհագալութիւն իւրեանց ազատու-
թեանը : Հայց Վարիամ թագուհին և իւր աղ-
ջկը Փեննա մինչեւ ցմահ Երուսաղէմ մնա-
ցին . իսկ արքայն | Եւսն օգնականութիւն գլու-
նելու համար՝ Հռովմ , Ապանիտ , Ենդղիա , ու
Գաղղիա պարտած ժամանակ վաթմամեայ հա-
սակին մշջ 'ի Փարիզ հիւանդանալով վախճանե-
ցաւ , գերութենէ ազատուելէն 11 տարի ետ-
քը : Իսկ Վարիամ և Փեննա դուստրը 1408 թը-
ւականին իսաղաղութեամբ հանգեան 'ի Վրիա-
տոս , և թաղեցան 'ի գաւթի վանուցն սրբոց
Յակովեանց , 'ի ներքոյ սեան՝ հանդէպ սուրբ
Գէորգայ խորանին :

Այս միջոցներս Երուսաղէմ Եղիպատացւոց
իշխանութեան տակն էր , որոնք Եսուսուֆ Աս-
լահատափինէն սկսեալ մինչեւ 1516 թուականին
տիրեցին Երուսաղէմի : Ենտ այնորիկ (Օմաննց-
ւոց Առլթան Աէլիմը զօրանալով յաղթեց Ե-

գիտացւոց տէրութեան, և անոնց ձեռքէն առնելով Արտօսաղէմը (1517) շատ բարեկարգութիւններ ըրաւ : Իւր մահուանէն եաբը Ախլէյման իւր որդին յաջորդեց թագաւորական իշխանութեան, որ Արտօսաղէմի պարիսպները շինեց (1538), ինչպէս որ մինչեւ ցայսօր դեռ կեցած են . որուն շընազատը հինգ մղանէ, և երկու փարք ու չորս մեծ դռներ ունի :

Վռաջին դուռն է արեւելից կաղմը, որուն ԲԵՆԻԱՄԲԻՆԻ դուռ ալ կ'ըսուի, և Արաբացիք Պաղլւադան կը կոչեն . այսինքն՝ 'Դուռ ցեղից . իսկ մեք Աստուածածնայ դուռ կ'ըսեմք երկու պատճառի համար, նախ որ այս դռնէն դուրս ելլելով տուրք Աստուածածնայ գերեզմանը կ'երթամք, երկրորդ՝ Աստուածածնայ ծնողաց Յուվակիմայ և Աննայի տունը համարեա թէ պարսապին կից է : Այս դռնէն ելլելով քարլնելէց մի դէպ ՚ի հարաւակողմը՝ Պղծրմնութեան դուռըսուածն է :

Արկլորդ դուռն է հիւսիսային կողմը, որ Դամասկոսի դուռ կը կոչուի, և այլազգիները Պաղլւանուա, այսինքն՝ 'Դուռ սեան կ'անուաննեն, վասն զի այն սիւնը՝ որուն վրայ Յիառուսի մահուան վճիռը կարեցին, մերձ է այս դրան ներսի կողմէն, և քաղաքի աւագ դուռն ալ այս է :

Արրորդ դուռը արեւմտեան կողմն է, որ Հայր Արքահամու դուռ կը կոչուի . ինչպէս և այլազգիք Պաղլւանու կ'անուաննեն, որ կը նրանակէ 'Դուռ բարեկամին Աստուածոյ . և այս դուռոս բերդին մօտ է, ու տէրունական ուխ-

տաւորները այս դռնէն ներս կը մտնեն Յոսկ-
պէէն գալով, վասն որոց և առ հասարակ Յոսկ-
պէի դուռ կ'անուանի :

Չորրորդ դուռը հարաւային կողմն է, ո-
րուն այլազգիները Պաղլւ Տառապ կըսեն Այ-
օնի մօտ ըլլալուն համար. խել մեք Փրկչայ դուռ
կը կոչեմք, վասն զի Փրկչայ վանքը մօտ է այս
դրան։ Խել երկու փոքր դռներուն մեկը դարձ-
եալ հարաւային կողմն է, վերսիշեալ դռնէն
դէպ ՚ի արեւելք դիմելով, որուն ՚Իտու աղ-
բիւսաց կըսուի. երբ անօրէն Հրեայք կենա-
րարն մեր Քրիստոս բռնեցին, անարդութեան
համար այս դռնէն ներս մոցուցին, և Վնիա-
քահանայապետին տունը բերին։ Խել միւս
դուռը ՚Իամասկոսի դրան հիւսիսակողմն է,
որուն ՚ատինները Հերովդէսի դուռ կը կոչեն,
և հիմայ քարով հիւսուած է :

՚ըսւասղէմ միմիսյն բերդ մը ունի Աիօն
Երան վրայ արեւմտեան կողմէն ամրաշէն և
սրբատաշ մեծամեծ քարամք շինուած, որուն
մէջ երկու մեծամեծ բուրդեր կան և ամրա-
շէն սենեակներ, նաեւ այլազգեաց աղօթաւ-
նոց մը։ ՚ըսուի թէ՝ ՚Իաւիթ մարդարէի պա-
ւառն էր այս բերդս, ուստի արեւելեան կողմի
մէծ բուրդին մէջ պատուհան մը կայ, ուր որ
՚ի պատիւ մարդարէին մշտավառ կանթեղ կը
վառեն Վահմէտականք, որպէս թէ այն պատու-
հանին մէջ նատած տասնազի քնարը կը զարնէր
հանդերձ սաղմոսերդութեամք։ Վայ բերդիս
քրջապատը խրամներ ունի կրկին պարսպու :

ԳՐԻԴԱՐ Պարոնակեր : Եղվաշտը Կաթողիկոս , և իւր
ինքանիլ . (1613—1666) :

69

Հագարացիք Երտւասաղէմի ափառապետելինեն
եռքը՝ 1613 թուականին Վրիգոր Պարոնակեր կո-
չեցեալ , Պատրիարք նստաւ սրբոց Հակոբեանց
Աթոռը : Ասիկայ շինեց սուրբ Յանեգեան վան-
քը , որ մեծագոյն մասամբ քայքայուած էր . ան-
կէ ի զատ նորոգեց նաև սուրբ Փրկիլը , սուրբ
Յամշաննէսի մատուռը . սուրբ Յակուլեոնի
վերնատունը մեծացաց , և սուրբ Յակոբոց վա-
նուց մէջ շատ թաղէր և շինութիւններ աւել-
ցուց : Այս հայրապետիս ժամանակ մեծ շփո-
թութիւն եղաւ Յունաց և Հայոց մէջ ծր-
ռազատկի պատճառաւ , և շատ դրամներ վատ-
նուեցան , վասն սրբ սուրբ Յակոբոց վանիքը
սլարդի տակ մնաց :

70

Վրիգոր Պարոնակերին յաջորդեց Աստուա-
ծատուր Գրու ժամանակ (1651 թուականին) ,
սուրբ Խջմիածնաց Փիլիպպոս Կաթուղիկոսը Ա-
յրտւասաղէմուխտի գալով , սուրբ Յակոբոց ե-
կեղեցւոյ յատակը գոյնզբէցն քարերով զարդա-
րել տուաւ , և աւագ սեղանը բարձրացոց :
1663 թուականին Կիլիկիոց Խաչատուր Կաթու-
ղիկոսը դարձեալ Աստուածատուր Պատրիարքի
ժամանակը սուրբ Երտւասաղէմուխտի եկաւ . և
այս միջոցներու Աթաղցի Եղվաշտը եպիսկոպո-
սի ձեռք սուրբ Յակոբոց վանուց Խջմիածնի

Եկեղեցին շինուեցաւ . նոյնալես աբեղացից թաղը և պէտեր ըսուած թաղը , և Ուամիայու առը Վէորդայ վանքը նորոգուեցաւ :

7 |

Վատուածառուր Պատրիարքի օրով Եղիսաբար Եսպիակոս հոգաբարձու և փախանորդ ընտրուելով առը Յակոբայ Վթուայն՝ Եկաւ Երուսաղէմ , և սպարագերուն թեթեւութեանը շատ օգնեց . սակայն իւր փառասիրութեամբը ուզեց Վատուածառոյ կենդանութեան առը Վթուայն տիրել և բոլոր (Օմաննեան հողը գըտնուած Նայոց վրայ Կաթուղիկոս հաստատուիլ : Վյո խորհուրդը ի գործ դնելու համար Քերիա գնաց , և Ավլիկիայ Խաչատուր Կաթուղիկոսէն , սրոց հետ կանխաւ խորհրդակցեր էր , Կաթուղիկոս ձեռնոադրուեցաւ և Եկաւ Երուսաղէմ . բայց Վատուածառուր Պատրիարքը զինքը մերժելով՝ այլ և այլ քաղաքներ տարագիր սկսաւ շնչել : Վյո միջոցներս Յոյնք կաշառօք կը յափրշտակեն Նապէշից ձեռքէն Նայր Վբրահամու վանքը , և Նայոց ձեռքէն սուրբ Յակոբայ վանքը և խզճալի միաբանները Դշտուն ըստած տեղը կը դնեն բնակելու , և մեծ դրանէն ել և մնաւ ընել չեն թողուր անոնց : Բայց արդարադանն Վատուած յիշեալ Եղիսաբար վարդապէտին ձեռօք 1659 թուականին կրկին Նայոց դարձուց Խաչվերացի միջոցները : Տես ասոր լիակատար սպատմութիւնը ։ Չամչեանի Գ . հատոր , Երես 687 :

Եղիազարի Կաթողիկոս օծուելուն խնդիրը
մեծ յուղմունիք հանեց ազգին մէջ, և երկարա-
ռակութիւններ ծնաւ. որուն հետ սկսաւ հա-
կառակիլ նաեւ սուրբ Ավմիածնի Յակոբ Կա-
թուղիկոսը, որ մինչեւ անդամ այս գործիքա-
համար Պօլիս և Երուսաղէմ եկաւ: Եղիազար
Կաթուղիկոս արքունի հրամանաւ և հրովար-
տակաւ Պատրիարք կարգուեցաւ սուրբ Երու-
սաղէմի, և 1666 թուականին՝ Յիսուսի ծննդ-
եան տօնին մեծ հանդիսիւ սրբալոյս Վիւունի
օրհնութեան խորհուրդը կատարեց, և Կա-
տանդինուպօլիս և ուրիշ զանազան քաղաքներ
օրհնութեան նամակներ խրկեց, որուն օրինա-
կը այս տեղու կը դնեմք ՚ի ծանօթութիւն ար-
դյ ընթերցողաց :

“ Կապատիւ. և աստուածամեծար, հրաշո-
սպարոց և սրանչելապայծառ, գերահռչակ և վե-
հափառ, աստուածակախ և լուսապատար սուրբ
քաղաքն Երուսաղէմ, և ամենայն սուրբ և աս-
տուածահռտ տնօրինականիքն Վրիստոսի Վասու-
ծոյ մերոյ: Կախ՝ սուրբ Վաղարէթն, ուր Վաբրի-
էլ հրեշտակապետն զաւետիան ետ սրբոյ կուսին
Վարիամնւ, ուր և յղացաւ զբանն Վատուած:
Վերապատիւ սուրբ Վարն՝ որ ՚ի քաղաքն Բէթ-
էհէմ, ուր ծնաւ Կմիանուէլն Փրկիչ: Վատ-
ուածընկալ սուրբ Վատրն, ուր ընծայեցաւ Յի-
սուս: Վեղաքաւիչ սուրբ Յորդանան, ուր մը-
կրաեցաւ Փրկիչն մեր Յիսուս: Վարձրաբերձ

սուրբ լեառն թափօր, ուր պայծառակերպեցաւ Տէրն մեր Վրիսառա : Կախապատռեալ խորհրդական վերնաստոնն՝ որ ՚ի սուրբ լեառն Ախօն, ուր լուաց զոտո աշակերտացն Վրիսառա . և Հոգին սուրբ Կստուած էջ անդ, և լոյց զանազան շնորհօք սուրբ զառաքեալն : Ասրափելի սուրբ Գողգոթան, ուր զենաւ անմահ գառն Կստուծոյ : Աենաստու սուրբ Գերեզմանն, ուր եղաւ աստուածացեալ մարմինն : Փառաւոր տաճար սուրբ Յարտոթեանն, որ պատուելին է ամենայն աղդաց քրիստոնէից : Աղենաքատակ սուրբ լեառն Զիթենեաց, ուստի համբարձաւ Տէրն մեր Վրիսառա : Ամենօրհնեալ սուրբ Գերեզմանն, ուր եղաւ մաքուր մարմին սուրբ կուսին Վարիամու Կստուածածնին : Կափարիչ վեմի դրան սրբոյ Գերեզմանի Տեառն մերս, որ կայ ՚ի սուրբ Փրկչաց վանսն : Արավելապար եկեղեցի սրբոց Հրեշտակապետացն, ուր բանդարգելաւ Տէրն մեր Վրիսառա : Առաքելաշնորհ տաճարա սուրբ Յակոբ, որ է Աթոռ Եղբօր տեառն Յակոբայ : Եւ աստուածարեալ դամբարան արեամբ մածեալ Գլուադրի սրբոյն Յակոբայ մեծի առաքելոյն որդւոյն Օքքեղեայ, որ կայ ՚ի սմա : Եւ այլ միեղեն օրհնեալ տնօրինականացն Վրիսառաի Կստուծոյ մերս՝ ծառաց և սպասաւոր Եղիազար կաթողիկոս ամենայն Հայոց, և պատրիարք սրբոյ Եղտուաղէմի : Յորմէ ժամանեալ հասցէ աղօմք սուռքելական, և օրհնեութիւն աստուածացին ՚ի տիրաշէն և Վրիսառասահմամ մայրաքաղաքն Կոս-

տանդինուապօլս, ՚ի վերայ ամենայն քրիստոնէից Հայկագնոյ . մանուաւանդ ՚ի վերայ հարազատ և հոգեւոր սերտ սիրով կապակցեալ որդեկի մերում Տէր Յովհաննէս արք Եպիսկոպոսին . և ըստ կարգի քահանայից և ըստ պատուայ իշխանաց և իշխանապետաց, և Դոլֆաթմաւորացն . և առաւել եւս ՚ի վերայ հաւատարիմ վերիլաց և մուերիմ գողծակալաց սրբոյ Երուսաղէմի երկուասան թուով ընտրեալ մեծտրանաց, և նոցին հետեւեալ համակամ և միախորհուրդ սիրելեաց մերոց՝ ՚ի Տէր խնդալ, ամեն:

“Ե՞ն օրհնութիւն աստուածային և խնամք ամենակալ Երարչին, որ էջն և հանգեւաւ ՚ի վերայ սրբոյ Երուսաղէմի, և լոյց զնոսա եօթնազան շնորհիւ, իջեւ և հանգիցէ ՚ի վերայ տանց և բնակութեանց ձերոց : Ե՞լ և սուրբ Կաղաքեթիւն՝ որ ծաղիկ թարգմանի, ծաղկեալ լիջիք գուք հոգւով և մարմնով ամենայն բարեմասնական առաքինութեամբ : Եւ սուրբ Օնքնդեամբն՝ ծնեալ լիջիք վերատին ՚ի յոյն կենդանի : Եւ անբանից սուրբ Անրուին՝ ՚ի սեղան Հօրին երկնաւորի բազմեսջիք : Եւ սուրբ Յորդանանաւն՝ լուացեալ լիջիք յամենայն աղոսյ մեղաց : Եւ սուրբ Յաափօրական լերամբն՝ բարձրասջիք յիմանասի լեառն վերին : Եւ սուրբ Վերնատամբն՝ որ ՚ի սուրբ Վիօն, վերին Վիօնի և Երուսաղէմի ժառանգորդ լիջիք յաւիտեան, ամեն :

“Իսկ ՚ի տօնի հրաշափառ ծննդեան և աստուածայայնութեանն Քրիստոսի Եստուծոյ մերոյ զնորհաբաշխութիւն սրբալոյս Անունին,

զոր վութացաք կատարել աստանօր, ոչ այլ ինչ
իրաց կարծեաց վասն, այլ միայն թէ վասն հրա-
շալի խորհրդաց : Վասնզի ձիթենի ծառն այն՝ յու-
րում պրկեալ ձաղկեցաւ Տէրն մեր Վրիատոս ՚ի
սուրբ Հրեշտակապետի վասնն, ոչ ոք լուաւ
և ոչ ոք ետես յօրէն Կատուածայացանութեան
Տեառն մերոց մինչեւ ցայսօր, եթէ հանեալ ե-
ղեւ ՚ի պտղայն ձէթ իւղոց, սակա նուազութեան
պտղոց ծառոյն : Խակ յայսմ ամի՞ այնքան արդիւ-
նացեալ շնորհիւ Տեառն՝ մինչ զի ձգեալ ձէթն
ոչ միայն ՚ի նիւթ սրբարոց Ուեռոնի բաւակա-
նացաւ, այլ և ՚ի խնդրոց լատինացն Հռոմայ
պապին շնորհ առաքեցաւ . և բազում եւս քան
զայնս ՚ի տեղւոջ իւրում պահեալ կայ : Որոց
շնորհացն և օրհնութեանցն զձեզ ամենեսեանսն
եւս մասնակից արասցէ Վրիատոս Կատուած մեր
ծնողովք և համայն ննջեցելովք ձերովք, ամեն :

“Վրեցաւ օրհնութեան գիրս ՚ի սուրբ Արու-
սաղէմ, ՚ի թուին Հայոց Աճք. ՚ի յունվար 23” :

Եղանակ ընդհանուր Արուսաղէմի Հընդրէ Ո. Եղի-
ածնի : (Օրինակ Հրամիւաց իւնտակին ու իւլիւցին ա-
նա Թագավոր Եղիածնի . (1681) :

73

Արկար միջոց Արուսաղէմի Պատրիարքու-
թեան վրայ թէ Կատուածատրոց և թէ խրիմե-
ցի Ուարտիրս վարդապետի հետ վիճելէն և ի-
րարու ձեռքէ իշխանութիւնը խլելէն ու շատ

ծախսեր ընելէն յետոյ, վերջապէս Յակոբ Կա
թուղիկսի վախճանելովը խաղաղեցաւ երկու
աթոռն ալ. վասն զի Աջմիածնայ միաբանու-
թիւնը հրաւիրանաց գիր գրելով Այրուսաղէմ
Աղիաղարին, 'ի Վայր Աթոռն հրաւիրեցին զին-
քը իւր հոգեւոր հովուական իշխանութիւ-
նը վարելու ընդհանուր աղդին վրայ. և նոյն
հրաւիրանաց թղթին օրինակը ահաւասիկ հոս
մէջ կը բերեմք 'ի ծանօթութիւն ընթերցովաց :

“ Աստուածապետականին բանական անդաս-
տանաց՝ քրտնաշան մշակիդ Արդւոյ միածնի Յի-
սուսի քրիստոսի անձառ արեամք գնելոցս, բիւ-
րեղափայլ պսակիդ՝ Հոգւոյն ճշմարտի նմին փա-
ռակցի վերատին լուսաւորելոցս՝ արթնական գի-
տողիդ և սրբոյ Արրորդութեանն հաստցին հա-
մայնից, կանխագոյն ընտրեալ հոգեւոր Հով-
ուիդ, ազնուագութ սրբոյ Հօրդ տարակուո-
ւեալ որդեացս, և բարձրափայլ Գլխոյդ մեր վր-
հատելոց՝ սրբազն Կաթուղիկսի Տ. Աղիաղա-
րու, առաթուր անկեալ և յերկիր մածեալ,
տրտմագին դիմօք և վշատեալ սրտիւք, կակա-
նաբարձ ձայնիւք և արտասուաթոր աչօք, Պա-
տիւք Տեառնդ փարելով և զերկնացու գարշա-
պարդ սրբոյ Հօրդ համբուրելով, ՊԲրիստոսա-
կիր անձնդ ողջունեմք 'ի Տէր :

“ Վիանգամայն ամենայն արեւելականացս
Հայկական Եկեղեցեաց, Եպիսկոպոսք, վարդա-
պետք, քահանաց, վանականք, անապատականք
և ամենայն ժողովրդականք հաւատացեալք 'ի
Քրիստոս :

“ Օ այս ինչ իրազեկութեան քումդ վեհիւ
մաստ խոհեմութեան յոցտ առնեմք , զի ըստ
հասարակայն կարգի և ըստ վերնական ահեղաւ
գոյն հրամանի , բարձրագահ որբաղան Հայրն
մեր Յակոբ Կամուղիկաս հոգեւոր Տէրն՝ որու
կասեալ ՚ի մէնջ յաւելաւ առ հարս իւր , որ
պէս յացտ է Վէհիդ մեր , և եթող մեղ անհը-
նարին տղետ տարակուտանաց . ուստի և մշգ
մթնապատ և խաւար թանձրամած , զըմբաղ
անհնարին և յուսահասութիւնս բնաւին զե-
տեղեալ զմեօք՝ մերձ են լքանել : Խակ մեր մոտա-
բերեալ զբանն ՚Իսւթեան , որ թէպէտ ոչ կա-
րէր միսիթմարել . յիշեցաք զԱստուած և ուրախ
եղաք , և գոհութիւնս բազումս զնմանեւ մա-
տուցաք . այլ և այսուիկ յԱստուած ցնծացաք ,
հոգի առեալ կենդանացաք , զարթուցեալք ՚ի
քնոյ՝ զՏէր օգնական գասաք , և ճշմարտապէս
ծանուցեալ զՏէառնէ գոհացաք . քանզի խը-
րատեաց և ՚ի մահ ոչ մատնեաց . վասն զի զայն
թէպէտ ՚ի մէնջ էառ , այլ ստիսն զԱհիդ յա-
ռաջագոյն խակ ՚ի նոյն ընտրեաց : Եւ արդ՝ ո-
րովհետեւ դու Հայր մեր՝ ով Հայր պատուա-
կան , որովհետեւ Կաստուած զայս տնօրինեաց ,
վասն որոյ առաջի Տէառնդ անկեալ աղաջեմք
կողկողագին դիմօք և մեծաւ յուսով . հովուեա-
զմեղ յանդաստանի կամաց քոյ , և առ ջուրս
խմասութեան քո սնո՞ զմեղ . յաղթերաց ասու-
ուածատուր վտակացգ արբո՞ զմեղ . քանզի զա-
մենոյն ինչ զոր արաք Կաստուած՝ բարի է , բայց
՚ի ժամանակի խրում . ահա ժամ և ժամանակ

և օր նմին . ուստի համառօտարար ասեմք . ու
 հա մարմին և ոսկերք քո եմք = | Եթզե-
 հեմ թագնաբար օծաւ Դաւիթ արքայն , սա-
 կայն Աստուած ՚ի թագաւորութիւն բոլորից
 աղանց էած զնա . որ զայն ինչ ՚ի հինան յօրին
 եաց , նոյնպէս և Աստուած զլեհդ ՚ի սոյն յար-
 դարեալ անօրինեաց սցժմ . զերկունս սրբոյն
 Գրիգորի Հօրն մերոյ Աստաւորչին՝ առ քեզ
 բարեխօս արկանելով աղաչեմք . զի սուրբ Աթո-
 ռքս և զաւեզի նորին նորոգել հայցեմք . և թէ-
 պէտ մեղանս ինչ ՚ի ժամանակի առ քեզ յայտ-
 նեալ երեւեցան , ըստ անսառակին և մեք առ
 քեզ գոչեմք . մեղաք յերկինս և առաջի քոյ .
 վստ սրոյ և Տէրդ գթացեալ թողցես մեզ , նը-
 մանելով Տէառնդ քում բարւոյ և ճշմարտի :
 “ Դարձեալ աղաչեմք ՚ի սուրբ Հօրէդ , զի
 մի ընդ վայր հարցես զմեզ . այլ խոնարհեալ
 յաղաչանս ծառայից քոց , եկեալ դիցես զսուրբ
 գարշասկարդ քո ՚ի վերոյ մեր գլաց , պահելով
 ՚ի խաղաղութեան զսուրբ Աթոռս զայս . և մա-
 նաւանդ զերկուս զսուրբ Աթոռս , սրբ են ա-
 պաւէնք մեր : Ուկապէտ յանդգնութիւն իմն ե-
 րեւի ասելն մեր , այլ ճշմարտութիւն հաւա-
 տարիմ ծառայիցդ յայտնեալ երեւի մեր . որ
 պէս արար զերկուսեանն մի , և զմիջնորմն ցան-
 կացն քակեաց . և որ կայրն մեզ հակառակ , զայն
 ՚ի միջոց եբարձ , և արար խաղաղութիւնն ար-
 եամք իւրով . ըստ նմին ուարասի և զայս ամե-
 նայն զքեզ ասի : Խակ արդ՝ զի՞նչ արդեօք ար-
 դել լիցի նմանել մեծի Տէառն՝ ծառայիդ մե-

ծի : Արդ ժամ է խորտակման աղքիս Հայոց ,
և խանգարումն և լուծումն քրիստոնէական
կորդիս յարկածից և ՚ի թունից մահաբեր օձին ,
զար ՚ի ձեռն արբանեկաց նորին յերկուս առւրը
Աթուս յեզյեղեալ նիւթեցան . ոչ ոք կարտղ
է զայս ՚ի բարին և ՚ի կեանս փախարկել , եթէ ոչ
Վեհդ պատուական . քանզի և զանուն Տեառնդ
զայն յայտնաբանէ : Վան որոյ և մեք յուսաց
եալք , և երդուեալ ՚ի յլ պատուած Հայր , և ՚ի
հեղումն արեան Ծիառւսի Քրիստոսի . և յօծու
թիւն ամենասուրը Հոգւոյն ճշմարտի , խո
նարհեալ համբուրեմք զաւրը գարշապարդ , և
հայցեմք զի խոնարհեսցիս առ մեզ՝ տիրելով
մեզ բարձր հրամանաւ և Կաթուղիկոսական իշ
խանութեամք , զի վերատին նորոգեսցես և հաս
տատեսցես զլ թուս և զկարգո , և մեք լիցուք
հպատակ ծառոյ սրբազնն Վեհիդ մինչեւ ՚ի
մահ յամենայն իրա . որ ոք անօրինեալ ստուն
գանեսցէ հրամանաց Վեհիդ և ուրացեալ զայս
պատանդակերպ կտակս , նղովս յլ պատուծոյ և յա
մենայն հայրապետաց սրբոց ընկտղի , և անլու
ծանելի բանադրանս և կապանս յերկինս և յերկ
ի սուրբ Հօրէդ ընկտղի : Օ զյս ինչ աղա
շանս մեք , և գթութիւն սուրբ Հօրդ հասա
րակաց . աղաչեմք , աղաչեմք , դարձեալ աղաչեմք ,
գթա ՚ի մեզ վասն Քրիստոսի Ապատուծոյ մերոյ .

“ Վշ լիցի ՚ի գլուխն Քրիստոս , Պլուխդ
մեք յամենայն ժամ : Խակ մեք ստորագրեալք
ծառայք Քրիստոսի և Տեառնդ Հոգւով և մարմ
նով յօժար ՚եմք վերոգրելոց և մահու չափ

Հնագանդ, և անդրդուելի ուխտադրութիւնս
հաստատեմք, եպիսկոպոսունք, վարդապետք,
քահանայք, ապրկաւագունք, դպիրք, իշխանք,
և առ հասարակ ժողովուրդք, վանահարք և ա-
նապատաւորք, եւայլն :

“Գրեցաւ աղերանաց գիրս ՚ի սուրբ Աստ-
վածուս Կամբածին, ՚ի թուխն Հայոց Ռձէ. ՚ի
Յուլիաի 21” :

Գրեժոր Հայոցակիր և իւր շնորհար Գործերը : Օրինակ
երիս կոնդակաց ըստ Ժաշվիլի և Կարապետ Կա-
նու-Ղվիս իրիշին իրեւան . (1713 – 1749) :

74

Խնչու Գրիգոր Պարոնտեր երեւելի հան-
դիսացաւ իւր աթոռաշէն գործքերովը, նոյն
պէս և անկէ աւելի նշանաւոր եղաւ ազգին մէջ
իւր անուանակիցը Գրիգոր Հայրապետ Վմբո-
լու վանքի առաջնորդը : Իրեն համշիրակին եր
նոյն վանուց միաբան Յամիշաննէս վարդապետը
Կոլոտ մականուանեալ, որ նուիրակութեամք
Պօլիս երթալով և ազգին երեւելի Վմիրայք
տեսնելով իւր ազգասիրութիւնը և բարեպաշտ
ոգին, խորհուրդ ըրին մէջերնին ու Կըռուսա-
ղեմ խրկեցին զինքը որ երթայ անդամ մը սուրբ
Յակոբայ վանուց վիճակը աչքէ անցընէ, և ե-
թէ կարելի է՝ հնարք մը գտնէ անոր. ուր
1713 ին գալով ու ականատես ըլլալով սյն եղ

ծումներուն որ տեղի ունեցեր էր երկու Վլթու-
ոսց միանալուն պատճառաւը , ետ դառնալուն
ամեն ինչ տեղն 'ի տեղը հասկըցուց Վմիրայից ,
ու համոզեց զանոնք որ մինչեւ նորէն չղատուին
երկու Վլթուները , հետո չէ ամենեւին սուրբ
Արուսաղեմայ Վլթուին վիճակը բարւոքել : Կա-
տարեց ազգը անոր տուած խորհուրդները և
իւր առաջարկութեամբը Գրիգոր վարդապետը
Վմրտօլու՝ Պատրիարքը ընտրեց նոյն Վլթուոյն
1717 ին : Հետեւապէս բերել տալով զինքը ,
իրկեցին Արուսաղեմ (1720) սրբոց Յակովը-
կանց Վլթուը բարեկարգելու . որ շատ բարե-
կարգութիւններ ըրաւ , և շատ շինութիւննե-
րով զարդարեց . և սուրբ Յակովոյ վանքին ա-
րեւելից կողմէն քանի մը տուներ ծախու առ-
նելով վանքը ընդարձակեց , և արեւելեան պա-
րիսպը նոր շինել տալով ապահովցուց միաբա-
նութիւնը : Վրդ՝ ինչ երկարեմ սուրբ Հայրա-
սպետիս պատմութիւնը , որ ազատիչ եղաւ սուրբը
Տեղեաց և եկեղեցական դանձուց անօրինաց
ձեռքէն . մանաւանդ երկաթեսոց շղթան վիզը
ձգելով ազատեց սուրբ Վլթուս անհամար
պարտքէ , որ անխոհեմ մարդկանց ձեռօք դիու-
ուած էր վանուցս վրայ : Վյո շղթան վզէն հա-
նելու համար երկու աղեքասանաց դրեր եկաւ ,
մէկը բոլոր ժողովուրդին և միւսը Կարապետ
Կաթուղիկոսին կողմէն , որոնց օրինակները չեմք
դանդաղիր հոս դնելու :

Ես կարապետ կաթուղիկոս համակար և
միաբան եմ օքհնեալ իշխանացա Հայոց :

“ Ամենապայծառ և սքանչելագործ սուրբ
Տեղեացդ անօրինականաց Տեառն մերոյ Վրիս-
տոսի որդւոյն Աստուծոյ , մոխրամած երեսօք
յերկիր կցեալ բաղում պատկառանօք , գերա-
մարուր քարանց և հողոյ և որ ՚ի գմա կան սըր-
բութեանցդ երկիրպագանեմք՝ ՚ի Կատոնդի-
նուպօլիս քաղաքիս համագումար միեղինու-
թիւնք , վեց ժողովուրդեք կոչեցեալ ծառայք քո-
յին Արքութեանդ , այսինքն քահանայք , իշխանք
գանձակալք , եկեղեցպանք , և աշխարհականք .
և մանաւանդ աստ այժմ ՚ի պատրաստի եղեալ
վարդապետք և համահաւաք լուսաւորչածին
երամք հանդերձ հարթ մերավ և որդեկաւ քով
և հոգեւոր առաջնորդաւս Քովհաննես աստ-
ուածաբան վարդապետիւս : Այք և շնորհազարդ
սուրբ Հայրապետդ և զյոյժ քաղձալի հայրն մեր
քաղմավիշտ՝ աջահամբոյր փոփաքանօք ողջունե-
լով , զորպիսութիւն ցաւագնեալ ծնողիդ մերոյ
իբր ՚ի նոյն շնչոյ հարցանեմք , և զօրհնութիւն
գերամաքուր ազօթից քոց մեզ յօդնութիւն
առժամանել միշտ աղերսեմք և հայցեմք :

“ Օանիցէ քոյին վսեմութիւնդ Հայր սուրբ ,
զի գիր աստուածամերձ մատանց քոց եհաս առ
մեզ անբացիկ , և ըստ հրամանի քոյին Արքու-
թեանդ բացեալ ընթերցաք ՚ի լուր ամենե-
ցունցս , և ծանեաք զոր ՚ի նմայն շնորհաշար
քանսն : Եւ գրեալ էիր Հայրդ մեր գլխաւորօ-

րէն զերեք բանս զայտոսիկ . մէկ՝ թէ խմատիւն
 խնդրէ ՚ի ձէնջ սուրբ տունս . երկու՝ թէ ելա-
 նեմ և յայլ կողմունս գնամ սուրբ տանս աղա-
 դաւ , և երեք՝ զուխտաւորն յորդորեսջիք :
 Վասն որոյ գրեցաք ահա զօր բարւոքս վարկաք :
 Դիտէ Հայրդ մեր՝ թէ արեւելեան տան աւե-
 րումն ամենայն կողմանց վիշտ և ցաւ տարած-
 եաց . զի ոչ գոյ տեղի յորում գերեաց խղճու-
 թիւնն չիցէ երեւեալ : Եզդո պարթեւաղանց
 Հայոց ՚ի պատճառս այնց գերեացն , որպէս թէ
 յերկաթս կան կապեցեալ ամեներեան՝ որպէս
 քաջայոյտ է քոյին Հայրութեանդ , զոր գրելն է
 յերկարութիւն , զի ՚ի գրոյ և ՚ի լրոյ յականց
 ամենեցուն հասեալ կայ . Տէր ինքն հատուսցէ
 Հօրդ մերոյ մաղթանօք : Եւ տրա այսպէս լինե-
 լով ասաւ դու մեզ Հայր՝ լինիցին օգուտ ինչ սրբ-
 ոյ տանդ յայսպիսի ժամանակի ելանելն քո ՚ի
 շրջագայումն , ոչ բաւական որպէս յոյտ իսկ է
 ամենեցուն իբր առոյդ գիտացեալ իր : Յաքե-
 րուք ասէ ընդ յարկաւ ձերով՝ զի ժամանակն
 դառն է : Կատցի ուրեմն Հայրու մեր ժամա-
 նակ մի եւս մնալով այցելութեանն Կատուծոյ .
 զի թէ ելցես , կարծեմք և գիտեմք իսկ՝ որ շահն
 զինասն չվճարեր . բարերար է Կատուած ՚ի վերայ
 համբերազաց , ակն կալեալ ողպրմութեան նորա՝
 շունխիք արմատ ընաւին յաւսահատութեան :
 Ո ՚ի ոչ յաւիտեան մերժէ Տէր զժողովուրդ իւր
 զօր յառաջն ծանեաւ : Վասն որոյ յայցելու-
 թեանն իւրում այց արասցէ Տէր , և թեթեւա-
 ցուսցէ ՚ի մէնջ թերեւս սակաւ ինչ կամ քնաւ

ւին ըստ իւր անկքնելի դասաստանին և գթոյն՝
 զնեղութիւն գերեացու . յայնժամ շունչ առ
 եալ սակաւ ինչ կամքը և կարաղութեամբ նոյն
 ինքն Աստուծոյ՝ հոգւով և մարմնով տարոց եմք
 զիստատիէն ըստ մերս կարեաց և անդր խակ, զի
 ըստ մեծութեան Աստուծոյ՝ և զբարերարին
 գիտեմք լինել: Խակ յորդորումն ուխտաւորաց
 մի և մի բնաւ լիցի հոգ հոգարկու հոգւոդ,
 զի ահա Հայրս մեր և առաջնորդ՝ հոգեկիցն
 քո և նոյնավիշտ, միշտ 'ի նոյն ջան և 'ի նոյն
 աքնութիւն կաց խրայնով ամենեքումքը: Եւ
 ոչ միայն նա՝ այլ և ամենայն աստեսյքս գիտէ
 Հայրդ մեր որ անկըաց դնելի ունիմք զհոգ
 սրբոց տանդ 'ի սրտէ . աստուծով քարոզեմք ա
 մենքս խրաքանչիւր ըստ կարեաց: Եւ մանա
 ւանդ խակ սրբազն վեհս մեր նորասպակ սրբ
 բազան Կաթողիկոսն՝ որ այժմ խակ աստ է, յոր
 դորէ միշտ զժողովուրդն իւր: Եւ ահա յայ
 ում ամի Աստուծով առաստ և ընչաւէտք և
 տրասէքք են ուխտաւորքն: Եւ գիր գնաց յա
 մենայն կողմունութէ՝ շուտով պարտիք շարժիլ
 զի նաւն Աստուծով Աստուծածնի պահուցն
 երկուշաբթին ելանէ. Տէր է որ հոգայ և մեղ
 հոգալ ասայ: Եւ զինի այսր ամենայնի, ներել
 ժտելով մեծի սիրոց համարձակութեան համայն
 վերսպեցեալ ծառայիցո քոց, յուշ առնեմք
 Հօրդ մերոց զանել մեծի մարդարէին յորդորա
 կան բանիւթէ՝ “ Քահանացք խօսեցարուք ’ի
 սիրոտ Երուսաղէմիո, և այն: ”

* Ո՞ արդեօք այժմ խնացի յոդնաթախիծ

սգով վարանեալ սիրութ Ապղիմաց , և թէ ոչ սրբոյ
 Վեհիդ վշտակիդ անձն : Առ որ ահա քահանացք
 և աշակերտք նորոյս կտակի աստեն այժմ աստ
 գտեադք հանդերձ միաբան ժողովրդովք՝ խօսին
 զափափանս որ լի եղեք տառապանօք և տրտմու-
 թեամբ . և յերկար տաժանեցար ՚ի կապանադ ,
 և ասեմք՝ բաւական լիցի տառապանդ և զմեղ
 տառապեցուցանելդ , ո՛ Գերապատիւ : Շատ լի-
 ցի քեզ տապիլդ՝ և մեզ համբերել : Ճամ է այ-
 սուհետեւ հոգածու Հօրդ՝ միսիթարիլ , և միսի-
 թարել : Ափոփեսցի օրհնեալ սիրտ Երուսա-
 լեմի , և սփոփեսցէ զըոլոր ջլոս և զակերս և
 զայլ մասունս նորին , սրակէս զի սրտիդ բերկրե-
 ցելց երեսք զուարթք երեւիցուք : Արդ՝ այր
 որ զհովիւան գուշակս արար իւրոյ խորհրդոյն ,
 և զալքատ ձկնորսան քարոզ կենաց , չէ անմարթ-
 թէ՝ և այժմ շրթամբ անարդ յեանելցս ասի-
 ցէ հոգեւոր գործոյն մշակիդ , թէ որ ՚ի կո-
 պանս կամսյս ես՝ ել , և որ կաս ՚ի միգի տրբու-
 մութեան տան խմոյ՝ յայտնիջիր ՚ի լոյս միսիթա-
 րութեան : Ասիցէ թերեւս քոյին Արբութիւնդ
 թէ զի՞նչ ասէք , ոչ ապաքէն մինչ ՚ի վճարել
 սրբոյ տանս սպարտուցն , առի յանձն չելանել ՚ի
 կապոյ այսր երկաթոյս : Յիրաւի ով Գերամե-
 ծար . բայց երկուս ինչ ունիմք ասել . մի զոր ինչ
 սրբոյ տանդ խորհեկիր ՚ի բարտւթիւն , խորհրդակ-
 ցութեամբ ծառայիցս քո առնեկիր . խակ այդ
 կապանացդ իրակութիւն առանց ուրուք գի-
 տելց արարեր , զոր կարեմք ասել սիրով թէ
 չէ պարտ այդպէս լինել , ուստի սակայն խորհ-

եալ և կատարեալ էիր՝ թողար զվեհդ ՚ի կամս .
 զի մի դիմակ ցուցցուք զմեզ կամաց .քոց : Ի՞սց
 շատ ուրեմն լւեցաք . թէ ասես՝ ձեզ ի՞նչ որ
 լւեք զուեք . ասեմք , թէպէտ զնելութիւն դու
 կրես , զնախատինս մեք , որովհետեւ կոչեցեալ
 է անուն քո ՚ի վերայ մեր . վասն որոյ ունիմք
 իրաւունս խօսելոյ ՚ի մասինս յայտիկ : Երկու՝
 զի ՚ի սկզբանէ անտի յանձն առնլոյ անձին
 սրբոց զայդ խեզդ , եթէ եկեալ արդիւնքդ
 մինչեւ ցայժմ՝ ՚ի սուրբ տունդ , այսինքն թէ ըս-
 պատոց սմանց ազատութիւնքն , և նորեկ յիշո-
 տակքն , և մանաւանդ թէ շնորհալի շնոււածոյն
 ծախքն , այտքիկ ամենեքին թէ պարտուցն արվ-
 եալք լինեին , գիտէ Հայրութիւնդ՝ թէ ստու-
 դապէս վճարեալ լինեին բուխնդակէքն : Համար-
 եա ուրեմն թէ վճարեցան հին պարտքն , և լցան
 ուխտքն քո , և վերասահն նոր եղեն սկարտք մնաց-
 եալքդ սակա վերացգրեալ պայծառութեան սրբոց
 տանդ շնոււածոց : Որպէս ահա գոհութիւն Վ-
 մենատեառն , յաւելումն և աճումն օր ըստ օրէ՝
 շքեզազարդ սպայծառութիւն գովելի յարկիդ շր-
 նորհիւ Տեառն : Եւ ո՞ գիտէ՝ ասես դարձեալ
 թերեւս , ես մինչ զուրբ տունս ոչ տեսանիցեմ
 ազատեալ ՚ի բնաւին պարտուցն , ոչ հանից զեր-
 կաթս , եթէ ոչ մեռայց ՚ի սմին : Ի՞արւոք է
 պարծանքդ ՚ի մեր նախատինս . զի ցուցանի յացա-
 նապէս թէ քեզ պարծանս՝ և մեզ մէծ նախա-
 տինս անջնջելի կամիս արձանադրել յազդաց
 յազդս , ասելով թէ սոքա այնք են , որ զԱ-
 ռաջնորդ մի ՚ի ներքս երկաթոց թողեալ նո-

վին սպանին : « Դու նահատակ , մեք սպանովք . խիստ լաւ . բարողք վարձու արժան առնես զաշ խատողքս : Ի այց քան լիցի մոտածել կամ ասել քեզ զայդ Հօրդ խահեմակունի : Ա ան որց ահա սոսրագրեցեալ ծառայքս ամենեթեան մեծաւ աղերսիւ և յուստվ խակ խնդրեմք ՚ի քային Վրբութենեդ լսել նուաստիցս ազաշանաց , և համել զպարանոց պատուականիդ ՚ի կապանոյդ երկաւթոյ : Ի սէրն Վատութոյ լինի Հայր սուրբ , զուրբ Օւբեթեանսն և զաւրբն Յակոբ բարեխոս առքեզ ունիմք , արա զըր հայցեմքս . հերիք նախատակած եղաք այլոց . խնայեա զազգին քս անուն . լուիցես մեզ և լուիցէ քեզ Տէր , և մեք ծառայքս քս . զի լսողին լսել իրաւունք են , որպէս և միւսն : Եւ մի լիցի լնիթեռնիով և եթ ձգիշեցէս ՚ի վայր , զայլ ինչ գրել կամելով պատճառս առ մեզ մի աշխատեսցես ունայն . անհնար է՝ որ սլիսի այս մէկ խնդիրքս մեր ՚ի կատարումն գոյ , որպէս և մեք միշտ կամք և եմք ծառայքքս պատրաստական քային Հայրութեանդ և մանաւանդ տեղւոյդ՝ առ ՚ի կատարել զոր ինչ հրամայիցես : Ուստի ազաշեմք , ազաշեմք և բիւրիցս ազաշեմք , զի մի զաղերսանս անտես առնել ախորժիցիս , զի մի գուցէ և մեզ ծառայիցս լքումն ՚ի ջերմաջերմ յառաջադիմութենէս լինիցի , և ոչ ՚ի մէնչ պատճառեալ : Ա երջացուցանելով զբանս ասեմք , անպատճառ լսելով մերս աղերսանաց պարտիս ՚ի հարկաւորութենէ որ առ մեզ սիրոյդ՝ հանել զիսպանադ իսկոյն ՚ի հասանել աղերսանացս . և ՚ի վերայ կերակրոյ՝ իբր

պատուղ զմեղ և զսուրբ տունդ սիրելըց՝ ըմակել
սակաւ ինչ գինի ջրախառն ըստ պատուիրելը
աստուածայնոյն Պօղոսի : Եւ եթէ զաղացանս
զայս անտես առնիցես , ծանուցեալ լինիս թէ՝
՚ի զուր սիրես զմեղ : Վյլուրիշբանից և պատ-
ճառաց ոչ լսեմք թէ և արդար խակ իցէ : Եթէ
խելապէս զօդուտ սրբոյ տանդ խոկայցես , տալ
պարտիա սակաւ ինչ և բնութեանդ թոյլ , և ոչ
յոյժ ձնշել ՚ի վեր քան զհարկն : Օ զիարդն
դու խմա որ յայտ խակ է , և հետաելն՝ վեստ
անձինդ սրբոյ և տանդ սրբոյ , զոր ոչ խնդրէ
Տէր , ուստի և ոչ հաճի , ասկա և դիմակ գտա-
նի : Վութըսն՝ կապակցութիւն որ առ մեղ
սիրոց՝ զայս խնդիրս գիտեմք : Եսցց արդ՝ մինչ
յայսմ խորհրդի էաք և խոկայտք , լուտք թէ
հոգեծինն հարազատ՝ սրբոյ Հօրդ մերոյ վե-
քիլ Յովհաննէս վարդապետն⁽¹⁾ գալոց է ՚ի մօտ
աւուրս ընդ ուխտաւորացն : Եւ սակաւ ինչ
զինի ընկալաք տեսլեամք՝ զոր լուաբն ունկամք ,
այս է զարելին քո և զնեցուկն ծերութեանդ
ըստ քոյնն չնորհալարդ գրոյ . յոր հայեցեալ
մարմնոյ աչաց ըղձանօք՝ լցաք բերկրանօք և ան-
պատում խնդութեամք . իբր ստուգիւ զամե-
նաբաղձալի տեսիլ սրբոյ Հօրդ ՚ի նմա խակ տե-
սանելով : Վ սցելեցաք արդարեւ ՚ի քաղցրածա-
ղիկ ծառոցդ զբարետիսկ պտուղն . յինքեան ըղ-
Հօրդ սրբոյ ունելով զպայծառ վարուցն կեր-
պարան : Որ և զօրհնութիւն ամենագեղեցիկ

(1) Այս է Համնա վարդապետն պատմագիր :

սուրբ վայրացդ , և զաղօթիցն ձեր երանաշնորհ սուրբ Հայրապետիդ հեղեալ ՚ի վերայ մեր իբր զյորձանս յորդ գետոյ , զարթոյց անդրէն զկարու անձկոթեան մերայ առ տեսիլ երկնահոտ տեղեացդ , և գեղոյ դիմաց պատուեալ պատկերի գերամաքուր ծնողիդ : Ապա յետ սակաւուց , որպէս և գրեալէր սուրբ Հայրդ մեր , ամենայնիւ ըստ նոյն օրինակի կամօք և հաւանութեամբ սիրելի որդւոյ քո և հօր մերայ դիսովի մեծի Պօլսոյս՝ տեառն Յամիշաննու նորապատկ եւ պիտիուպոսի , և հաճութեամբ մանաւանդ երիցս երանեալ մեծի սրբազն Հայրապետիս մերայ կարապետի Կաթուղիկոսի ընկալաւ զպարկեցտ պատիւ Խպիսկոպոսութեան ՚ի վերայ գրեցեալ պատուելի սուրբ Հօրէն մերմէ , ՚ի սպասաւորութիւն սրբայ Գահիդ և մեծապայծառ Վթուոյդ ամենայն Հայոց , հանդերձ երկու հարազատօքն իւրովք , այս է Յուղմաս և Յակոբ վարդապետօքն , որոց շնորհաւոր եղիցի սուրբ Հօրդ ազօթիք : Վատոյց մանաւանդ և սրբազն Վեհիս մերայ զանապատմելի գանձն աստուածային , զմկայն կեցուցիչ մահուան Յիսուսի , զաւրբ նշանն Տիրական՝ զընծայեալն ՚ի սուրբ Հօրէդ :

Օսր ընկալեալ սուրբ Հայրապետիս մերայ՝ ծանոյց մեղ ամենեցուն , և աղաջեաց խոկ թէ օգնեցեք սրբայ տանն այնմիկ , և ինքնակամ կապեալ հովուի նորին սիրելի եղբօրս մերայ շատ լիցի ասէ՝ զոր ցաւեացն , եկայք միսիթար լիցուք մեծի տրումաւթեան նորա : Եւ այսպիսի բանիւք ծանուցումն առնելով ասաց . Վհա

ես քսակէս հազար զուրուշ իմնատիե՛ տամ
սուրբ տանն դասաստանի , և այնուհետեւ զայ-
րէթն ձեր է : Վասն որոց և մեր շարժեալ ՚ի
նախկին և ՚ի տոյն վութոյ , և մանաւանդ ՚ի ներ-
շնչմանէ հոգւոյն Աստուծոյ . ընծայեցաք սո-
կու ինչ արդիւնս յարդեանց մերոց ՚ի թե-
թեւութիւն պարտուց սրբոց Տաճարիդ Աս-
տուծոյ , և ՚ի լուծումն կապանաց Հօրդ մերոց
յերկար տառապերց : Որ և ահա այժմ ձե-
ռամբ հարազատի քոց տեւառն Յովհաննէս և
պիտոպսի և մահտեսի Կարապետիւն , հան-
դերձ միւս մահտեսիւքն առաքեցաք ՚ի սուրբ
Աթոռդ իմնատիե՛ ընդ ամենն հինդ հազար
զուրուշ . և ազաշնմք յոյժ զի մի ՚ի քանակն՝ այլ
յորակն հայեսցիս : Քանզի յայսմ ամի մէկ փո-
ղըն՝ որպէս թէ տան է համարելի , զղիարդն
լուեմք , և յայտ է զի գիտեն որ գիտենն , և
պատմեն արդեօք սուրբ Հօրդ : Եւ որ ինչ միւ-
նացուածք պարտուցն մնաացեն , զայն ևս ՚ի մեր
վերայ իմա . միայն թէ զայս երկաւ խնդիրս մեր
կատարեսցես , ոցս է՝ զհանել երկաթոյդ և ըզ-
ջուր և եթ ոչ ըմպել այլ գինեաւ : Եւ որպէս ՚ի
վերայ եղագք , նշան սիրոց քո առ մեզ և առ սուրբ
Հայրապետս մեր և առ բազմաջան որդեակ քո ,
զայս խնդիրս գիտեմք և ոչ զայլ ինչ . և մնամք
ահաւասիկ լոյց կատարման : Եւ ողջ լեր բաւա-
կան բազմաց օգնութեամբ բարեշնորհ կեցու-
թեամբ , ամեն :

“ Եւ ահա մանաւանդ նորապսակ Կարապետ
Արքազան Կաթողիկոսն ամենայն Հայոց սուրբ

Հայրս մեր աստ գոլով, նա եւս մեծ հարկաւուրութեամբ խնդրէ զայս. իցէ՛ արդեօք ընդդէմ՝ կալ առաքելական հրամանին եւս։ Եւ մնամբ ահաւասիկ գրոյ և լրոյ, թէ եղեւ զոր խնդրեցաքս. բաւ է՞»։

Ոճաւ (Օդոսոսի ժղ.՝

76

ԵՐԻՄՐԴ ՆԱԽԱՋԻՆ ՕՐԻՆԱԿ :

«Արբոյ քաղաքին Վասուծոյ, աստուածակովս վայրացն, և եւս լուսերամտաձարի սրբոյ Յարութեանն կենարարին մերոյ Վմենաստորք Դերեզմանին երկիրապատանեմք։ Վյլ և տիրայաջորդառաքելական Վթոռոյ Վստուածեղորն՝ յորում և կենապործ խաչին Քրիստոսի, և ընդայլոց սրբութեանցն՝ հետեւապէս անուշահոտ սրբոյ Վլսադրի մեծին Յակոբայ սրբոյ Վռաքելոյն, ՚ի գուճս անկեալ և շրմամբ հոգւոյս երկրապատութիւն և համբոյր մատուցանեմ. յորոց ամենայնէ զպահպանողական շնորհս ընդունել սպասեալ մնամ հաւատով։

«Յիսուսի Քրիստոսի ծառոյ Տէր Կարապետ Կաթողիկոս ամենայն Հայոց, և Պատրիարք Առաջապատու լուսակառոց և տիրանկար մեծի սրբոյ Վթոռոյն Վամիսածնի։ Յորմէ ժամանեալ և ընծայեալ մատուցի միարար սէր սրբութեան և ողջոյն հոգեւորական վերասիրելի և զերամեծար հոգեկից եղբօր ՚ի Քրիստոս՝ մեծի Տեառն Գրիգորի, և սրբազան Պատրիարքի սրբոյ Վրու-

սաղեմի, և արժանաժառանգ հոգեկիր և երանեալ դիտապետի սրբոց աւզեացն՝ Քրիստոփի ։ Եւ որոց ընդ թեւօք երջանկութեան սրբազնէ ից հովանաւորեցեալ բարեբախտիկ անձանց արժանաւորաց՝ եպիսկոպոսաց, վարդապետաց, քահանացից, և աստիճանաւորաց, ճգնողական կրօնաւորաց, գործակալաց, և ազօթաւորաց, և համօրէն ՚ի փառս Վասուծոյ հաւաքեցեալ մահտեսի քոց միաբանից՝ ընդ ողջունիս և վերնապարգեւ օրհնութիւնս ընծայեմ, որովք ողջ լեռուք :

“ Վեկալոյ զարբառառ նամակ ամենապատուելի Հղբայրութեանդ՝ հանդերձ երկրագելի սատուածեան սուրբ Աշանաւն, որով փառաւորեալ եմ՝ ունելով ՚ի պարանոցի խմում զանհամեմատ և զանդին գտնեն երկնական, (թէ և ոչ իսկ եմ արժանի). ուստի և վասն այլոց հետեւեալ ընծայից ՚ի քէն առաքելոց (որ ձեռամբ քո և իմն որդեակ Յամշաննէս վարդապետի, և զոտ առաքչող խրոյ ունողի), մեծապէս շընորհակալ եմ հանդերձ լիական գոհութեամբ . շն կենաս, և շն կեցցէ միշտ և յաւետ աերունեան սուրբ քո Վթոոդ, զոր բարով վայելոցիս ընդ երկացն աւուրս Տեսուն, և ՚ի պարծանս տառապեալ ազդիս Հայոց, և դարձեալ ողջ լեր :

“ Վեկալեալ եղեւ եւս՝ խնդիր Վրբութեանդ, որ վասն կարգառութեանց որբազան կարգի եպիսկոպոսութեան երից որդեկաց մերոց, որոց մինն հաղիւ կամեցաց, և ոյն ՚ի պատիւ լը-

բաւթեանն գրոյ սրբութեանն ՎԵծիոդ, որոց ՚ի միւ
ասին շնորհեցաք հոգւովին Աստուծոյ, զորս բար-
ւոք վայելեսցես և վայելեսցեն հնազանդօրէն
որդիութեամբ, և հեղական պարկեշտութեամբ
ծառայելով սուրբ Վիժնուոյդ և Տեառնդ իւր-
եանց :

“ Աստանօր ըստ կարգի հոգեւոր իրաւանց՝
ժամ է ինձ արդեամբ եւս անսալ բանին, և
յառաջ ածել զասացեալն՝ թէ օգնելն եղբայր
եղբօր է իբրեւ ամսւր պարիսալ, կամեցայ վասն
որոյ և թողեալ զիմն կանխեցի նախագոյն ա-
ռաջինն գրովին որ ՚ի քաղաքէս մեծէ, ինդրեցի
՚ի յլ զբայրութենէդ հանել զերկաթն սրբոյ պա-
րանոցիդ և առաքել առ իո, և չեղէ արժանի
սցնմ լաւլի լինելոյ, և թէ եւ զՏէրունականն
ընկալայ : Իսկ արդ՝ կոչեալ իմ զարդեակին քո
և զանդրանիկն իմ զՊատրիսրք քաղաքիս, հան-
գերձ խորհրդական իշխաննօք, և հոգւովին Աս-
տուծոյ խորհեալ խօսեցաք զոր ինչ և խօսե-
ցաք, և եղբակացութիւն խորհրդոյն յայսմ
կայացաւ, մինչ որ և ես ուխտեալ եղէ՝ ոչ եւ
լանել ՚ի քաղաքէս, մինչեւ հանցի երկաթն ՚ի
պարանոցէ Արբոյդ : Եւ այս բան ոչ միայն ՚ի
ծածուկ ներխորհրդով, այլ և ՚ի յատենւոջ առ-
ամենեսին եղեւ հոչակել . ուսաի ոչ սակաւք
յորդորեալ եղեն կամակիցք և օգնակիցք, զոր
եթէ ոչ իցէր անթաւելի բազմութիւն գերեցցն
խղճալեաց, և խիտ առ խիտ անմիջոց բազմու-
թիւն արոց ողօրմութեանց, որ վասն աղասու-
թեանց, իցէ թէ՝ ծախան նորոգութեան սրբոյ

Յարութեան և այլոցն նորաշինութեան (որպէս պատմի), որոց պատճառաւան է պարսն մնացեալ այն եւս վճարիցիւր . այլ արդ՝ ոչ միայն անմեղադրելիք՝ քան թէ գովելիք և եւս են օրհն նեալ ժողովուրդը քաղաքիս , վասն զի գերեալքն եւս մեր են , և են եղբարք և քորք և գառնուկ զաւակունիք մեր , առանց մերձ ՚ի դուռն կորստեան , քան դիսապառ վճարումն վերասացեալ պարտուց սուրբ Աթուոյդ : Արմի գովութեամբ կարացից ներբողել զողորմութիւն աղքանիս մերում որ ՚ի մեծ քաղաքիս . արդարեւ մեծ գալութեան և մեծագոյն օրհնութեանց արժանիք . վասն զի ներայսմիկ արժանաւորի ազատարար ողորմութեանց բաղմաց՝ յաւելին եւս լսել բանից մերոց , և գրեթէ յաստամանց իւրեանց հատեալ օգնեցին իւրաքանչիւր էս նաֆք , և բաց ՚ի գանձանակացն՝ այդքան ինչ ՚ի սուրս մատեան վասն անրոյդ հանման , զորոց անուանան գրեսցէ Տէր ՚ի յիւր մատեան : Եւ արդ՝ կատարեալ սիրով աւասիկ երկրորդ անգամ ցաւակցելովս գրեմ հոգեկից Լուգօրդ իմոց սրբոց , և հարազատական անմիջոց սիրով վստահացեալ և յուսով գերակատարելութեան Արքաղնութեան քում , հարկ ՚ի վերայ եղեալիքը հրամացեմ՝ զի ընկալեալ զսակաւամանեաց օգնութիւնն ՚ի սիրովացս և ՚ի ցաւողացս վասն քո , լսող եղիցիս մեղ . որպէս և ես գարշեալ վերջին ծերութեամբս , թէպէտ բազում ինչ պատճառ առարկեցի առ ՚ի չմոտանել ընդ Ծով մեծի աստիճանի զբաղանացս , սակայն և ոչ կա-

մեցայ Ազգի իմոյ անդուր լինել և զիամն պաշտել, որ եպերելին է : Պարափ ուրեմն և Արքութիւն քո անսալ այսքանեաց երախտաւորաց, և ՚ի գալ օրհնեալ ուխտաւորացս տէրունականաց՝ սիրով ընդունել զաղերս և զինդիր մեծի քաղաքայնոցս և մեր . և յետ երից աւուրց ՚ի մէջ սրբոյն Յակոբայ, և ՚ի գոգ սրբոյ Գլխադրին ՚ի մէջ և ՚ի հանդէս աւուրդ կարօտ եկեալ ուխտաւորացդ յօժարել. և որպէս ետու հրաման իմ և քո սիրադոյն որդեակ նորընծայ արհի եւ սիխակտոս տէր Յովհաննես վարդապետին, որ որպէս քոյ է՛ եղիցի և իմս վէքիլ, և իբրեւ իւ մնավս ձեռամբ բացցէ և հանցէ զերկաթն յերկարաստանջ և բազմաշխատ օրհնեալ սուրբ քոյդ պարանոցէ, և տացէ ՚ի ձեռս սիրելի որդեկին մերում վէքիլ օրհնեալ ժողովրդոցս մահաւեսի Կարառետին : Եւ իսկայն անմիջապէս զգեստաւորեալ մատուցես արժանաւորդ՝ զգոհացողականն պատարագ, յիշելով յաղօթս քո սուրբ զբոլոր աղդս Հայոց . եւս առաւել զերախտաշատ զայս ժողավուրդ մեծի քաղաքիս . ընդ նոսմին թէ և յիշեսցես զկարօտս, և զանդրանիկն իմ մեծաջան, այն քո են շնորհ : Իսկ թէ այլ իմն մտածութեամբ, որպէս թէ տակաւին պարոք գոն, և զիարդ ուխտաղանց լինիցիմ ասելով՝ խիղճ ինչ ՚ի միտս հարցէ զքեզ, որ ոչ է խիղճ՝ քան թէ կարծիք . վասն զի յաւուրսն յայնոսիկ (որպէս ստուգիւ լուայ), մինչ ուխտեալ ես՝ թէ որքան էր պարաքն՝ զայն աստուծով վճարեալ ես և անցեալ . իսկ ներկայս պարոյ յետ

այնր բաղսւմ շնորթեանցն է . թող զայն որ 'ի վերայ սպասուց սրբութեանց ծախեալ են , որ 'ի սուրբ Աթոռն մտեալ , և ոչ ընդ վայր որպէս յեռանդն : Այլ սակայն առ 'ի բժշկել և բառնալ զկարծիան զայն՝ ահա շնորհօք ամենասուրբ Հոգւոյն Աստուծոյ , իբրու Հայրապետական իշխանութեամբ նուաստիս թողութիւն և քառութիւն եղիցի քեզ յերկինս և յերկրի , և մի համարիցի քեզ ՚ի մեղս մնացեալ պարտուցն վերջնոյ , որ այլ է քան զուխտեալն քո , և ուխտն քո կատարեալ է՝ և եղիցի :

“ Եւ 'ի նմին վաղվաղակի տացէ Աստուած աղասութիւն , որպէս յուսամ աղօթիւք քովք . և եւս քոյին սուրբ ձեռօք՝ ամեն , և դարձեալ նզ լեր :

“ Եղաւ այսորիկ մեծագունի հարկաւորութեանս՝ ահա մնամ՝ և սպասեմ զի մահտեսի կարապետն վաղվաղակի առաքեսցէ կամ զերկամն և կամ զկուզպն միայն , զի տեսեալ համըուրեցից , և դարձեալ այսրէն այդր առ քեզ դարձուցից : Ապա թէ յետ այսքանեացն՝ անլուր լիցին բանք մեր առաջի քո , բարւոք ՚ի միտ առ և գիտեա՝ որ ոչ միայն սառելոց են սիրովք որբոյ Աթոռոյդ և քո , գուցէ և լինիցիս պատճու . արտադանձանակացն բարձման , այլ լարն սիրոյ ՚ի մէնջ կտրելոց , և գրոյկս այս առ քեզ վերջին լինելոց , որ ոչ յուսամ , քանզի սիրով սիրեցի և միաբան եմ քեզ և անդրանկիս իմում հանդերձ օրհնեալ ժողովրդովք քաղաքիս . որպէս և ահա ՚ի նշան սիրոյ վերստին նորոգեցաւ

վանքս սրբոյ Աթոռոյդ, և զարդարեալ պայծառացաւ, յորս կամ սիրով հանգուցեալ. որբարտվ վայելեսցեն միաբանիք սրբոյ Աթոռոյդ։ Վինչ գիրս ցայս վայր եհաս և թիւն էր գրեաց օգոստոս քանն և հինգ, 'ի պահուն յորում իշխանիք տեղւցոյ զԱթոռակալ որդեկիս Վանուել մեծ վարդապետի մեկ քեաէ խմոսափիէ վասն քո համրէին, խերոյն 'ի վերոյ դրամին և գրոյս եկն եհաս Վարտիրոս սարկաւագն, և մասոց զգիր քոյին Արբութեանդ, որոյ խնդիրն էր վասն սյօր աշխատանաց, որպէս գրեցաւ։ Հրաշք է ուրեմն և նշան համակամ սիրոյ և միաբանութեան, զոր Տէր Յիսուս անքակ և ամսւր պահեսցէ 'ի մէջ մեր, և 'ի մէջ երկուց սրբոց Աթոռոց։ Առ 'ի մէնջ ցուցաւ ըստ կարի և առ 'ի քէնն մնաց շուտով առաքմամբ երկաթին։ Վարքան առ սյօ բաւ լիցի մեծագունի խոհեմութեան Արբութեանդ։

“ Կրեցաւ Թձէն, օգոստոս ին, Յուսակը տուր ըստ որբագունի Կարապետին՝ Քրիստոսին։ ”

77

Կրիգոր հայրապետի կրած նեղութեանց պատմութիւնը խմանալ ուզողը, կրնայ Հաննա վարդապետի Արուտաղէմայ պատմութեան մէջ կարդալ յերես 147. որ ականատես եղած է ամեն կրածներուն, մանաւանդ թէ վախանորդութեան պաշտօնին պահանջմամբը նոյն գէպերուն և գործքերուն մէջ գտնուած է ինքն ալ։

Վրիգոր շղթացակրի շինել տուած տեղուաները ասոնք են : || . Եշանի անուանեալ խորանը Ա . Յակոբայ եկեղեցւոյն հիւսիսային կողմը՝ || . Վլսադրի մատրան վրաց : || Եծացաց աւանդատունը, որուն մէջ նոր խորան մը հաստատեց յանուն սուրբ | ուսաւորչին : | Եթզէհեմ սուրբ Օննոդեան վանքը նորոգեց . ևս և սուրբ Հրեշտակապետի վանքը, և Հռիփախմեայ խորանը շինեց նոյն վանուց մէջ : | Յոպոկէ շինեց սուրբ Նիկոլայոսի եղեցին : | Այլ և շատ նորոգութիւններ ըրաւ սուրբ Յակովեանց հոչակաւոր եկեղեցւոյն մէջ . և ընդ ամենը խոհեմ կառավարութեամբ 32 տարի Պատրիարքական իշխանութիւննը վարելէն զինի, խաղաղութեամբ հանդեաւ ՚ի Վրիառոս :

Այս սուրբ հայրապետիս ժամանակ կրկին անդամ վէճ բացուեցաւ Հայոց և Յունաց մէջ Հայոր Աքրահամու վանուց համար, որ Հապէշներունը ըլլալով՝ իրաւամբ Հայոց կը վերաբերէր, և Յօյնք բռնի յափշտակած եին : | Եւ ոչ միայն այն, այլ և ճշմարտութիւնը սքովելով սուրբ Յակոբայ վանքն ալ ուղեցին յափշտակել, որպէս թէ Վրաց աղքին եղած ըլլայ այն առաջուց, և Հայք բռնի յափշտակած անոնց ձեռքէն . այս ինդիրը շատ գժուարաւ լուծուելէն զինի, երկու կողմին ալ շատ սուզի նրանուաւ :

Վախճանեցաւ սուրբ և բազմարդիւն Հայրապետն 1749 ին, և թաղուեցաւ ՚ի Ա . Փրկիչ ՚ի շարա Պատրիարքաց :

Յաջորդութեան Պատրիարքաց : Ժամանակագրութեան :
(1749—1865) :

78

Եղին տարին յաջորդեց իրեն Յակոբ սպատրի-
արքը՝ Նալեան, որ Յովհաննու կոլտոի աշակեր-
տըն էր և միաբան սուրբ Աթուոյս, սակայն
ինքը ուսման սպարապելու համար Պօլու կը կե-
նար : Երեք տարի միայն Պատրիարքական իշխա-
նութիւնը վարեց, և յետ այնորիկ գործը իրեն
ծանր գալով, մեծահաւատ Եազուալ ամիրային
հետ՝ որ 1752 ին ուխտի եկած էր, կրկին Կոս-
տանդինուազօլու գարձաւ : Եւ իրեն յաջորդե-
ցին հետզետէ թէոդորոս, Կարապետ, Պօլոս,
Յովհակիմ, Պետրոս՝ որ Յոպովէի մէջ վախճա-
նեցաւ, և ասոր ալ յաջորդեց թէոդորոս Վա-
նեցի Ճգնացգեաց Հայրապետը : Վար Ժամա-
նակը սուրբ Յարութեան երկնանման Տաճարը
սյրեցաւ (1808), և Տէրութեան հրամանաւ կըր-
կին շնուռեցաւ, նոյնպէս և մեր վերնատունն
ալ նորոգուեցաւ . և հնագոյն արքունական հը-
րովարտակները՝ օրոնք սուրբ Վասուածածնի գե-
րեզմանին և սուրբ Շննդեան տեղեացն պա-
տարագ մատուցման համար առնուած էին, վե-
րլուսին նորոգուեցան : Եւս և աշտանակները
կանթեղները, պատկերները և զարդերը՝ որ
անհաւասար էին, ամեն ազգաց միակերպ հա-
ւասարեցուցին : Եւ ինքը թէոդորոս վախճանե-
րով 1818 թուականին՝ անոր տեղը Պարբիէլ
Պատրիարքը յաջորդեց . բայց արժանապէս համ-

գըտութիւն մը չլայելեց սուրբ Վանուց ան
թիւ պարտուցը համար, որու պատճառաւ Ա
թոռէն ալ հեռացընելով զինքը՝ Խզմիր խրկե-
ցին. և Կատանդինուպօլսոյ Պօղս Պատրիարքը
իբրեւ կառավարիչ սուրբ Աթոռս գալով, մե-
ծամեծ ջանիւք հաղիւ հաղ աղատեց վանքը
պարտասեարց ձեռքէն:

Պօղս Պատրիարքի կառավարութեան ժամա-
նակ, 1829 թուոյն նորոգեցան հին հրովարտակ
ները, և վերստին սուրբ Վերեպմանի վրայ պա-
տարագ մատուցանել սկսուեցաւ, որուն հրա-
մանագիրը Օքքարիա եպիսկոպոսի ձեռօք առ-
նուեցաւ իր փախանորդութեան ժամանակ:

1831 թուականին բուն բարեկենդանի ուր-
բաթ օրը՝ ըստ մեր նախնի սովորութեան՝ Վար-
ւոց վանքը սուրբ Վարկոսի եկեղեցին գնալով
պատարագ մատուցանելու, և ժամարարի զգես-
տաւորեալ ժամանակին ժողովրդեան ծանրաւ-
թենէն յեղակարծ իմն վերնատունը փլաւ, բայց
Վատուծոյ պաշտպանութեամբը ժողովրդեան վը-
նաս մը չեղաւ:

Եւս և 1832 թուականին, Յունաց սրիկա-
ները սուրբ Յարութեան Տաճարին մէջ գրոհ
տալով, սուրբ Վատուածածնոյ Աւժաթափման
աեղւոյն պատկերազարդ կճեայ բոլորակ քարը
խորտակեալ մանրեցին առ նախանձու, որ Կա-
տանդինուպօլիսէն խրկուած էր ՚ի յիշատակ ե-
րեսուն և վեց ուխտաւորաց, որոնք ծովասոյզ
եղած էին քանի մը ամիս առաջ։ Եւ 1834 թը-
ւականին Օքտիկի շաբաթ օրը, յետ ըւստաւոր

Եսային սուրբ Յարութեան տաճարէն դուրս վերադարձած ժամանակ , մեր և Յունաց երկու տասան հազարի շափ ուխտաւորներէն հարիւր յիտուն անձինք և երեք զօրք ինկան խուռն բաղմութեան մէջ , և շնչառպառ մեռան : Այսն թուականին գաղանաբարաց արաբացիները կառաւախրութեան դէմ ապատամբելով Երուսաղէմբ պաշարեցին տասն աւուր շափ , և ներսէն ու դուրսէն շատ կռուելէն զինի , Խորահիմ փաշայի զօրքերը՝ որ տակաւաթիւ էին Երուսաղէմի պաշտպանութեան համար , չկարողանալով դէմ դնել արաբացւոց , Աիօնի բերդին մէջ մանելով քաղաքի դռները գոցեցին . և բարբարոսները քաղաքին հարաւային կողմէն ջրանցքի ճանապարհէն ներս մանելով՝ քաղաքին մեծ մասը տարի տուին . և երկու օրէն յետոյ Խորահիմ փաշան Յոպպէ ելլելով , և շատ զօրքեր կորսրն ցընելով ճանապարհին , դարձեալ արիաձեռն զօրքերով եկաւ Երուսաղէմբ տռաւ բարբարաց ձեռքէն , և ապա շատ բարեկարգութիւններ ըրաւ :

1836 թուականին համահաճութեամբ երկուց սրբազն Պատրիսարքաց՝ Վարքիկլի որ վերըստին դարձաւ ՚ի Վայր Եթուն իւր և Պօղոսի կառավարչի , սուրբ տեղերը շատ շինութիւններ և պայծառութիւններ ստացան . մանաւանդ սուրբ Յակոբայ եկեղեցւոյ մէջ կանանց վերնատունը շինուեցաւ կրկին խորանաւ , որք են յանուն Շնթրեաց և յանուն Պայծառուկերպութեան . և բարձաւ Աիօնի խորանը որ

լուսամոխի կամարին մէջ հաստատուած էր դրան ձախակողմքը : Եւ սուրբ Յակոբայ եկեղեցիները սպիտակացան , սցովնիքն՝ Վայրածնի , սուրբ Առեփաննասի , և սուրբ Առաքելոց . եւս և սուրբ Հրեշտակապետի եկեղեցին ծեփեցաւ , և շատ սենեակներ շինուեցան ուխտաւորաց համար : Եւս և սուրբ Յակոբայ տպարանը՝ սոյն հացրապետները հաստատեցին ՚ի պարծանա ազգիս Հոյոց : Եյտ միջոցիս (1837 թուոյն) սուրբ Համբարձման լեռը Հոյոց վանք շինուեցաւ , որ շատ ժամանակէ ՚ի վեր աւերակէր . բայց Յօյնք և Կատինք նախանձելով հակառակ հրավարտակ հանել տառին , և երկու տարիէն եռքը գրահ տալով կործանեցին և աւերեցին , և այնպէս կը մնայ մինչեւ ցոյսօր :

1841 թուականին՝ վերսիչեալ Օպրարիա և պիտիոպտար Պատրիարք նստաւ , ինչպէս վերը ըսինք , որ իւր փոխանորդութեան ժամանակ պատճառ եղաւ Վերեշգմանին վրայ պատարագ մասուցանելու : Հինգ տարի և ինն ամիս մխայն վարեց իշխանութիւնը . և թէպէտ քանի մը շինութեանց հիմնարկութիւններ ըրաւ , բայց մահը վրայ հասնելով անոնց լրումը իւր յաջորդին օրովը եղաւ :

1841 թուոյն Ենդղիոյ եպիտակոպտար Երաւաղէմ սկսաւ շինութիւններ ընել :

1847 թուականին՝ Վիրակոս երուապէմացին նստաւ Պատրիարք , որ իւր նախորդին հիմնարկած շինութիւնները լրացրնելէն ՚ի զատ , սուրբ Յակոբայ եկեղեցւոյ մէջ գտնուած ամեն խաչ

կալներն ալ ոսկեզօծել տուաւ : Իւր օրովք նաեւ
Ա.՝ Օննդեան դուրսի երկաթեայ դրան հաւա-
սար իրաւունք ձեռք բերաւ Յունաց հետ, և
բանալի մը եւս ունեցաւ :

1848 թուականին | ատինաց առաջին Պատ-
րիարք նատաւ յերտւսաղէմ Ալեքրիա անուն եւ
պիտիոսպոսը :

1848 թուականին ապրիլի տասն և երկուքին
Օատկի մեռելոց օրը երրորդ ժամուն՝ յետ ար-
ձակման եկեղեցւոյն, սուրբ Յակոբոյ Տոմարի
մարտ կանիթեղները յանեկարծ բնքնին լուսով
լառեցան, որուն շատ ականատեսներ եղան,
որ և երեք ժամեն աւելի տեւեց :

1850 թուականին Վիբակոս Պատրիարք յան-
կարծակի վախճանեցաւ, և Օմբուռնացի Յովկ
հաննես եսպակտապոր յաջորդեց անոր տեղը, որ
շատ շնուռթիւններ ըրաւ սուրբ Աթոռոյս մէջ.
որոնց մէջ հռչակաւոր է Ահա հարաւեր կամ Պատ-
րիարքարանը, և Ժառանգաւորաց գպրոցը :

1857 թուայն Մուսաց հիւպատոսարան հաս-
տառուեցաւ, և առանձին Ահա արապօլիստ մը
եւս նատաւ Երտւսաղէմայ մէջ. որոնք իրենց
տէրութեան հրամանաւն և ծախիւքը առան-
ձին վանք և հիւրանոց շնեցին արտաքից Երտ-
սաղէմի :

1858 թուականին Հաղէշից թագուորի Ահա-
պիրը Երտւսաղէմ ուխտի եկաւ, և Հայոց վանք-
էն շատ գոհ եղաւ իրենց աղքատ կրօնաւոր-
ները կերակրելուն, և իրեն արժանապէս մար-
դասիրութիւն ցոյց տրուելուն համար :

1859 Թուականին, Արուսաց կայսեր եղբայր Կառավարականութիւնը և իւր թագուհին Երաւասաղէմ ուխտի եկան :

1860 Թուականին Օմիւռնացի Հոգելոյս Յովիշաննէս Պատրիարքը վախճանեցաւ . և քանի մը աւուր յետոյ աւագ Խուսարար Իովիշանցի Գևորգ եպիսկոպոսն ալ իւր մահկանացուն կնքեց , և Աթոռս մնաց առանց Պատրիարքի և առանց աւագ Խուսարարի :

Այս միջոցիս սուրբ Աթոռոյս կառավարութիւնը ընդհանութը միաբանութեան ձեռքը մը նաց , ընդ նախագահութեամբ խոստովանահայր Վրթաննէս վարդապետին , որուն տեղապահութեան պաշտօն ալ տրուեցաւ յետոյ Ազգային Վարչութեան կողմէն :

1862 Թուականին արժանապատիւ Կարապետ վարդապետը միաբանութեան հաճութեամբը աւագ Խուսարար ընտրեցաւ , և 1863 Թուականին Եպիսկոպոսութեան բարձր աստիճանին արժանացաւ : Այն 1863 Թոռոյն Հայոց և Յունաց համահաճութեամբ՝ սուրբ Աստուածածնայ Երկնանման Տաճարի յատակը , և բարձր տանիքը սալապատեցաւ , որ Երկար ժամանակէ ՚ի վեր քայքայեալ էր . եւս և պէտք եղած նորոգելիք տեղերը նորոգուեցան :

1864 Թուականին Կայի վարդապետը Թալասացի , օգոստոս 14-ին միաբանութեան քուէարկութեամբ և ազգային Կյոնական և Քաղաքական ժողովոց ընտրութեամբ վարդապետութենէ Պատրիարքութեան բարձր աստիճանին կան .

չուեցաւ . ուստի ՚ի սեպտեմբեր 10 ին ՚ի կուտանդնուազօլիս և անտի յԱջմիածին երթարավ՝ Կազխակովառութեան բարձր աստիճանը առաւ , և գեկտեմբերի 3 ին դարձաւ ՚ի կատանդինուազօլիս . և անաեղ վանուց բարեկարգութեան համար ժամանակ մը մնարավ՝ 1865 տպրիլ ամսայ 5 ին յԱշուսազէմ եկաւ : Յուսանք նորին Արբազնութենէն որ արդարութիւնը առաջնորդ առներով իրեն՝ կը սկսի իւր Հայրապետական իշխանութեամբը կառավարել զուրբը Աթոռը , և յառաջադիմութեան շաւզին մէջ դնել զայն :

Աւարտեցաւ առաջին մասը փոքր ՚ի շատե սպառմերով անցքերուն , փոփոխութիւններուն և տեղեկութիւններուն վրայօք : Յետ այսորիկ երկրադ մասիս մէջ փոքր ՚ի շատե առ ՚ի ծանօթութիւն սիրելի ընթերցողաց՝ սուրբ տեղերը և վանքերը սիխոի նշանակեմք , որոնք Արուսազէմ քաղաքին մէջը և անոր շրջակայուահմանները կը գտնուին :

Բայց նախ արժան կը համարիմ աստ նշանակել մեր նախարարաց անունով շինուած վանքերը , որոց ոմանք յայտնի են և ոմանք անյայտ , և անոնց անունները Հայաստանի Հնախօսութենէն և Վավեհ Կաղանկայտուացիէն , և այլ և այլ սպառմիջներէն կ'առնումք :



ՄԵՄՆ ԵԲԿԱՐԴ

— — —

Ասումադրութեան մեր նախնիներեն հիմնեալ յայտնի և
անյայս առերակ վանօրեից :

Յ Օ

Ասումադրութեան է Քաղաքի վանքը Շիրակացոց, որ յետոց կնկղաւորաց վանքը ալ անստանած է, արտաքոյ Երուսաղէմի Առղամօնեան տաճարին աշտարակին մօտ, որուն այժմ առվը յայտնի չէ :

Արծրունեաց վանքը՝ որ յանուն սուրբ Գեղորգայ կառուցեալ էր, դարձեալ նոյն կողմին է եղեր, և առվը այժմ անցայտ է :

Օքրեհունի վանքը դարձեալ արտաքոյ Երուսաղէմին, որուն առվըն ալ անունն ալ մեզ յայտնի չէ :

Վամիկոնեից վանքը դարձեալ քաղաքին, դուրս՝ կառուցեալ յանուն սրբոյ կարապետին, բայց առվըն անցայտ է այժմ :

Գուգարաց վանքը նոյնպէս արտաքոյ սրբարակին, որուն անունն ալ առվըն ալ յայտնի չէ :

Հղեշխի վանքը արտաքոյ պարապի քաղաքին շնուռած մեր սուրբ Փրկչի վանուց մօտ, որուն Քաղոս ալ կ'ըստի, և այժմ առերակ է :

Վիւնեաց վանքը որ յանուն սրբոյն Գեղորգայ կառուցեալ էր, առվը անցայտ է . բայց հնախօսութիւնը մեզ ծանօթութիւնի կուտայ այս վանուց համար թէ, Տաճիկները բռնութիւն բանդեր են :

Աշտունեաց վանքը սուրբ Հրեշտակապետի
վանուց ետեւ, որ ուրիշանոց եղած է հիմայ.
յառաջագոյն բոլոր ուխտաւորները այս վանուց
մէջ բնակեցուցանելով կը դարմանեն եղեր. որ
այժմ դարձեալ ուրիշանոցին մօտ է և աւերակ,
և է ՚ի ձեռս մեր:

Վերսիչեալ վանքին մօտ Գաւթի դրան մերձ
էր Կրիցավանքը յանուն սուրբ Վատուածածնի,
ուր որ այժմ ուրիշանոց է դարձեալ ՚ի ձեռս
մեր:

Վեւոնդեաց վանուց թէ աեղը և թէ ու
նունը որ կողմն ըլլալը յայտնի չէ այժմ:

Չորրորդ Հայոց Արիստի վանքը պարսպէն
դուրս արեւելեան կողմն է, որուն տեղը յայտ-
նի չէ:

Վնձեւացեաց վանքը յանուն Վնանիայ ա-
ռաքելոյ Իեթղէհէմքաղաքին մօտ կառուցեալ
էր:

Վրշակունեաց վանքը Կրուսաղէմքաղաքին
մէջ Պրօպատիկէ աւագանին մօնի է, և շատ
հաւանական է որ Յովակիմայ և Վնայի տունն
ըլլայ, որուն եկեղեցւոյ ձեւերը Հայոց եկե-
ղեցւոյ ձեւն է. բայց այժմ Գաղղիացիք առին
այլազգեաց ձեռքէն և նորոգեցին, իսկ առա-
րին հին ձեւը պահեցին:

Գաղաւոնի վանքը, որ յանուն սրբոյն Հոխի-
սիմեայ և Գայիանեայ կառուցեալ էր. սուրբ
Յարութեան դրան մօտ եղած է, որուն տեղը
յայտնի չէ:

Վմատունեաց վանքը սուրբ Վիօնի կողմն է:

Կամսարականաց վանքը , որ Արշակունեաց վանք ալ կ'ըսուէր , յանուան սրբոյն Գրիգորի Առևտուորդին , անյացտ է հիմայ :

Վամիկոնէից վանքը որ յանուան սուրբ Իսրայելին շինուած էր , դարձեալ Աթոնի կողմին էր :

Դառնեցւոց վանքը , որ Ամբատ Շագրասունին շինեց , տեղն ալ և կողմին ալ անյացտ է :

Վահառունեաց վանքը , որ Վարավանք ալ կ'ըսուէր , Տեառն եղօր Արդար առաքելցին առուամբ շինուած էր , տաճարի Արբութիւն սրբութեանց ըսուած աշտարակին կից , որ այժմ Տաճկաց ձեռքն է և աւերակ է :

Պալունեանց վանքը Վալիկեայ լեռան կողմին եղած է , ինչպէս նաև հետագայ երկու վանքերը . Վնձեւացեաց վանքը , և Օաղակունեաց վանքը , որ այժմ աւերակ և Տաճկաց ձեռքն է :

Կրտսեցւոց վանքը՝ Ձիթենեաց լեռան վրայ , որուն տեղը Կենարարն մեր Յիսուս ինը երանութիւնները կարդաց , բայց այժմ աւերակ է , և ՚ի ձեռն այլազդաց :

Վարսմնունեանց վանքը , Առղոմօնի տաճարին կողմերն է , որուն տեղը յոյանի չէ :

*Վանանդեայց վանքը , վերսիշեալ վանքին կողմին է և անյացտ . նմանապէս և Տայեցեայց վանքը , թէ և նոյն կողմին էր , բայց անյացտ է հիմայ տեղը :

Վոկաց վանքը , Գէթամանի ձորին մօտ :

Վաղքերունեաց վանքը , Վալիկեայի լեռան կողմը :

Ասհառունեաց երկրորդ վանքը, դարձեալ
Գալիկեայ լերան վրա :

Կաղանեկայտուաց վանքը, Յովսափիաթու ձու-
րին կողմը :

Վաղաղեանց վանքն ալ Գալիկեայ լերան կող-
մերն էր բատ հնախօսութեան . բայց սյժմ ա-
ւերակ է, և ագարակ ՚ի ձեռս այլաղգեաց :
Վմանապէս և Կողբայ վանքը, որուն տեղը յայա-
նի չէ սյժմ, թէ և Զիթենեաց լերան վրայ պի-
տի ըլլայ : Վանեկունեաց, Վղամունեաց և
Գերջանաց վանքերը, ասոնց ալ ոչ տեղերնին և
ոչ որ կողմը ըլլաղնին յայտնի է :

Միւնեաց երկու վանքերը Կրուսաղէմի ա-
րեւելեան կողմը Զիթենեաց լերան վրայ էին .
Երրորդ վանքը Հայր Վաբայի ձորին մէջը, չոր-
րորդ վանքը Յովսափիաթու ձորին մէջ . հինգ-
երրորդ վանքին տեղը անցայտ է :

Երցախայ վանքը, Կրուսաղէմայ հարաւա-
կողմն եղած պիտի ըլլայ, բայց տեղը յայտնի չէ :

Դաշտացւոց վանքը զար Վրշակունիք կա-
ռուցին յանուն որբացն Գեորգայ, սյժմ մեղ
յայտնի չէ տեղը :

Վամիկոնեից նախարարներէն շինուած չորս
մէծամեծ վանքեր ալ կային, որոնք նոյնապէս ան-
ծանօթ են, և չորս վանք ալ Վղուանից կային,
որոնց համար Վովհէս սրբամիջը այսքան կը յի-
շէ՝ թէ այլաղգներու ձեռքն է :

Վղուանիք այս չորս վանքերէն ՚ի զատ ուրիշ
ութ վանք եւս ունեին, որոնց հնգին միայն ա-
նունները յայտնի է մեղ Վովհէս Կաղանեկայ-

տուացիի պատմութենէն . և ասնք են . Պանդայ վանկը Չիթենեաց լերան վրայ արեւելեան կողմը , զոր Ազուանից ազգէն Պանդոն անունով ճգնաւոր մը շնչած է , և Ազուանից քահանայները հոն կը բնակէին :

Պարտաւայ վանկը , որ սուրբ Աստուածածնայ անուամբ կառուցեալ էր , և Դաւթի աշարքակին մօտ էր :

Լաղանկայտուացւոց վանկը , վերսիշեալ վանկին կողմն է և Տաճիրաց ձեռքն է :

Արձափայ վանկը , ուր սուրբ Աստուածածնայ մազերը ամփափուած էր , և սուրբ Ատեփաննոսի անուամբ կառուցեալ էր :

Ամարասայ վանկը , որ յանուն սրբայն Գրիգորի կառուցեալ էր :

Ազուանք այս վանքերէն ՚ի զառ ուրիշ վանքեր ալ ունէին Առաւենից վանքերուն մօտ , որ Երուսաղէմի շուկաներուն մէջն էր . որոնց տեղերը այժմ Տաճիկները գրաւած են , և յայտնի չէ մեզ :

Վախէս Լաղանկայտուացին կը գրէ նաեւթէ Յուստիանոսի որ և Յուստիանոսի կայսերութեան ժամանակը Յունաց պատրիարքունք նախանձելով Հայոց և Ազուանից վանորէից վրայ , որը հարիւրէն աւելի կային , ձեռնադրութիւնը արդիւցին այս վանքերուն մէջ . ուստի Հայոց նախարարներն և իշխանները վերատին ազատեցին զանոնք Յունաց բռնութեան ձեռքէն . և հօմը կենդինար դրամ հատուցին Յուստիանոս թագաւորին , որ 70.000 դահեկան կընէ . բայց

յեաոյ մերացինք անհստանալով մերստին երեսի
վրայ մնացին վանքերը, և շատերը յափշտակե-
ցան օտարներէն:

Ստորագրութեան սուրբ Տեղեաց և վանաց, որոնց ա-
ռեւակները շարու ի'երեմին:

81

Այս վանքերէն ՚ի զատ ուրիշ աւերակ և
կամ այլազգիներէն յափշտակեալ վանքեր ալ
ունեին Հայք, որոնցմէ մէկն է սուրբ Յակոբայ
վանուց հիւսիսային կողմը, ճամնապարհին վրայ
հնաշէն քայքայեալ եկեղեցին, որ Յամբայ ա-
ռաքելոյն տունը կը կոչեն. և հիմայ այլազգիք
իւրացուցած են. և 1866 ին նորոգեցին արտա-
քին պատերը և դուռ մ'ալ կախեցին, բայց
վրան բաց է տակաւին և կիսաշէն կը մնայ:

Իւզարերից վանքը, մերսիշեալ վանուց հիւ-
սիսակողմն է, որ այժմ պարտեղ է մեր ձեռքը:

Երբորդ՝ սուրբ Յակոբայ վանուց դարձեալ
հիւսիսակողմը սակաւ ինչ դէպ յարեւելս է
Ետքուո՞ի ըստուած վանքը որ Անդղիոցւց եկե-
ղեցւոյն կից է, և այս վանքիս համար Ասորուց
ազգին էր կը ըստեն:

Առաջ Քարութեան արեւելեան դռնեն եւ-
լելով, և սակաւ ինչ յաւաջանալով, հին կաշե-
տան (թասպարհանե) մէջ առանձին գործարան
մը կայ այլազգաց ձեռքը, որ այժմ բոլորավին
աւերակ է, և ժամանակաւ մեծ եկեղեցի մըն էր

կ'ըսեն յանուն սուրբ առաքելոյն Պետրոսի, և
կ'աւանդեն թէ նոյն առաքելոյն բանտն էր:

Առեթ շուկայ ըստած վաճառանոցին դէպէ ՚ի
արեւելք սակաւ ինչ յառաջանալով Վատթէսա
աւետարանցի սունը կայ որ այլազգաց մզկիթ էր
և այժմ դասարան եղած է, և շատ հնաշեն է.
Հոն գրած է աւետարանի Եպրայեցի լեզուաւ.
և այս Եղուանից վանկերէն մէկը կը կարծուի
ըլլալ: Եյս վանուց մերձ է Երգարու կմոջ Հե-
ղինէի տունը, որ այժմ այլազգեաց ձեռքն է,
և իրենց աղքատաց համար ապօւր կ'եփուի
մէջը:

Հռովմէադաւան Հայոց եկեղեցւոյ համար
առած տեղւոյն արեւելեան կողմը աւերակ մը
կայ, որուն մէջ երեք խորաններ կը տեսնուին,
այն է սուրբ Վատաւածածնոյ անուամբ կառու-
ցեալ վանքը, ուր տեղի համար կ'ըսուի թէ,
Յիսուս խալք ուսը դէպէ ՚ի Դողքովմայ գացած
ժամանակը Վարիամը Վարիամանոյ հետ գալով
այն տեղնատաւ, մինչեւ որ իւր Վիածին որ-
դին քերին աչքին առաջէն անցուցին, ուր տեղ
որ սրաէ ՚ի սիրտ խօսեցաւ իւր Վիածին որդ-
ւոյն հետ: Եյս տեղս հիմայ տաճկաց ձեռքն է:

Վերսիշեալ տեղէն սակաւ ինչ յառաջանա-
լով՝ Պիղատոսի պարասն է, ուր որ ձեռքը լը-
ւալով ասաց. «Քաւեալ եմ ես յարենէ արդա-
րոց՝ դուք դիտէք ո. և ժողովուրդը պատաս-
խանեց՝ թէ «արիւն դորա ՚ի վերայ մեր և ՚ի
մերայ որդւոց մերաց, ՚ի խաչ հան զադ»: Եւ
այս տեղ մզկիթ մը կայ, որ առաջ մեծ ու հլո-

չակաւոր վանք է եղեր . և | ատինաց Առողջութեան և Պօնիքակիսա պատմիչները կը գրեն , թէ Պիղատոսի պալատին մեջը հռչակաւոր վանք էր և Պիղատոսի և Հիւսւսի պատկերները պատմին վրայ նկարուած տեսած են աւերակութեան ժամանակ :

Պիղատոսի պալատին հիւսիսակողմին է Ճերովդեսի տունը , որ այժմ աւերակ է : Եւ կը գրէ | ատինաց Անսելմոս պատմիջը , թէ Ճերովդեսի տան տեղը մեծ վանք էր , և թէ ինքն ալ ականատես եղած է անոր հին պատկերներուն՝ աւերակութեան ժամանակը , բայց ո՞ր թուցն ըլլալը յայտնի չէ մեզ :

Յովակիմ Աննայի տան հիւսիսակողմը տակաւ ինչ դէպ յարեւմուտս քաղաքի պարսպին մօտ է Վիմնն փարիսեցւոյն տունը , որ այժմ այլազգի բրուտներ կը բնակիմն : Այս տեղւոյն համար կը պատմեն՝ թէ | ատինաց Կոթոֆրեատոս թագաւորը մեծ ու հռչակաւոր վանք մը շինել տուաւ յատուկ եկեղեցիով՝ որու խորանները ըստ մասնեայ կ'երեւին : Եւ այս այն Վիմնն փարիսեցին է , որուն համար կը գրէ Աւետարանիջ . “ Աղաչէր զնա ոմն փարիսեցի , զի ճաշ կերիցէ ընդ նմա . և մտեալ ՚ի տուն փարիսեցւոյ բազմեցաւ , և կին մի էր ՚ի քաղաքին մեզաւոր , բերեալ շիշ մի իւղոյ ու և այն . (Պ. 36.) թէպէտ այս փարիսեցւոյն անունն ալ Վիմնն է , բայց Վիմնն բորոտը չէ , որուն տունը Բեթանիա գիւղն է , այս փարիսեցի Վիմնը երուսաղէմացի Ճրէից գիտուն բարբիներուն մէկն էր :

Պիղատոսի պարստին մօտ ճանապարհի հարաւային կողմը փոքրիկ դուռ մը կայ, որ այլ ազգեաց տուն է. ներս մտած ժամանակ հնագոյն փոքր եկեղեցի մը կայ գմբէթեայ, որ է Յիսուսի բանաօր, բայց ովլ շինելը յայտնի չէ:

Ա երսիշեալ տունին գիմացն եղած փողոցէն սակաւ ինչ դէպ ՚ի հիւսիսակողմը ընթանալով, որուն ձախակողմը անել ճանապարհ մը կայ, անոր ծայրն է Խւղարերից վանքը, և գմբէթեաց եկեղեցի մը ունի շատ հնաշէն, որ այժմ այլ ազգեաց ձեռքն է. և քրիստոնեայ ներս չեն ընդունիր, մանաւանդ տէրունական ուխտաւորք:

Հայոց կորսնցուցած վանքերուն մէջ նշանաւոր է նաեւ Կըռուսաղէմի արեւմտեան կողմը Յովհաննու Շօնունդ ըստած գիւղին մէջ, որ Լեռնակողմն ալ կ'ըստի, Կըղիսարէթի տունը, որ առաջ մեծ հռչակաւոր վանք էր. և ըստ Հաննա վարդապետի պատմութեան, 348 տարի առաջ շատ միաբանութիւն եմք ունեցեր այս նշանաւոր վանցուց մէջ. բայց բարբարոս արաբացիներէն սաստիկ նեղութիւններ կրելով չեն կարողացեր հանդուրժել. ուստի թողեր վանքը Կըռուսաղէմ փախեր են, և արաբացիք գալով նոյն վանքը քանդեր են, որուն մէկ կրտորը մինչեւ ցարդ կը մնայ, բայց Տաճարի տեղը աւերակ է:

Այս վանքէս կէս ժամ հեռի դէպ ՚ի արեւմտեան հարաւակողմն է սրբոյն Յովհաննու Անապատը, որ վլմախոր այր մն է, և այրին տակը աւաղան մը կայ, ուրիէ քաղցր և բարեհամ ջուր

մը կը բզիսի . և այրին վրայ վանդին տեղն է , յա-
նուն Յովհաննու Կարապետին , և շնութեան
պատերը կ'երեւին տակաւին , բայց որ ազգին
ըլլար յայտնի չէ , սակայն և այնպէս ամէն քրիա-
տոնեայք կ'երթան ուխտ և երկրսպագութիւն
մատուցանելու սահմանեալ ժամանակին :

Արագրութիւն ու կատարելուաց և պատմական գեղեցաց
որոնք մինչեւ շարու յայդնի կ'երեւին :

Սիօնի ջերմատունը :

82

Երտաքայ քաղաքի պարսպին հարաւակողին է .
Վիօնի վերնատունը , ուր տեղ նախ հանգեաւ
տապանակ ուխտին Դաւթի մարդարեին ձե-
ռօք : Կը պատմեն Կատինաց պատմիչները թէ ,
այս Վիօնը Վարկոսի տունն է , որ եօթանատուն
աշակերտաց մէկն էր , և ըստ այլոց Յովսէփ ա-
րեմաթացւոյն տունն է : Հոս խրկեց Յիառու-
թւր աշակերտաց մէջէն Պետրոսը և Յովհան-
նեսը , որոնք գալով զատկական գառը պատրաս-
տեցին : Այս տեղս կատարեց Յիառուս հին օ-
րէնքը , և հաստատեց նոր օրէնքը , և զատկա-
կան գառը կերաւ , խոնարհեցաւ աշակերտաց
ստքերն ալ լուաց , և փրկարար խորհուրդը սահ-
մանեց : Այս տեղս զրկեցաւ Յուդայ խրարիով
ասցին աշակերտաց գատէն , և այս տեղս հա-
ւաքելով առաքեալները առին զաւրբ Հոգին .
և այս Վիօն վերնատան մէջ թաղուեցան Դա-

ւիթ մարդարէն, և իւր որդին Առղոմօնը, և
Առղոմօնի մայրը Եւրասպէն։ Այս վանքը շատ
հուշակաւոր էր լատինաց ձեռքը, և շատ փա-
փոխութիւններէն զինի՝ այժմ մահմետականաց
ձեռքն է։

Գամացինչի ձորը, Ագարակ բրտին, և. Ճառները։

83

Վասն մղոն կամ եօթը ժամ հեռի Երու-
սաղէմէն՝ հարաւային կողմն է Գամաղիէլի կոշ-
ուած ձորը, ուր տեղ թաղեցին լլ. Ասեփաննոսի
մարմինը ըստ պատմութեան Արինոսի, և յե-
տոյ փոխեցին ՚ի Աիօն, և ուրիշ աեղեր ալ։ Ասոր
ալ հարաւակողմն է Ագարակ բրտի ըսուած տե-
ղը, որուն Կկեղդամայ ալ կ'ըսուի, և Հրէանե-
րը իրենց օտարականները հոս կը թաղէն։ Այս
այն տեղն է, զոր Յիսուսը վաճառած ստակով
գնեցին, որ Յուդայ տարաւ Տաճարին մէջ ձը-
գեց։ Այս ձորին միւս կողմը Շառներ կ'ըսուի,
ուր տեղ Հայք քանի որ գերեզմանստուն
չունէին՝ մեռելոց դիակները հոն տանելով ա-
ռաստաղէն վար մեծ սյրին մէջ կը ձգէին, բայց
այժմ աւերակ է։ Եւ այս տեղէս սակաւ ինչ
զառ ՚ի վայր իջաննելով, իբր մատուռ ձեւացած
կը կին այր կայ, որոնց մէջ մինչեւ ցարդ պատ-
կերաց նշանները կ'երեւի, այս տեղւոյն համար
կը պատմուի թէ, Յիսուսի շարքարանաց գիշերը
առաքեալներէն երեքը այս սյրիս մէջ առանձնա-
ցած էին. իսկ Յայնք կ'ըսեն թէ Անտիրիսսի
ճգնած սյրն է։

84

Այսն ճառներէն դեպ ՚ի ծորին մէջը իջանեւ-
լով յարեւմտից կողմը խարագոյն ջրհոր մը կայ,
այն է Աբբա-Հորը, որուն լատինները հոր՝ Աէ-
մայ կ'ըսեն։ Խարայէլացիք ՚ի հարելն գերի գր-
նացած ժամանակնին, քահանաները Տաճարին
հուրը բերելով այս հորին խորշերուն մէկուն
մէջ ծածուկ թաղեցին. և յետ եօթանասնա-
մեայ գերութեան Եզրաս՝ քահանայից որդւոյք
միջնորդութեամբ գտաւ, որ թանձրամած ջուր
դարձած էր միտոցի մէջ, բայց ողջակէղ մատու-
ցանելու ժամանակ հրամայեց Եզրաս որ զայն
առնեն վայտերուն վրայ ցանեն, որ արեւը
տաքցած ժամանակը հուրը խկոյն բորբոքելով
ողջակէղները այրեց։ Տես (Բ. Ամէ. Ա. 19. 21):

Եսայի մարդարէին սցոցուած տեսք։

85

Աբբա-Հորէն հիւսիսակողմը դառնալով ճա-
նապարհին վրայ որմով պատեալ թթենի մը կայ,
որուն սահկը այլազգները այժմ կ'աղօթեն. այս
ուեզս սլոցեցաւ Ետայի մարդարէն Վանասէ
թագաւորէն, և հոն թաղեցաւ, որ է Վելսվա-
մայ աղբիւրին դիմացը, ինչպէս Յայմաւուրքն
ուլ կը պատմէ, Վայիս 19։ Կըսուի թէ ասոր
մօտ սուրը Աստուածածնայ անուամբ կառուց-
եալ վանիք մը կար, որուն շնութեան հիմնենքը
մինչեւ ցայսօր կ'երեւին. բայց յումմէ շնուիլը
կամ որքրիսանեայ աղգին ըլլալը մէղ յայտնի չէ,

Յ 6

Այս աւերակ վանքիս լեռան ստորառը հիւ-
սիսակողմը գնալով տակաւ ինչ, կը գտնես բուն
Աելովամայ աղքիւրը։ Այս Աելովամը Ուսիսակ
երբոր Լոռուսաղէմը պաշարած էր, և ժողովուր-
դը շատ կը նեղուէր՝ ջարփի համար, և սայի մար-
դարէին խնդրանօք Աստուած առաքեց այս յոր-
դահոս ջուրը։ Տես Յայսմաւուրին՝ Ո՞յսիս 19 ին
մէջ. և այս աղքիւրին ջուրը մինչեւ ցարդ կը
բղիւէ. և շատ օգտաւէտ է։ Հոս խրկեց Յի-
սուս կոյրը, որուն աչաց վրայ կաւ գնելով ողառ-
ուիրեց որ Աելովամայ աղքիւրը երթայ լուա-
ցուի, և երբոր լուացուեցաւ՝ խկոյն աչքերը
լուսաւորեցան. (Յու. Թ. 1. 17)։ Եւ Աելովա-
մայ աղքիւրին վրայով բլուրին գլուխը մեծա-
մեծ շինութեանց աւերակներ կ'երեւին, որոնց
համար կ'լսուի՝ թէ Ասղոմօն պալսա շինեց
իւր թագուշիներուն համար, և կուոց տաճար-
ներ ալ հան կանգնեց, զորս Յովսիս թագուտորը
կործանեց, և հողերը Կեթէլ լեցընել տուաւ։

Աստուածանի նեշման տեշը։

Յ 7

Աուրը Աիօնի և մեր Փրկչի վանքին մօտ Յու-
նաց գերեզմանատան չոր պատին մէջ տեղը նը-
շան գրուած քար մը կայ, ուր տեղի համար կ'ը-
սեն թէ սուրբ Խուսի տունն էր, և Քրիստոսի
համբարձմանէն եաբը տասն և չորս տարփ հան-

Նառաւ և հսն աւանդեց իւր մաքուր հոգին :
Եւ այս սուրբ տեղս յառաջագոյն վանք էր, և
շատ հաւանական է որ Վզուանից պատմութեան
Արիցավանքը ըստած վանքը այս էր՝ Դաւթի դը-
րան մօտ և յանուն սուրբ Վասուածածնայ . Նը
շան դրուած քարին վրայ խաչի նշաններ կան :

Հակայից ձորց, Յուդայի գիւց:

88

Երուսաղէմի արեւմտեան կողմը Վիօնէն սա-
կաւ ինչ յառաջանալով՝ Հակայից ձորը կ'իջնը-
ւի, ուր Վովսէսի լրանեները գալով հականեր
տեսան . “ Տեսաք անդ հակայս , և էաք յաջ նո-
յա որպէս մարտիս ” . (Թագ . ԺԳ . 34) : Վոր
կամուրջէն և ցամաք աղբիւրէն անցնելով և քիչ
մը գնալով գէպ ՚ի հարաւ , ճանապարհի ձախա-
կողմը աւերակ գիւղ մը կայ , որուն Յուդայի
գիւղ կ'ըսուի . հոս խորհուրդ լրին քահանայա-
պետները Յիսուսը բռնել տալու համար , և
ըստ Կայխափիս քահանայապետ , թէ և լաւ է
մեզ զի այր մի մեռանիցի ՚ի վերայ ժողովը
դեանս և մի ամենայն ազգն կորիցէ ” . (Յու . ԺԱ .
50 .) . և այս գիւղս Յոյնք գնելով՝ սյժմ անսնց
ձեռքն է : Վյա տեղէս ուղղակի երթալով Ճա-
նապարհին վրայ հոր մը կայ , ուր մոգերը ե-
կան ասողին առաջնորդութեամբ և նոյն տեղը
ծածկուեցաւ աստղը : Վսկէ քարընկէց մը հե-
ռի աւերակ վանք մը կայ յանուն Վմբակումայ
մարդարէին . վասն զի Վարիանոսի պատմութեան
մէջ կ'ըսէ , թէ Վմբակում մարդարէն իւր հըն-

ձողներուն հաց և թան տարած ժամանակը ,
այս աեղես հրեշտակը իւր մաղերէն յանկարծ
բռնելով Իարելոն Դանիէլի գբոյն վրայ իջե-
ցոց , ու ձեռքի հացն և կերակուրը անոր յանձ-
նել տուաւ . . և յետոյ դարձեալ իւր տեղը դար-
ձուց :

Սուրբ Եղիոյի չոնքը :

89

Այս ճանապարհի ձախակողմը կ'յնի սուրբ
Եղիոյի վանքը , որ առաջ Արաց էր և հիմայ
Յունաց ձեռքն է . Կըսուի թէ Եղիա մարդա-
րէն Յեղաբելի ձեռքէն փախած ժամանակ՝ այս
տեղը եկաւ նատաւ բեւեկնի ծառին տակը , և
քունը տարած ժամանակ հրեշտակն Աստուծոյ
հաց և կերակուր բերաւ իրեն , զոր ուտելէն
յետոյ քառասուն օր ճանապարհորդութիւն ը-
րաւ :

Աշտարակը , Հոտքէի գերեզմանը :

90

Սուրբ Եղիոյի վանքէն կէս ժամհեռի՝ ճա-
նապարհին ձախակողմը աւերակ մը կայ , ոյն է
Աշտարակը , ուր որ Յակոբ նահապետ Ոիջա-
գետէն դարձած ժամանակ իջեւանեցաւ : Ասոր
ձախակողմը Հռաքէլի գերեզմանն է , ուր եր-
կունքը բռնելով ծնաւ զի՞ենիամին , և մեռնե-
լով ի ծննդեան խրում՝ թաղեցաւ այս տեղս ,
որուն շիրմին վրայ Յակոբ նահապետ արձան
կանգնեց , և հիմակ ալ գմբեթաւոր շէնք մըն
է և Տաճկաց ձեռքն է : Ալ պատմէ Մարինոս՝

թէ այս տեղս Հեղինեհն շինուած վանք կար ,
բայց անունը անցայտ է :

գետաձագ գլուխ:

91

Հռաքէլի գերեզմանէն դէպ ՚ի արեւմնւոք
տասն և հինգ րոպէ հեռաւորութեամբ Պէտ
ճաղայ գիւղն է , ուր տեղէր Արխաթարայ քա
հանային տունը : Այս տեղ ՚իաւիթ առաջաւո
րութեան հացը կերաւ . (Ա թագ . Էմ . 6 .) :
Այս գիւղիս բնակիչները քրիստոնեայ են , և
ունին փոքրիկ եկեղեցի մը յանուն Կիլողայոսի
հայրապետին . և գիւղին ծայրն է | ատինաց նո
րաշէն վանքն ու ճեմարանը . նցնալէս Յոյնք ալ
ունին եկեղեցի և վանք :

Դաւիթի ըրբորը :

92

Հռաքէլի գերեզմանէն մինչեւ ՚իաւթի ջրը
հորը տասը րոպէ հեռու բարձրաւանդակ տեղ
մի է , ուրիէ կերեւի Շեթլէմ քաղաքը : Այս
հորի ջրոյն մարդարէաբար ցանկացաւ ՚իաւիթ
խմելու պատերազմին օրը . (Բ թագ . Էգ . 18 .) :

Կոշմայի եւ դամիանոսի եկեղեցին:

93

Արուսաղէմի արեւմնեան կողմը և Շեթլէ-
մէմէն գալու ատեն աջակողմը փոքրիկ եկեղե-
ցի մը կայ Յունաց , որու աեսջութիւնը Շեթ-
լէմէմցի Յոյնի մը ճեռք է , այն է անարծաթ բը-

Ժըշկացն Արդմասի և Դամիանսի: Տես ՚ի Վարս
սրբոց, Հատոր Ժ. Երես 298: Եւ ըստ Նայոց
պատմութեան, այս տեղս վանք եղած է Յու-
նաց ՈՒիքոյէլ թագաւորէն կառուցեալ:

Խաչաշանք:

94

Այսուաալէմի Յոսպէի դռնէն Ելելով, իբր
քան բոսկի չափ հեռու դէպ ՚ի արեւմուտք
երթալով ձորի մը մէջ կը տեսնուի Խաչավան-
քը, որ չափ սեանց վրայ կառուցեալ պայծառ
եկեղեցի մը ունի գմբէթեայ: Այս վանքիս
համար կըսուի թէ Յունաց Ներակլ կայսրը
Պարաից գերութենէն խաչը ետ դարձուցած
ատեն այս տեղ իջեւանեցաւ, և լուսոյ կամա-
րը տեսաւ խաչին վրայ. ուստի ՚ի պատիւ սուրբ
խաչին յիշեալ վանքը շինեց և Խաչավանք ան-
ուանեց: Այս վանքս առաջ Վրաց ձեռքն էր,
խակ այժմ Յունաց ձեռքն է. եկեղեցին շատ
հին է՝ ինչպէս կը ցուցընէ իւր պատկենները, որ
պատերուն ծեփին վրայ նկարուած են ըստ հին
սովորութեան: Նոս է նաեւ Յոյն միաբանու-
թեան յառանգաւորաց դպրոցը, որ քանի մը
տարիէ ՚ի վեր հաստատեցին,

Յաշիաննու Տնունդ:

95

Խաչավանքէն դէպ ՚ի արեւմուտք երկու
ժամ հեռու գիւղ մը կայ, որ Յուդայի քաղաք
կըսուէր առաջ ըստ Վուկաս աւետարանի.

և այս քաղաքիս մէջն էր Օ պարիս քահանայաւ
պետին տունը, ուր ծնաւ առըքք Յովհաննէս
կարապետ մկրտիչ Տեառն մերս : Եւ այս տեղ
վանք մը կայ լ աստիճաց ձեռքը, որուն եկեղեց-
ին ըրս քառանկիւնի սիւներու վրայ կառուց-
եալ է գմբէթաւոր, և աւագ սեղանին աջ կող
մը եօթը աստիճան վար Յովհաննու կարապե-
տի ծննդեան տեղն է, ուր պատարագամատոյց
սեղան մը կայ : Անի շատ սենեակներ, հիւրա-
նոց, յատկացեալ կրօնաւորներ Ֆրանչիակեան
կարգէն :

Փիլիպոս ազրիւրը:

96

Փիլիպոսի աղբիւրը Յովհաննու ծննդեան
դիւղէն դէպ հարաւակողմը մէկ ու կէս ժամու-
չափ ճանապարհ գնալով, փոքրիկ բլսակի մը վը-
րայ կը տեսնուի, որ անուշահամ ջուր մը ունի :
Երուսաղէմին մինչեւ այս աղբիւրս, ուր ներ-
քինին մկրտեցաւ Փիլիպոս առաքեալէն, երկու
ժամու չափ ճանապարհ է . և այս աղբիւրիս վը-
րայ եղած պարտէզը աղբիւրով մէկտեղ հոգե-
լոյս Օ միւռնացի Յովհաննէս Պատրիարքը 1858
թուականին գնեց Ֆէլսահներէն, և այժմ մեր
ձեռքն է :

Սուրբ Փրկչաց վտանք:

97

Երուսաղէմի հարաւային դռնէն դուրս ել-
ելով քան քայլաչափ հեռու սուրբ Փրկչաց
վանքն է Հայոց բարձր պարսպով պատած և

երկաթի փոքր դրամք . ունի եկեղեցի մը մէկ խորանով , որու տակն է կափարիչ վէմք Յիսուսի գերեզմանին : Այն խորանին հարաւային կողմը մը փոքրիկ մատուռ մը կոյ նեղ , որ է երկրորդ բանտն Յիսուսի , և ունի սեղան պատարագամատոյց . աւագ խորանին ետեւի կողմն է պահարանը յատուկ սեղանով . և եկեղեցւոյն բակը դարձեալ պատարագամատոյց սեղան մը կոյ սուրբ Չարչարանաց անուամբ : Այս վանքս Կայիսարաց քահանացագետին տունն էր . ուր տեղ չարչարեցին նախառեցին և բանտարկեցին կենարարն մեր Յիսուս : Պետրոս այս տեղս ուրացաւ զ Յիսուս Երեք անգամ , և խկոյն հաւը խօսեցաւ . (Ղ. մ. ԻԲ . 54) : Այս տեղս դարձեալ զզնաց Պետրոս իւր ուրացութեանը վրայ : Այն վանքիս մէջ կը թաղուին սուրբ Աթուոյս հանգուցեալ Պատրիարքները , Առաքարաները , և ուրիշ բազմաշխատ Եպիսկոպուները :

1849 թուականին՝ Կիրակոս սրբազնն Պատրիարքը նորոգեց , յատուկ սենեակներ աւելցրնելով միաբանից համար : Փրկչավանուց հիւսիսակողմը ձիթենեաց պարտէղ մը կոյ Հայոց , և արեւմտեան կողմը գերեզմանատուն է բոլոր քրիստոնէից , և անոր մէջն է Բագոսի դամբանը ցանկով մը պատած , որուն այլագգեպ կ'իշխեն :

98

Նեղեղատի աղբիւրը՝ Անլովամեն դէպ ՚ի
հիւսիսակողմը ձորին մէջէն գնալով սակաւ ինչ
կամուրջ մը կայ, զոր շղթայակիր Գրիգոր հայ-
ռապեան նորոգեց Նայոց Ածած թուականին,
որուն արեւելից կողմը ջրհոր մը կայ և փոքր
պարակղ մը՝ որ Նայոց ձեռքն է. և այս կամուր-
ջին սակը երանելի Յակոբ Տեառնեղբայր Ար-
դար առաքեալը ընդունեց իւր մարտիրոսական
պատկը անխիղճ թափչաց ձեռքով իւր գլուխը
ջախջախուելով աշտարակէն վար գահավէժ ը-
նելինէն յետոց, ինչպէս որ Յայմաւութք կը գրէ
գեկտեմբեր 24.

Անգե ու. Զաքարիա մարգարէից գերեզմանները:

99

Վ Երոյիշեալ կամուրջին վերի կողմը դէպ ՚ի
Զիթենեաց լերան դին վիմատաշ քառանկիւ-
նի սրածայր արձան մը կը տեսնուի, որուն մէջ
թաղուած են Անդէ ու Զաքարիա մարդարէ-
ները. (Բ. Անայ. 20.) :

Տեառնեցք որ այրը,

100

Վ Երոյիշեալ արձանին աջակողմը այր՝ մը կայ,
որուն գաւիթը երկու քարեայ սեանց վրայ յե-
ցեալ է դէպ ՚ի արեւմուտք, և այրին լուսա-
մուտները կամուրջին կը նային: Այս այրիս մէջ

առանձնացաւ Տեառնեղբայր առաքեալը Յակոբ՝ Յիսուսի չարչարանաց գիշերը, և երդուառն ուտել և ոչ ըմպել մինչեւ Յիսուսի յարութիւնը տեսնէ : Եւ իր պատմե Յայսմաւուրը ‘Դեկտեմբեր 25ին՝ թէ յետ յարութեան, Յիսուս հոյ և սեղան բերաւ այս այրին մէջ և միսիթարեց իւր եղբայրը բաելով . “ Ան’ եղբայր զհացու, զի որդին մարդոց յարեաւ ՚ի մեռելոց” : Իսյց այս սուրբ տեղս այժմ աւերակ է, և փարախս ոչխարաց :

Արխմոցոմայ արձանը:

101

Վերոյեալ կամուրջին արեւելեան կողմը քառանկիւնի վիմատաշ լուսամոռով գմբէթի ձեւ արձան մը կայ, որուն գլուխը սիւնածեւ միահատոր քար մի է, և կըսուի թէ Աքիսողոմաց գրոշեալ ձեռքը գրուած էր այս արձանին վրայ . և մանաւանդ Աքիսողոմ զաւակ չունենալուն համար՝ ՚ի յիշատակ անուան իւրց այս արձանը կանգնեց, որ իւր անունը չմոռցուի . (Բ. թագ. Ճ. 18):

Յոշտափոյնու գերեզմանը:

102

Աքիսողոմաց արձանի աջակողմեան անկիւնը արեւելից կողմը վիմափոր մեծ այր մը կայ, որուն գուռը շատ գեղեցիկ արուեստիւ քանի գակուած էր, բայց 1854 թուականին Հրէայները այս այրին գուռը մեծամեծ քարերավ գու-

ցեցին, և վիմլին հաւասար պատելով դուռը
անհետ ըրին որ մարդ ներս չմտնէ . այս այրիս
մէջն է Յովափաթման թագաւորին գերեզմանը .
և այս գերեզմանիս համար է որ ձորին անունն
ալ Յովափաթմու ձոր կը կոչուի, որ առաջ Կեդ-
րոնի ձոր կ'ըսուեր :

Հայր Սարայի չանքը :

103

Կեպ ՚ի Աբբայ հոր գառնալով ձորամիջաւ
և անկէ դէպ ՚ի հարաւ երեք ժամու ճանա-
պարհ է Հայր Աբբայի վանքը . և ճանապարհին
վրայ սուրբ Խէոդորոսի անունով վանք մը կայ
որ աւերակ է : Այս տեղէս անցնելով կ'երթայ
ձորոյն այն կողմը լեռան մէջ՝ ուր տեղ վանք մը
կայ և վաներին տակը այր մը , որուն մէջ աղբիւր
մը կայ բարեհամ, և վանքն է մեծագիր քարա-
շէն, և երկու բուրգեր ունի, և ութը եկեղեցի,
առաջին եկեղեցին է Աբբայի, երկրորդ եկեղե-
ցին յանուն սրբոց Քառասնից մանկանց, եր-
րորդը՝ սրբոյն Յովհաննու Կարապետին, չորրոր-
դը՝ յանուն սրբոյն Վէորդայ , հինգերորդը՝ սրբ-
ոյն Յովհաննու Ոսկեբերանին, վեցերորդը՝ սրբ-
ոյն Ամենակայտոսի , եօթերորդը՝ Յովհաննու
Դամասկացւոյն , ութերորդը՝ սրբոց Առաքելոց,
որ Հայոց նախարարներէն շինուած է , բայց այժմ
բոլորովին քանդուած է : Այս Հայր Աբբայի
ըսուած վանքը՝ նախ Աբբայէն շինուեցաւ , երկ-
րորդ՝ Կիու Ուանուելէն նորոգեցաւ ամուր պա-
րիսակներով . և շատ ալ սենեակներ ունի , նա և

սեղանատուն, եւ այլն։ Այրեմին Վրաբացիք շատ
կրօնաւորներ նահատակեր են այս տեղս։

Յովհանն Դամասկացին՝ որ Յունաց երեւելի
վարդապետներէն մէկն էր, այս տեղս մնալով,
քանի մը գրեանիք յօրինեց և յարութեան եր-
գերը խօսեցաւ։ Կը պատմուի թէ այս վանքս
առաջ Առֆաց էր, բայց այժմ Յունաց միա-
բանները կը բնակին. չենքը շատ փառաւոր է,
և արտաքոյ վանուցս հարաւակողմը գմբէթ մը
կայ, որուն տակն է սրբոյն Ասքայի գերեզմա-
նը, որ 531 թուականին վախճանած է։ Եւ լա-
տինաց Աստղիվոլոս պատմիչը կը գրէ, թէ սուլ-
թան Վելիմ Վրուսաղէմի տիրած ժամանակ, իւր
կառավարիչներէն մէկը Վրուսաղէմ խրկեց իբր
այցելութիւն մը ընելու. բայց նոյն այցելուն որ
անգութ մարդ մը էր, Հայր Ասքայի կրօնաւոր-
ներէն հաղարի չափ թրէ անցուց, որոնիք իրեն
տեսութեան եկած էին, և միայն քան հոգի
ապրեցնելով անսնցմէ՝ իրենց տեղը խրկեց։
Ո երսիշեալ պատմիչը կը յաւելու, թէ նոյն
անգութ իշխանին ներկայանալով ինքն ալ, կո-
տորածին պատճառը հարցուց, որուն պատաս-
խանեց իշխանը, թէ սցանափ քրիստոնէին մէկ
տեղ բնակիլը աղէկ չէ մեր տէրութեան, ուս-
տի սկէտք է նուազեցընել։ Եւ Արինոս պատ-
միչն ալ առաջին գրքին ութերորդ գլուխն մէջ
կը հաստատէ վերսիշեալ վանուց բազմաթիւ
կրօնաւոր ունենալը. և Յովհանն Դամասկացւոյն
ժամանակը կը ըսէ, նոյն վանքին մէջ հաղորէն
աւելի կրօնաւորներ կը բնակեին։

104

Երուսաղէմաց հիւսիսային կողմը սակաւ ինչ
հեռանալով բարձր վէմ մը կայ, և անոր տա-
կը տուն մի, և աջակողմը այր մը որ վիմափոր
է, և ձախակողմը քանի մը Տաճկաց գերեզ-
մանատուններ կան. այս տեղս շրջապատեալ
է պարսպաւ, ուր կը նստի տեփիշ մը, և այրին
ճանաօրարհին վրայ թղենիներ կան որոնց տակը
ննջեց վախտուն և ութ տարի Երեմիա մարդա-
րէին աշակերտն Աբդիմէլէբը, և այս է Աքա-
րակն Ագրիալպաց ըստածը, ինչպէս Յայսմա-
ւուրն ալ կը պատմէ՝ 'ի մայիսի մէկ : Շաբելոնի
գերութեան ժամանակ, կըսէ, խրկեց զինքը
մարդարէն որ թուղ բերէ հիւանդաց համար .
ան ալ կթոց մը թուղ քաղելով դրաւ գլխուն
տակը, որ քիչ մը քնանայ . և այս քունը վախ-
տուն և ութ տարի քշեց . Երբ արթնցաւ աշ-
խարհք փախուած գտաւ, բայց թուղերը դեռ
դալար էին :

Թագաւորաց գերեզմանը:

105

Վ երոյիշեալ տեղէն սակաւ ինչ դէս ՚ի հիւ-
սիսակողմը երթալով, վիմափոր այր մը կայ, ո-
րուն դաւոր ճարտար արուեստիւ քանդակուած
է . և այս է թագաւորաց գերեզմանը, որուն
մէջ բազմաթիւ փոքրիկ խորշեր կան քարափոր, ո-
րոնք են գերեզմանիք իւրաքանչիւր թագաւորաց :

106

Երուսաղէմէն մինչեւ Չամլիջէ գիւղը ուր
հնագոյն աւերակ եկեղեցի մը կայ, Յ ժամ է .
և ասկէ մինչեւ Այս.քար Շ ժամ, որ ընդ ամենք
տասը ժամ կը ընէ : Այս Այս.քարի ճանապարհին
վրայ աղբխոր մը կայ, որուն համար կը գրէ Յով
հաննէս աւետարանիցը թէ՝ “ Եւ Յիսուս վաս-
տակեալ ՚ի ճանապարհէն, նատաւ ՚ի վերայ աղ-
բերն, և էր ժամ իբրեւ վեցերորդ, և անդ էր
ջրհորն : Վայ կին մի Սամարացի հանել ջուր,
և Յիսուս խնդրեաց ՚ի նմանէ ջուր, և խոստա-
ցաւ տալ նմա զջուրն կենդանի : և կինն խընդ-
րէ զի մի երբէք ծարաւիցի ՚ի յաւիտեան ու եւ-
այլն :

Այս տեղէս մինչեւ Խորսոցէլացւոց արքայանիաս
քաղաքն Սամարիա երկու ժամ է . և այս Սամա-
րիա քաղաքիս մէջ Հայք եկեղեցի մը ունէին,
որ այժմ այլաղգեաց ձեռքն է . և այս տեղէս
կէս ժամ հեռու է Վերաստիա գիւղը, ուր-
տեղ է Յովհաննու Վկրաչի բանար և ըստ ո-
մանց գերեզմաննը, որ ՚ի Վակերովդ նահատա-
կեցին : Կայ հու ուրիշ եկեղեցի մալ, բայց
այժմ աւերակ է : Այս տեղս է նաեւ Եղիսէի
և Աբգիու մարգարէից գերեզմանները՝ ըստ
Հերոնիմոսի վկայութէան : Այս կողմերս է
դարձեալ Այս.քէմը, ուր ամփափեցին Յակոբաց
որդւոյն աղջախան Յովհէ վայ ուկորները :

107

Ասմարիայէն մինչեւ Կային քաղաքը՝ որ հետ
մայ Ճինին կը կոչուի, վեց ժամ է։ Այս քա-
ղաքիս դրանը առաջը յարոց Քրիստոս ՚ի մե-
ռելութենէ այրի կնկան միամօր որդին . (Վահ. 15.) :

Թափօրական շեռը:

108

Թափօրական լեռը Գալիլեյի դաշտին մէջ
կանայ գիւղին մօտ է, Կաղաքէթ քաղաքէն ե-
րեք ու կէս ժամն չափ հեռաւորութեամբ, որ
բոլորակ բարձրաւանդակ ծաղկաւէտ լեռ մի է,
և այս լեռան վրայ պայծառակերպեցաւ Քրիս-
տոս Տէրն մեր ՚ի տես երից սրբազն Առաքե-
լոց . եւս և Խովսէսի և Հզիայի ներկայութեամ-
բը հաստատուեցաւ նորա Աստուածութիւնը՝
կենդանեաց և մեռելոց : Այս լեռանս վրայ ե-
րեք եկեղեցի կային, որոնց հիմերը մինչեւ ցայս-
օր կ'երեւին, և այժմ եւս Ոտւսաց ազգը եկե-
ղեցի և բնակութիւն կը շնիէ։ Եւ այս դաշ-
տիս մէջ փոքր բլուր մը կայ, որ Արանելի լեռ
կը կոչուի . այս այն լեռն է՝ ուր Քրիստոս տէրն
մեր գիշեր մը ազօթեց, և առաւօտեան աշա-
կերտները կոչելով երկոտասան առաքեալները
ընարեց . (Վահ. Զ. 19.) : Այս լեռան արե-
ւելեան կողմը աւերակ եկեղեցի մը կայ, և Յա-
կոբ նահապետի Ծովսէփ որդւոյն նետուած ցա-

մաք հորն ալ այս տեղէ, ուրիշ հանելով իւր
եղբայրները՝ Ապիսնացւոց վաճառեցին. (Օհ.
1.2.22, 24.):

Նազարեթ բացարք, Տիբերիա, և Բելսայիլա:

109

Նոյին քաղաքէն մինչեւ յիշազարէթ 6 ժամ
է, ուր Գաբրիէլ հրեշտակապետ սուրբ Կուսին
աւետիս տուաւ. (Ղուկ. Ա. 26): Այս տեղ
է Ատուածահայր Յավենիաց տունը, որ փառա
ւոր վանիք մի է Ատինաց ձեռքը. այս տեղու է
և այն աղբիւրը, ուր սռւրբ Կյան աւետիս ըն-
կալաւ. ի հրեշտակապետէն. դարձեալ հոս է
այն տունը՝ ուր տեղ Փրկիչն մեր Կասյի մարդա-
րէին գիրքը կարդաց. (Ղուկ. Դ. 17): Այս տեղու
է Արտեւան լերինը, ուր կենարարն մեր Յիսուս
դահավեժ ընելու համար հանեցին. (Ղուկ. Դ.
26). և այս տեղւոյս մերձ է Կանա Գալիլեայ
կոչուած տեղը, ուր Քրիստոս Տէրն մեր հար-
սանիք հրաւիրուելով՝ հն ջուրը գինիի փոխեց,
որ հրաշեց սկիզբը եղաւ. (Յով. Բ. 11):
Այս կողմերս է Տիբերական ծովը, ուր Յիսուս
փրկիչն մեր տեսաւ Պետրոսը, և անոր եղբայրն
Անդրէասը. և Օերեգեայի որդիքը Յակոբոսը
և Յովհաննէոր, որոնք ձուկ կ'օրասցին, և իրենց
գործիքը ձգելով Յիսուսի ետեւէն գնացին.
(Ապէ. Դ. 18. 22): Այս քաղաքս Հերովդէս
շնեց ի պատիւ Տիբերեայ կայսեր. Ուստի այս
քաղաքիս Ակիթսացիթան, որ Պետրոսի, Անդրէ-
ասի, Փիլիպպոսի և Յովհաննէի առաքելոց ձնըն-

զեան քաղաքն է . և այս տեղ հինգ հազար մարդ էիկ կերակրեց Քրիստոս Տէրն մեր հինգ նկանուկաւ . և երկու ձկամբը , ուսկից տասն և երկու սակառի չափ ալ փշրանիք աւելցաւ . (Կ Հ - ի . Զ . 17) : Ասեւ յետ յարութեան այս ծովուն եզերը երեւեցաւ Յիսուս Առաքելոց , ուր տեղ ցամաքին վրայ տեսան վառած կրակ և ձուկ մի անոր վրայ , և հաց . (Յով . Իւ . 9) :

Այս տեղոց Յիսուս Պետրոսին երեք անգամ հարցուց , թէ “ Ոիգե՞ս զիս Ոիմն որդի Յօնանու ” : Եւ այս սահմանաց գաւառուներուն մէջ Յիսուս շատ ախտացեալ մարդիկ բժշկեց : Հոս մօտ է նաեւ Կափառնասւմը , ուր բնակեցաւ Տէրն մեր , և բժշկեց անդամալցն և հարիւրապետին ծառայն և Ոիմնի զոքանք , և Յայրաս իշխանին գուասորը յարաց . հոս ամիսավուեցաւ կըսուի նաեւ Յովհաննաւ Ոկտոսի գլուխը , և առ ժամանակ մի մնաց :

Կարմելոս ըեռը

110

Կարմելոս ըեռը Աքեային դիմացն է , ուր կզիա Բահաղու մարդարէները ժողվեց , և Վասնի հեղեղառը իջոյց զիրենիք ու կտարեց : Այս երանս գլուխը ազօթեց մարդարէն , և առան անձրեւ եկաւ . (Գ . Թ . ա . ֆ . Ժ . Հ . 19 .) . ուր տեղ հիմայ Լատինիք վանիք մը ունին , և միարանիք Կարմելիտեանիք կ'անոււանին :

III

Պէրսութոր Ա Երիտան և Ծիւրիտան ալ կ'ըսուի,
Փիւնիկեցւոց քաղաք է, և Երուսաղէմէն ցա-
մաքաւ յիտան և վեց ժամ հեռի է. ուր վանք մը
ունիմք, որուն մէջ Ա. Եշան անուամբ Եկեղե-
ցի մը շնոււեցաւ 1851 թուականին՝ ՚ի Պատ-
րիարքութեան Տեառն Օմիւռնացի Յովհաննէս
սրբազնն արքեպիսկոպոսի. զոր ինքը գնեց վան-
քին աեղը ՚ի յիշատակ ազգիս Հայոց :

Երուսաղէմէն ութօրեայ ճանապարհ հեռի
հիւսիտակաղմք կ'իյնայ ՚Պամասկոս քաղաքը, որ
ըստ Վիխայէլի Կորւոց պատմութեան՝ Վարի-
քաս Հիւթային շնոււեցաւ՝ Վրահամու ծը-
նանելէն քսան տարի առաջ։ ՚Պամասկոսին մօա-
թագեայ գիւղմը կայ, որուն համար կ'ըսուիթէ,
Վրէլի գերեզմանը հնն է, և Վարինսի պատ-
մութեան համեմատ՝ սյս տեղ ՚Վիխայն Հեղինե-
մէծ Եկեղեցի մը շնեած է։ ՚Պամասկոսի մէջ է
նաև Վնանիա առաքելցն տունը, որ այժմ վանք
է ՚ի ձեռու լատինաց. և նոյն Վռաքելցն գերեղ-
մանը սյս քաղաքիս մէջն է, և տաճկոց ձեռքը։
Եւ մէք ևս ունիմք ՚Պամասկոսի մէջ Ա. Վարդով
անուամբ վանք մը, որ աւնի յատուկ վարժարանն,
առաջնորդարանն, հոգետուն և բազմաթիւ աե-
նեակներ։ Հայոց 1860 թուականին սցլազգի բը-
նակիչք մէծ աղմուկ մը հանելով սյս երեւելի
քաղաքիս մէջ, այրեցին բոլը քրիստոնէից տու-
ները, որոնց մէջ գանուեցան նաև ամեն քրի-

տոնելից վանդերը և եկեղեցիները, որոնք հրոյ
ճարակ եղան. և շատ քրիստոնեայներ ՚ի սուր
սուսերի մաշելով, հարթ և հաւասար ըրին քր
իստոնէից թաղերը . բայց իրաւասէրք զանիւ
րաւանյուղութիւն ածելով՝ Քրիստոսազօր բաղ
կաւ վերստին շինել տուին այլազգեաց՝ արքու-
նական դանձէն : Իրաւի այս հռչակաւոր երեւ-
ւելի քաղաքիս 1860 թուականին պատահած ա-
զետալի կոտորածն ու հրկիվութիւնը, արժան
էր մի ըստ միտքէ պարագայներով նկարագրել և
ծանօթացունել համայն ազգիս լութեան, մա-
նաւանդ յետագայից առ. ՚ի զգուշութիւն, բայց
պատմութեան կարգէն ջևասորելու համար, ա-
ւելի մանրախոյդ տեղեկագոյն գրչի մը կը յանձ-
նեմ այս աղէտալի գէպքերը նկարագրել, որ
յիրաւի անողույց սրտերն անդամ ՚ի կարեկցու-
թիւն և յողը կը շարժէ :

Սուրբ Սուելիանոսի բարեկոնման տեսք:

¶ 2

Երուսաղէմի սրեւելեան կամ Ա. Կոտուած-
ոծնի գոնէն ելլելով և տակաւ ինչ զառ. ՚ի վայր
իջանելով ճանապարհի անկիւնը իբրեւ վառա-
րան ձեւացած քար մը կայ, որուն վայ քարկա-
ծեցին սուրբն Առեփաննոս նախավկայն Քրիս-
տոսի . (Վոլք. Ե. 55) : Եւ կը պատմեն թէ այս
տեղս առաջ եկեղեցին կար, բայց այժմ միայն
ուխտատեղի է :

¶ 13

Ա. Առեփաննոսիքարկոծման տեղէն յարեւելս
սակաւ ինչ յառաջանալով ճանապարհին հիւսի-
սակողմն է Ա. Կատուածածնաց ամենափառաւոր
Տաճարը, որ ունի Երկրացիկ Երկաթեայ դուռ
և 48 աստիճաննաւ կ'իջանէ մինչւ Եկեղեցւոյն
առեանը, որ խաչաձեւ շինուած է Հեղինէ թա-
գուհին: Վ Երացիշեալ Երկաթեայ գռնէն ներս
մոտած ժամանակ քարով հիւսուած դռներ կ'ե-
րեւին, ուսկից առջի ժամանակները իւրաքան-
չւր ազգ իւր առանձին վանքը կ'ելէր. վասն զի
սց սուրբ Տաճարիս վրայ մեծամեծ վանքեր կա-
յին կուսանաց: Իսյց վերջի ժամանակները այլ-
ազգիք քանդելով, նոյն քարերով Առղոմօնի Տա-
ճարը շիներ են. իսկ հիմայ նոյն վանքերուն առ-
ղերը ձիթենեաց պարտէղներ են, միոյն Տաճարը
փառաւոր մնացած է, ուր տեղ է որբուհւոց
կուսին գերեզմաննը: Վ Երացիշեալ 48 աստիճան-
ներուն կէսը իջած ժամանակ, երկու կողմէն
կամարներ կան, որոնց արեւելեան կողմը՝ որ
Յունաց է, Յովակիմ Վնասցի գերեզմաններն
են. իսկ արեւմտեան կողմի կամարը՝ որ Հայոց
ազգին է, Հայոց Յովսէմի գերեզմանն է: Նոյն
կողմը դարձեալ աստիճաններուն հատած տե-
ղը սենեակ մը ունիմք իր աւանդատուն, և
հանգէալ նորա է Յունաց սեղանը, որ նախ Վ ը-
րաց էր. և մեր սենեկին հիւսիսացին կողմէն
գէտ արեւմտաք կամար մը և պատարագամա-

աղց սեղան մը կաց , զոր նորոգեցինք 1863 թը
ւականին , և այժմ Վագակը մեր հրամանաւը կը
պատարագեն չորեքշաբթի և ուրբաթ օրերը .
Եւս և սեղանին ետեւի կողմը հոր կաց որ մեր
աղջինն է . և կամարին կից սենեակ մը եւս
ունիմք , որուն դուռը այժմ քարով հիւտուած
է . առ նախանձու օտար աղջաց : Իսկ հիւտիաա
կողմը սենեակ մը կաց Յունաց , և արեւելեան
կողմը սենեկին մօռ՝ է սեղան ՚ի ձեռս Յունաց ,
որ նախ Հապեշեց էր : Արեւելեան կամարի
տակը երթալով կամարի հարաւային որմը Յու-
նաց է , իսկ հիւտիաային որմը Հայոց՝ հանդերձ
պատկերօք և զարդուք : Այս կամարին տակն է
ամենասուրբ կուսին գերեզմաննը . երկու դուռ
ունի , արեւմտեան կողմի դուռը Յունաց է ,
իսկ հիւտիաայինը Հայոց . և սուրբ գերեզմանին
վրայ եղած կանթեղները , մոմակաները , զար-
դերը և տիւոյները , հաւասար թուով Հայոց
և Յունաց են՝ առանց իրարմէ աւելի կամ պա-
կաս զարդ մը ունենալու : Ուրբբ գերեզմանին
վրայ ամեն օր սուրբ պատարագ կը մասուցա-
նեն երկու աղջ , այսինքն Հայք և Յոյնք : Վե-
րեզմանին արեւմտեան գրան կից եղած սեղա-
նը Հայոց է , ուր պատարագ կ'ըլլայ . ասիկայ
Հայոց երկրորդ Հեթում թագաւորէն կա-
ռուցեալ է , ինչպէս որ նոյն երանելոյն միշա-
տակը յիշատակարանաց մէջ արձանագրեալ կը
գտնեմք : Ուրբբ գերեզմանին հիւտիաային դր-
բան դիմաց կամարին տակը սեղան մը կաց պա-
տարագամատոց , որուն վրայ Ասորիք կը պա-

սարագեն . գերեզմանին ետեւի կողմը արեւել
եան կամարին տակը Հյոյնք ալ ունին իրենց յա-
տուկ պատարագամատոյց սեղան :

Առաքելոց ննջման տեսք :

114

Այս տուրք Տաճարէս դուրս ձախակողմին
Երկաթեայ դուռ մը կայ , ուսկէ ներս մանելով
կը գտնես եկեղեցի մի । ատինաց , որ երեք խո-
րան ունի , և ամեն օր । ատին կրօնուորք կը պա-
տարագեն :

Քրիստոսի ըմբոնման տեսք :

115

Այն Տաճարէն դուրս դէալ ՚ի արեւելք ՚Զի-
թենեաց լերան ձանապարհին աջակողմին սրար-
տէզ մը կայ । ատինաց ձեռքը՝ շրջապատեալ պա-
րապաւ , որուն մէջ քանի մը հնագոյն ձիթենիի
ծառեր կան , որոնց աւանդութեամբ ողջունի
ծառեր կը լսուին : Պարսպին կից հարաւակողմին
տակաւ ինչ յառաջանալով անել ձանապարհին
դլուխը , քարաժայռերու կցած մը կայ , որոնց մէկ
քանիին վրայ խաչի նշաներ նկարուած են , այն
է ՚Քրիստոսի ըմբոնման տեղը և սրբաւէզը՝ ուր
որ կ'ազօթէր առ Հայր ըսելով . « Հայր , անցու
պատակս զայս յինէն . բայց ոչ խմ կամք , սոյլ
քոյդ լիցի » . (՚Ի՞նչ . ԷԲ . 24 .) : Այս աեզս
Յուգան զինուորներով Յիսուսի վրան գտրով
բռնել տուաւ զինքը : Այս տեղս դարձեալ

Պետրոս առաքեալ քահանայապետին ծառաց
Աշղքոսին ականջը կտրեց , որ բժշկապետն Յիւ-
սուս վերատին աեղը դարձունելով առաղջացոց :
Հոս չար Նրէաները Յիսուսի ձայնը լսելով գե-
տինը զարնուեցան : Ա առն որոց պէտք է քրիս-
տոնէից երկիւղածութեամբ և ջերմեռանդու-
թեամբ երկրագագանել այս սրբազան տեղը , ուր
այսօնի տնօրէնութիւնը և հրաշք գործեցան :
Յիշեալ տեղէս յիսուն տոնացափ դէպ ՚ի վեր
քար մը կայ , որուն վրայ ննջեցին սրբազան ա-
ռաքեալք , այսինքն Պետրոս , Յակովոս և Յով-
հաննէս , զոր Յիսուս երեք անդամ եկաւ ար-
թընցուց զիրենք . այս տեղս ալ ուխտատեղի է
և կը պատուի ամեն քրիստոնեայ ազգերէն :

Դարձեալ վեր ելլելով ուղիոլ ճանապարհին
վրայ և քիչ մը դէպ ՚ի արեւելք շեղելով , պար-
տիզի պատին տակովը քար մը կայ , որուն վրայ
բաղմեցաւ Յիսուս երբ Շիթենեաց լեռնէն
աւանակաւ Երուսաղէմ Տաճարն եկաւ . և այս
տեղս մերձեցան Յիսուսի քով Արգար թագա-
ւորին դեսպանները և առաքելոց հետ տեսու-
թիւն ըստն . և յըրտասաղէմ Դամաղիէլի տունը
նառած ժամանակ Արգարու դիրը ներկայացու-
ցին Յիսուսի Տեառն մերոյ , որուն պատաս-
խանը Թավմայ առաքելոցն ձեռօք դրել տալով
հանդերձ սուրբ երեսաց դաստառակովը , նոյն
բարեսպաշտ թագաւորին խրկեց ըստ պատմու-
թեան Խորենացւոյն և այլոց օտար պատմչաց :

Առաք Աստուածամնայ ազօթած տեղը:

116

Ա երսիշեալ Յիսուսի բաղմած տեղէն դեպ
ի հիւսիս՝ սակաւ ինչ հեռի քար մը կայ գետինը
թաղուած, որուն շրջապատը Յոյնք 1860 թուա-
կանին քարամբ պարսպեցին. սյս քարիս վրայ Ա.
Կայսն կ'աղօթէր սուրբ Ասեփանոսի քարկոծ-
ման ժամանակը, և ուխտատեղի է ամենայն
հաւատացելոց :

Քրիստոսի արտասուած տեց չոր աւետարանիչը կը յիշէ:

117

Ա երսիշեալ տեղէն քարընկէց մը հեռու-
աջ կողմէն վեր ելելով բուրդ մը կայ, ուր
տեղ Յիսուս արտասուեց երբ Արտսաղէմ ե-
կած ժամանակ քաղաքը տեսաւ ու ըստ .
“Եթէ գիտէիր դու գոնէ յաւուրս յայսմիկ
դիսաղաղութիւնքո, ո և այլն, (Ղուկ. Ճ.թ. 41):
Հին ժամանակ այս տեղս վանք կար, բայց այ-
ժըմ ձիթենեաց պահպանութեան համար այլ է
ազդի պահպաններ կը բնակին. և այս վանքը՝
ըստ հնախոսութեան Հայտառանի, Ա արամնա-
նեաց նախարարներէն շինուած էր :

Յանդիման տաճարին:

118

Արկու քարընկէց հեռաւորութեամբ ձա-
նապարհ է վերսիշեալ վանուց. և այս վանուց
բայց քայեալ պարիսպները և խորանի տեղերը

յայտնի կ'երեւին ցարդ ևս . և Յիսուս այս վանքիս տեղը նստելով , և Պետրոս , Յակովոս , և Յոհաննես մօտենալով իրեն՝ հարցուցին Տաճարին գեղեցիկ քարերուն և շինութեանը համար . որոնց պատասխանեց Քրիստոս , թէ “ Տեսանելք զայդ ամենայն , ամեն առեմ ձեղ ոչ մնացի . քար ՚ի քարի վերաց , որ ոչ քականացի , ո և այլն . (Վառ . ձ. Գ . 3) : Կը գրէ Արքինսոս պատմից , թէ երբ որ Յուլիանոս հրաման ըրտ Հրեից որ Տաճարը շինեն , շինելու ժամանակ յանկարծ կրակ ելլելով այրեց նիւթերը և շինողները , եւս և արեան խաչի ձեւեր տեսնուեցաւ եկեղեցական տնօթեւրուն վրայ . ուստի այնպէս քայքայեալ մնաց մինչեւ Կոմէր խաստապի ժամանակը , որ Երուասղէմը առաւ և ձեռնարկութիւն ըրտ Տաճարը շինելու իւր ազգին համար . բայց ցերեկը կը չէ նէին , զիշերը կը քանդուեր : Երբ որ Կոմէր Հրեաները կանչելով քանդառութիւն ըրտ Տաճարցուց , պատասխանեցին թէ . “ Չիթենեաց լիւր յանդիման Տաճարին ըստած տեղը քրիստոնէից վանքին գմբէթին վրայ խոչ կայ կանգնեցած , այն խաչէն է որ այս շինութիւնը կ'աւրուի : Հաւատապով Կոմէր անոնց խօսքին և բարկանալով բոլոր վանքը քանդել տուաւ , և տւերակ մինչեւ ցարդ :

Տերունոկան ոցօթքը սորմեցուցած տեսք :

119

Յանդիման Տաճարէն սակառ ինչ գէպ ՚ի վեր տափարակ տեղ մը կայ , ուր տեղ սորմեցուց

Յիսուս Առաքեալներուն աղօթելու կերպը , որ
է Հայոց մերը : Եւ Համբարձման օրը Կենապարն
մեր այս տեղու խորիս մեղու . և ձկան մասը կե-
րաւ , ուր աշակերտը ներկաց էին . ՚ի յիշատակ
որոց փառաւոր վանք մը կար առաջին ժամանա-
կը , բայց հիմնյ աւերակ է , և միայն կամար-
ները ու տեղերը կերեւին : Եւ այս վանքիս մօտ
քարէ սիւնի կտոր մը կայ , որու վրայ օրհնեց
Յիսուս իւր աշակերտները և մեկնեցաւ ա-
նոնցմէ :

Համբարձման չեռը:

120

Վերսիշեալ վանքէն սակաւ . ինչ զառ ՚ի մեր
ելքելով , լերան գլուխո՞ Քրիստոսի համբարձման
տեղն է : Այս սուրբ տեղու նախ՝ մեծ և հրո-
շակաւոր վանք կար () . Յարութեան տաճարին
ձեւավլը շնուռած . բայց 614 թուականին Պար-
սից Խոսրով թագաւորը երբ որ Երուսաղէմը
առաւ , այս սուրբ վանքն ալ աւերեց , և յետ սց-
նորիկ 1187 թուականին՝ Եղիպատոսի սուլթան
Ետսուֆ Ալահատավնը | ատինաց ձեռքէն | շ-
րուսաղէմը առնելով , և քանի մը սուրբ տե-
ղերը քանդելէն յետոյ՝ աւերակ վանքերն ալ ի-
րեն սեփհականեց , որոնց մեկն էր այս սուրբ
Համբարձման վանքը : Բայց յետոյ վերջին ժա-
մանակները , քրիստոնեայք միանալով ազատեցին
այս սուրբ աեղը Առաքացւոց ձեռքէն . և Յի-
սուսի ձախ ստից քարին վրայ , ուսկէ որ համ-
բարձմաւ , փոքր մասուու մը շնուռեցաւ որ կայ

մինչեւ ցայսօր . և տարին Երկու օր իւրաքանչյուր
քրիստոնէից ազգեր հոն Երթալով պատարագ
կը մատուցանեն իրենց առանձին սեփական սե-
ղաններուն վրայ , որոնք շինուած են այն աւե-
րակ մեծ վանքին տեղը , որ այժմ առանց ծած-
կոցի գաւիթ է :

Այս ալ արժան կը համարիմ ծանուցանել ,
որ 1834 թուականին , մեծ շարժ ըլլալով խախ-
տեցաւ նոյն վարդիկ մատրան գմբէթը , որ է 'ի
վերայ ոտնասաեղոյն Քրիստոսի , և լատինք
կամեցան նորոգել . բայց Հայք և Յայնք հա-
ճութիւն չուղարկ ուղեցին որ իւրաքանչյուր
ազգ իւր սեփական տեղը շինէ , և լորուսաղէմի
դատաւորը հրաման ընելով ըստ . “ Վվ որ հր-
ովվարտակ ունի՝ պէտք է այն ազգը շինէ ” . և
բաց 'ի Հայոց ազգէն՝ միւս ազգաց քով ցըլա-
նուեցաւ հրովարտակ . ուստի Հայք նոյն հր-
նագոյն հրովարտակը նորոգելով 1837 թուակա-
նին շինեցին սուրբ Համբարձման գաւթիւն դը-
րան հիւսիսային կողմը քանի մը սենեակներ
տախտակամած առաստաղներով , և արեւելեան
կողմը պատարագամատց սեղմնով մատուռ մը
կանգնեցին , ուր ամեն օր կը կատարուէր Փրռ-
կարար խորհուրդը սուրբ պատարագին՝ հան-
գերձ ժամերդութեամբք : Հայց գժբաղդաբար
Երկար ժամանակ չլայելցին այս Երջանկութիւ-
նը , վասն զի Յայնք և լատինք նախանձով լը-
ցեալ , մահմետականաց մասնեցին , թէ այս
աեղ մզկիթ էր և քրիստոնեայք մասն չունեին .
ուստի 1839 թուականին յուլիսի 10 ին , յեղաւ

կարծում պահու գրոհ տարսվ այլազգիք և ը-
րէայք, և որ սարսափելին է՝ նոյն խել քրիստո-
նեայք, կործանելով հիմնայատակ ըրին չայոց
փառաւոր շնորհիւնը, և ամենեւին նշան մը
չժողին : Յիրաւի արտաստուաց արժանի է այս
գործս ոչ թէ միայն սուրբ տեղւոյն կորուստը,
այլ եւ քրիստոնէից կոյր նախանձն ու մախանքը,
որ այլակրօնից անգամ ծանր է այսպիսի եղեռն
ոճրագործութիւն մը, որ չայոց եկեղեցւոյն
գործեցին : Ինչ և իցէ, Տէր տայէ զգաստու-
թիւն այնպիսի չարագրդիւ ոգւոց, որ չիկա-
ւորեն իրենց եղբայրները և շմահացուցանեն ի-
րենց հոգիները գաղանական կիրքերէն յաղթը-
ւելով, այսինքն ատելութենէն : Կաեւ արտա-
քոյ այս գաւիթին՝ աջակողմը մզկիթ մը կայ
ներքնառընալ, որուն տակն է գերեզմանն Ան-
տիքացի ապաշխարող Պեղեքեայ կուսին, որ
հինգերորդ դարուն փոքր թէոդոսի ժամանակ
փախեցաւ ՚ի Տէր : Տէս ՚ի Արս սրբոց հաստր
ք.Բ. Երես 295 :

Գալիւեա:

121

Համբարձումն հինգ րոպէ դէպէ ՚ի հիւսե-
սակողին է Պալիկեան, ուր ժամադիր եղաւ
Յիսուս աշակերտաց, և յարութենէն ետքն ալ
այն տեղերեւցաւ իրենց . (Վառ. Ժ. 16, 20) :
Այս սուրբ տեղս նախ եկեղեցի էր, բայց ան-
օրէն բարբարոսները կործանեցին, և այժմ
գարձեալ ուխտատեղի է :

¶ 22

Համբարձման լեռան և Գաղղիլեայի մեջուեցը արեւելեան կողմը աւերակ վանք մը կայ, ուր Գաբրիէլ հրեշտակապետն սուրբ Կուսին երեւնալով ըստաւ . “ Ուրանի լեր բերկրեալդ ՚ի կանայս, ահա կոչէ զքեղ Արարին և որդին մի ածին ” . և այս ըսելով՝ բրաբխնեայ պատկ մը տուաւ անոր . ուստի տեղւոյն անունն ալ Երարքին կանուանի մինչեւ ցայսօր : Յասմաւոր, օդոսատու 15 :

Բեթանիա և Դագարու. գերեզմանը :

¶ 23

Բեթանիա գիւղը Համբարձման լեռան արեւելեան կողմն է քսան ըսպէի ըսփ հեռաւուրութեամբ : Այս գիւղը մտած ժամանակ ճանապարհէն դուրս ձախակողմը աւերակ դուռմը կայ, որ Ախման բօրտափ տունն է, ուր Յեսուս օծաւ ՚ի Վարիամայ անուշ խւզով . (Վառ. 1.2. 6.) : Եւ ՚Աղարու գերեզմանը՝ ուրիէ յարսց զնա կենարարն Յիսուս, հասարակ ճանապարհին վրայ է աւերակ ամբոցին աջակողմը : Հսու կենարարն Յիսուս արտասուեց իւր մեռեալ բարեկամին վրայ և աղաղակեաց բարձր ձայնիւ . “ ՚Աղարէ, արի եկ արտաքս . և յարեաւ չորեքօրեայ մեռեալն աւացյն . (Յով. ԺԱ. 43.) : Քսան և հինգ աստիճան վար փոքր ոյր մին է խոր և մթին, և անտի չորս աստիճան

ջանե՞ ՚ի կամարակապ այրն , ուրկէ Տէրն մեր
կոչեց զ՞աղաք :

Վարինոս կը պատմէ թէ , այս գերեզմանիս
ձախակողմն աւերակ ամրոց մը կայ , զոր Ֆուլ-
դոն Կրուսաղէմի լատինաց երրորդ թագաւորը
շնուրով մէջը զօրք դրաւ , որ նոյն տեղի եղած
հռչակաւոր Կուսանաց վանքը պաշտպանեն :
Ռեթանիայէն գէպ ՚ի հիւսիսային արեւելեան
կողմը տասն և հինգ բոպէ հեռի ժայռ մը կայ
տաղանի նման բոլորակ և կարմրագոյն , որուն
վրայ նստած էր երբ ՚Վաղարու քոյրը Վարթան
գալսվ ոսքն ինկաւ անոր լսելով . “Տէր , եթէ
աստ լեալ էիր , եղբայրն իմ չէր մեռեալ ” . ո-
րուն պատասխանեց Յիսուս թէ , “Եթէ հա-
ւատա՞ տեսցես զփառս Կատուծոյ ” :

Սամփանի ացրիւք :

124

Ռեթանիա գիւղէն տասն և հինգ բոպէի չափ
հեռի գէպ ՚ի հիւսիսային արեւելակողմը ձորին
մէջն է Վամփանի աղքիւրը , որուն Օնոտի աղ-
քիւր ալ կ'ըսուի , որովհետեւ Վամփան իշոյ
ծնոտիւ հաղաք սցըազգի մեռցունելէն զինի՝
ծարաւած ժամանակը առ Կատուծած աղաղա-
կեց , և Կատուծած իշոյ ծնոտէն ջաւր բվիսեցոց՝
և Վամփան խմեց . ուստի այն ջուրը մինչեւ
ցայսօր նոյն տեղէն կը բղիսէ , և կը կոչուի
Վամփանի աղքիւր . (՚Կատուծ . ԺԵ . 15 . 19) :

125

Իւթանիսյի հարաւակողմբ առերակ գիւղ
մը կայ որ Իւթփագէ կը կտջուի . այս դիւղէս
բերին առաքեալք էշն և յաւանակը , որու վրայ
նասաւ Յիսուս , և Արուսաղէմ եկաւ . (Ո՞սք .
Խ. 4 : 1-ի . ԺՈ. 50) :

ԵՐԻՒՈՅ :

126

Արուսաղէմէն մինչեւ Արիքով վեց ժամէ ,
և ընդարձակ դաշտի մը մէջէ , և այժմ փաքրիկ
գիւղմինէ բերդով : Կաւեայ որդի Յեսուն այս
տեղս տեսաւ Տիրոջը հրեշտակը . և այս քաղաքիս սպարիսպները հրաշխոք կործանեցան , և
Ուախարն ազատեցաւ այս կործանմանէն , որ ու-
րինակ էր դժոխոց կործանմանը , (ՅԵՍ. Ե . 13 ,
14 .) : Կաև Յիսուս այս քաղաքիս մէջ սպարսած
ժամանակը , Օաքէն՝ որ կարճ էր հասակաւ ,
ժանուաթղենիին վրայ ելլելով տեսաւ զՅի-
սուս . և Յիսուս ալ անոր մեծ փափաքը տես-
նելով , արժան համարեց անոր տունը իջեւա-
նիլ . և այս Օաքէն յետ համբարձմանն Քրիս-
տոսի , Արուսաղէմի եպիսկոպոս ընտրուեցաւ :
Յիսուս Արիքովի մէջ շատ բժշկութիւններ ը-
րաւ , մանաւանդ Տիմէի որդի Ուարդուղիմէուը
լուսաւորեց . (Ո՞սք . ԺՈ. 46 .) :

Եպիսկոպոս մարդարեն աշքիւ.բը :

¶ 27

Երիքովի և փորձութեան լեռան մէջ տեղն է,
Եղիսէի ազգիւրը, որուն ջուրը ասստիկ դառն
ու աղի էր, և Եղիսէն օրհնեալ աղիւ և աղօ-
թիւք քաղցրացոց . (Դ. Թագ. Բ. 19.) : Այս
ջուրս էր բժշկաբար, որուն վրայ եկեղեցի մ'ալ
շնուած էր, բացց այժմ աւերակ է :

Փորձութեան չեաց :

¶ 28

Երիքովի գիմաց արեւմտեան կողմն է Փոր-
ձութեան լեռը, ուր Վրիստոս քառասուն օր
և քառասուն գիշեր ծոմ պահեց . (Վառ. Գ. 2).
և շատ բարձր է, բայց զատ է փորձութեան
լեռը այն տեղէն, ուր սրահեց Վրիստոս քա-
ռասուն օրը : Առաջին ժամանակները շատ եւ
կեղեցիներ կային սյս լեռանս վրայ, բայց այժմ
աւերակ են : Երիքովի արեւելեան կողմն է Ծով
Հաննու Վկրաչի վանքը և ուրիշ եկեղեցիներ,
որք այժմ անծանօթ են մեզ :

Կարաւ չեաց :

¶ 29

Երիքովի գիմացը արեւելեան դին հինգ ժա-
ման շափ հեռի է Կարաւ լեռը, որ Վագովիծ
կը թարգմանուի . ուր ելաւ Վավեհո և անոփի Ե-
ւետեաց երկիրը տեսնելով մեռաւ, և այն լե-
ռան վրայ թաղուեցաւ . բայց մարդարեն գե-

բեզմանը մինչեւ յարդ մեղ անցայտ է . (Յօհանոս
19. 47 , և (Օլին . 18. 49 .) :

Յորդանան գետը :

130

Երիքովէն մինչեւ Յորդանան գետը , ուր
տեղ միլլտեցաւ Տէրն մեր , երեք ժամ է . այս
գետս հիւսիսէն դէպ ՚ի հարաւ կ'երթաց , և
մեռեալծովուն մեջ կը թափի . (Օման . ԺԳ . 10) :

Քորեք չեռը :

131

Յորդանանու միւս կողմն է Վորեք լեռը ,
և չորս ժամու չափ հեռի . այս լեռան վրաց Ե-
ղիս մարդարէն հրեղէն կառօք երկինք վերա-
ցաւ . (Դ Յօհան . Բ . 11 .) : Յորդանանու մօտ
վանք մը կայ Երասիմափ և առիւծավանք ալ
կ'անուանի . և երկու մզնն հեռի է աղբիւրն
զոր բղխեցց Երասիմաս , և հարաւակողմն ալ
Վարդիստնի վանքն է : Տես յայսմաւոր սովորիլի
25 , և սեպտեմբերի 22 :

Անեսաշ ծովը :

132

Այս ծովս Աւետեաց երկրին արեւելքան
կողմն է . ուստի արեւելից ծով ալ կը կոչուի .
(Եղիշէլ Խ . 18 .) : Եւ այս ծովէս ազնիւ ազ ,
կուպր և նաւթ կ'ելք , և իւր մեջ կենդանի-
ներ , ձուկեր չունենալուն համար մեռեալ ծով

կը կոչուի , և կենդանի ըրբալուն պատճառը կ'ըստի թէ միւս ծովերէն աւելի ջրին սաստիկ դառնութիւնն է : Այս ծովուն հարսւակողին է Ասդոմացեցւոց երկիրները , զոր Աստուած պատժեց , և միայն Վովսն իւր ընտանեք ազատեց հրեշտակաց առաջնորդութեամբը . բայց կինն Վովսաց հրեշտակաց հրամանին դէմ վարաւելով աղի արձան դարձաւ . (Օնն՛ , ձթ . 26) :

Քարտկ բացաբց :

133

Աեթիւհեմէն տասն և վեց ժամ հեռի մեռեալ ծովու արեւմտեան կողմը լերան գլուխը շրջապատեալ պարապաւ քաղաք մըն է . Վարսկ ըստածքը . և քաղաքին դուրս արեւմտեան կողմը կէս ժամ հեռի ըրեքտասան դարտւն բակ մաթիւ Հայեր կը բնակէին , ուր կառուցեալ կոյ եկեղեցի մը յանուն ոռորք Վեորդայ . և այս տեղւոյս բնակիչներէն տակաւին մէկ երկու Հայ տուն կոն , որք այժմ Աշուազէմ կը բնակին : Բայց հիմաց քաղաքին բնակիչները Յոյն են , և առորք Վեորդայ եկեղեցին ալ տակաւին կը կենաց , որուն դուռը փակեալ է : Արաբացւոց կողմը լինելով : 1853 թաւականին Աշուազէմի մէջ ձեռագիր Յոյսամաւոր մը դանուեցաւ , որուն յիշատակարանն էր այս պէս . “ Վրեցաւ Յոյսամաւոր ՚ի թուին Հայոց ԶԿԵ , ձեռամբ Վահանաց ՚ի ՚Վրազարկ վանեն՝ ՚ի դուռն Տաճարի սուրբ Աստուածածնի , ՚ի թագաւորութեան մանկահատակ Եւսնի ար-

քայի որդւց Օշնն արքայի, եւայլն : Ես | եւ
ոն թագաւոր ամենայն Հայոց, ՚ի թուին շաբ.
շնորհեցի գիրքո Քարակայ Հայոց եկեղեցւոյն,
և այլն : Եւս կազմեցաւ Յայամառուրս լեռնակող
ման վանքը Ա. Յովհաննաւ Վկրտչի, ձեռամբ
Յովհաննես աբեղացի ՚ի թիւ Հայոց ՊՊ. է ։

Յոդիւ:

¶ 3 4

Երտսաղեմի արեւմուշան կողմէն ութը ժամ
հետի ծովեղերեայ քաղաք է առանց նաւահան
գրատի . նաւով եկող տէրունական ուխտաւորք
նախ այս քաղաքս կ'եղին, ուր տեղ յատուկ
վանք կայ Հայոց և եկեղեցի յանուն Նիկողա
յոս հայրապետի : Այս տեղն իջաւ նախ Յով
հան մարդարեն, որ Տիրոջը երեսէն թարախ
փախչել կ'աւղէր : Եւ այս տեղ կը բնակէր Տա
քիթայ բարեպաշտոհին, զար յարոց Պետրոս
սրբազնն առաքեալն . և այս տեղ տեսաւ Պետ
րոս երկինքը բացաւած և այն կտաւը՝ որուն
մէջ թռչնոց, սովորոց, չորբուտանեաց տեսակ
ներ կացին : Այս տեղի Հայոց վանքը, նախ Եշ
ղիազար Կաթուղիկոսը նորոգեց 1667 թուակա
նին . երկրորդ՝ Ծղմայակիր Կրիստո հայրապե
տը . երրորդ՝ Գաբրիէլ Պատրիարքի ժամանակ
սակաւ ինչ շնութիւն եղաւ : Այն քաղաքին
մէջ կան ուրիշ աղքաց վանքեր ալ, ինչպէս | ա
տինաց, Յունաց և հռոմեադաւաւան Յունաց :
Հարաւային կազմի ծովեղերքն եր՝ ուր սովանի
ացի մէծահաւատ կինը սուրբ առաքելցին Յա-

կովբայ անդլուխ մարմինը սիւնի մը կապեց,
զոր Ապանիա տանել կուղէր ։ Տես Քայամառուր
դեկամբերի 28 :

Ուկմշէ:

135

Յոպակէն ՚ի Ումէլ երեք ժամը է գէս յա-
րեւելք, ուր տեղ ունիք մեծ վանք և եկեղե-
ցի յանուն սրբոյն Գէորգայ, և միաբան տե-
սուչ վարդապետ մը և քանի մը միաբանք, ո-
րսնք կընդունին Յոպակէ ելլող ուխտաւսրբը
հոն եկած ժամանակ, և մէկ գիշեր հանդատա-
ցընելէն յետոյ՝ միւս օրը սուրբ Արտօնազէմ
կուղարկեն :

Լավրոն գիւղը:

136

Ումէլէն գէս ՚ի Արտօնազէմ երեք ժամու-
ճանապարհ է Լավթրոն գիւղը, ուր հնաշէն
քայքայեալ մեծ վանք մը կայ յանուն Անկա-
բայեցւոյ ։ բայց այժմ սյլաղդաց ձեռքն է : Եւ-
սց տեղէս երեք ժամու չափ գէս ՚ի արեւելք
դիմելով՝ կը տեսնուի Արեմիա մարդարէին Վ-
նաթովիթ քաղաքը, որ այժմ գիւղէ, և ունի
քայքայեալ եկեղեցի մը :

Վահամալի գիւղը:

137

Վնաթովիթէն մէկ ժամ հեռի գէս ՚ի արե-
ւելք բարձրաւանդակ բլբի մը վրան է Վրե-
մաթ, որ Ասմուել մարդարէին գիւղն է, և ու-

նի խանգարեալ վանիք մը և եկեղեցի , որուն
մէջն է Ասմաւէլի գերեզմանը :

Սուրբ Յակոբայ վանք:

138

Սուրբ Յակովուեանց հրաշակերտ և պայծա-
ռաշէն վանքը , որ մեծ չեղինէ թագուհին
սկսեալ մինչեւ ցացաօր Հայոց ազգին ձեռքն է ,
որուն մէջ կը բնակին Հայոց Պատրիարքը , եսլա-
կոպոսունիք , վարդապետը , սարկառագունիք , դր-
ովիդը , և այլ քրծազգեաց միաբանիք . որոնց թի-
ւը հարիւր յիսունի կը հասնի : Կաեւ տերու-
նական ու խառաւորաց բնակութիւննալ այս վան-
քիս մէջն է : Վասն որոյ երանելի նախնիք բա-
րեպաշտ և աստուածատէր ժողովոդոյ տրօնն և
ողորմութեամբը 300 էն աւելի սենեակներ շւ-
նած են ի հանգառութիւն ջերմեռանդ ու խ-
սաւորաց :

Սուրբ Յակոբայ վանքին մէջ գտնուած ու խռաւաւեցիք
և սեցանները :

139

Ետիւ փառաւոր վանքիս սուրբ եկեղեցւոյ
գաւիթը մոտած ժամանակ կը տեսնես ահաւոր
գատառատանի պատկերը , որ եկեղեցւոյ աւագ
դրան վրայ դրուած է . և սոյն դրան երկու
կողմը դարանի ձեւով երկու պատարագամա-
տոց սեղաններ կան մէկը յանուն սրբոյն Գե-
որդաց , և միւսը յանուն Ամելովստի պանչ-

լագործ հայրապետի, ուր յատկացեալ օրեր պատարագ կը մատուցուի. և այս գաւթիս մէջ թաղուած են | Եւսն թագաւորի Վարփամ թագուհին, և իւր Շեննա դուստրը. եւս և Արքահամ, Յովհաննես և Դաւիթ պատրիարքները. և գաւթիս որմերն ալ զանազան հրաշալի պատկերներով զարդարեալ է : Եւագ գոնեն ՚ի զատ երկրորդ գուռ մալ ունի, որուն Գրեխադրի դուռ կ'ըսեն, և եկեղեցականք այս դունեն կը մանեն : Յորբարդ գուռն է սուրբ Խմբածնաց եկեղեցւոյնը, ուսիէ կանացը կը մանեն : Խմբածնաց եկեղեցւոյն մէջէն երկրացիկ գուռ մը կայ, որ սուրբ Յակովաց եկեղեցին կը հանէ . և այն եկեղեցւոյն հարաւակովմբ աստիճաններ կան, ուրիէ կանաց վերնաստունը կ'ելլուի . և աստիճաններուն կարդին գեալ ՚ի արեւելը Ոինէական սեղանն է, որուն տակը երեք քարինք կան, որոնց մին Ոինէական լեռնեն, մին Յորբանանէն, և միւսը Թափօրական լեռնեն բերուած են : Եւ այս եկեղեցին ունի աւագ սեղան մը յանուն սուրբ Խմբածնի, ուր Տապանակի տօնին և այլ մէկ քանի յատկացեալ օրեր պատարագ կը մատուցուի : Եւս և կանաց վերնաստունը, որ սուրբ Յակովաց աւագ խորանին վրայ կը նայի, ունի երկու սեղան պատարագամատոց, մինն յանուն Պայծառակերպութեան և միւսն Շնթրեաց : Վերնաստան հիւսիացին գոնեն դուրս ելլելով, տանիքը փաքք մաստոռ մը կայ և սեղան պատարագամատոց յանուն սրբազան Առաքելոց : Եւ

այս մատրան Հարաւային դռնեն եղելով և սա
 կաւ ինչ յարեւերակողմը՝ սուրբ Աշնի խորան
 կայ, որ սուրբ Յակոբայ եկեղեցւոյն մէջ կը
 նայի, և ունի փոքր սեղան պատարագամասայց։
 Այն խորանես յարեւմուտս կըս նեղ տանդու-
 ղէն վար իջնելով սուրբ Յակոբայ եկեղեցւոյն
 մէջ կ'իջնէ, ուր հիւսիսային պատին կից է սուրբ
 Գերեզմանը Վակարայ Հայրապետին, ուր տեղ
 կայ սեղան և պատարագ կը մատուցուի Վակա-
 րայ Ճգնաւորի տօնին, և Գիւտի նշխարաց։ Ու-
 սաւորչի տօնին օրը։ Հոս կը նատի նաեւ արանց
 խոստովանահայրը, ուր կը խոստովանին էրիկ
 մարդիկ. եւ այս մատրան մօտ է բաժակարքու-
 սրբոյն Յակոբայ առաքելոյն գլխուն ամփոփ-
 ուած տեղը, որ փոքրիկ բայց գեղեցկաշն մա-
 տուռ մըն է հանդերձ պատարագամասայց սե-
 ղանալ, և երեւելի ուխտատեղի է ընդհանուր
 քիստոնեից, և անդին գանձ յլ տուծոյ Հոյոց
 աղդին պարգեւեալ. որուն վայ ամեն շարաթ
 օր պատարագ կը մատուցուի։ Այս սուրբ Գրէ
 խաղի արեւմուեան դրանքով դարձեալ դուռ
 մը կաց, որ սուրբ Վինաս եկեղեցւոյ մէջ կը
 բացուի, ուր երեք պատարագամասայց սեղան
 ներ կան. մին յանուն սրբոյն Վինասայ, մին
 յանուն սրբոյն Վարդսի, և միւսը յանուն սրբ-
 ոյ Յարութեան, թէպէտ և այս սուրբ Յարու-
 թեան սեղանին վայ պատարագ ըլլար. և սուրբ
 Վիթոռոյս եկեղեցական անօթները այս սուրբ
 Վինասայ ներսի պահարանը կը պահուին. ուս-
 տի այս դուռոս միշտ բաց ըլլար ուխտաւորաց՝

բաց ՚ի յատկացեալ օրերէն : Առարք Գլխադրի
մատրան գրանը քով գէպ յարեւելս պատին
վրայ տէրունական պատկերը կայ , որուն առա-
ջը որդւոց Արտաման տօնախմբութեան և յա-
րութեան երկրորդ օրը շարժական սեղան կը
կազմուի գեղեցիկ զարդարեալ : Եւ սոյն պատ-
կերին կից սուրբ Ստեփանոս եկեղեցւոց դու-
ռըն է , որուն միւս դուռն ալ մոմբանային առ-
ջեւ կը բացուի . և այս եկեղեցիս ունի երեք
պատարագամատոց սեղան , և մկրտութեան ա-
ւազան . սեղաններուն մին յանուն սրբայն Ստե-
փաննոսի է , որուն տօնախմբութեան օրը հան-
դիսիւ պատարագ կը մատուցուի . մին յանուն
Լուսուորչին , և միւսն է աւազան Վիւրզի Հայ-
րապետին , որուն մէջ Երեւման խաչին Ժամա-
նակը բազմաթիւ հուատացեալք մկրտեց . և
նոյն հայրապետին տօնախմբութեան օրը այս
տեղ պատարագ կը մատուցուի : Առոր կից է
սուրբ Աթոռոց իւղասունը : Նոյն դռնէն
դարձեալ սուրբ Յակոբոց եկեղեցին մանելով
հսն աջակողմեան դասին սեանը քով կը գքա-
նես Տեառնեղքօր արդար առաքելոցն փառա-
ւոր ամծուը Կաթուղիկէիւ և անոր կից սրբա-
զան Պատրիարքին ամծուը :

Առարք եկեղեցւոց աւագ սեղանի տակ ամ-
փախուած է ըստ աւանդութեան Տեառնեղ-
քօր արդար առաքելոցն սուրբ մարմինը . և այս
սեղանս շատ զարմանալի է և հրաշաւոր . գե-
ղեցկութեան մասին անհամեմատ . ատեանը բո-
լոր գոյնզգոյն քարերով զարդարուած է , և պա-

տերը մարդաչափի բարձրութեամբ յախճապակալակեալ . ուսկէ ՚ի վեր կը տեսնուին կարդաւ հին Պատրիարքաց և սուրբ վարդապետաց պատկերները , և անոնց վրայի կարգը Քրիստոսի բոլոր անօրինական և ուրիշ խորհրդաւոր ընտիր պատկերներով զարդարուած է : Աւագ խորանին երկու կողմի խորաններն են մին յանուն սուրբ Աստուածածնի , և միւսը յանուն սուրբ Կարապետի . և այս երկու դասերու երկու կամարաց վրայ կան դարձեալ երկու սրատալրագամատոյց սեղաններ , յանուն Պետրոսի և Պողոսի գլխաւոր առաքելոց , ուր կ'ելլուի հարաւային պատին մէջէն յատուկ աստիճանով :

Այս հրաշալի եկեղեցիս , որ կառուցեալ է յանուն երկու համանուն Առաքելոց , ըլու հաստատուն սիւներու վրայ հաստատեալ է կամարակապ և գմբէթաւոր և գեղեցիկ զարդերով զարդարեալ . և ինչպէս պատերը՝ նմանապէս և սիւները երկու կարգ զանազան օրբոց պատկերներով և ուկեղօծ շրջանակներով զարդարուած են :

Դաց ՚ի սուրբ Յակոբայ մայր եկեղեցին , կայ ուրիշ եկեղեցի մ'ալ նոյն վանքին մէջ սուրբ Թէսդորոսի անուամբ , որուն վրայով վորք ՚ի շատէ վերը պատմեցինք . (տես յօդ . 64) : Այս եկեղեցւոյն հիւսիսակողման տանիքին վրայ վորքիկ մասուռո մ'ալ կայ սուրբ Հոգի անուամբ կառուցեալ , որ պատարագամատոյց սեղան մը ունի , և երբեմի պատարագ կը մասուցուի :

140

Սուրբ Յակոբայ վանքեն դուրս երելով և
դէպ ՚ի հիւսիս ուղղակի դիմելով մինչեւ վա-
ճառանոցի գլուխը և անկէ արեւելք դառնա-
լով զառ ՚ի վայր, և ձախ կողմը առաջին փողո-
ցը մանելով դէպ ՚ի հիւսիսակողմն սուղ ինչ
յառաջանալով երկաթեայ դուռ մը կայ, որ
Յունաց մասնաւոր վանքերէն մեկն է՝ յանուն
Յովհաննու Կարապետին: Անոր տուշեւէն անց-
նելով ու շիտակ երթալով փողոցին վրայ կամար-
ներ կը տեսնուին, որոնց վրայ է Յունաց մեծ
վանքը ու իրենց Պատրիարքարանը. նոյն կամա-
րին բերանը աջ գիդ փողոց մը կայ, որ սուրբ
Յարութեան փոքր դուռը կը հանէ, ուսկից
ներս մոնելով նոյն երկնանման Տաճարին գա-
ւիթն է. որտեղ հարաւակալմբ փոքր վանք մը
կայ, ուր սուրբ Աստուածածնայ Յունաց տե-
սուլը կը բնակի քանի մը միաբանօք. և կը պատ-
մուի թէ այս տեղ հին ժամանակ մահապար-
տաց բանոտ էր. Դշխոյն Հեղինէն ալ Հրեից
ծեր Յուդայ Կիւրեղը հոս բանապեկեց, մին-
չեւ որ կենասատու խաչին տեղը ցցց տուաւ ի-
րեն, և ինքն ալ հաւատալով ՚ի Վրիսոս մար-
տիրասական մահուան արժանացաւ:

Սուրբ Յարութեան գաւթին մէջ եցաւ ուեցերը:

¶ ¶ ¶

Յարեւելից կողմէն Հայր Արքահամաւ վան-

քըն է՝ զոր Հայոց ձեռքէն յափշտակեցին Յոյնք
Աստուածատուր պատրիարքի ժամանակ, և մինչ
չեւ ցացսօր իրենց ձեռքն է. որ երկու եկեղեցի
ունի, մեկը Վողդոթային մօս է, որու համար
կ'աւանդեն թէ Հայր Աքրահամ իւր Իսահակ
որդին այն տեղ պիտի զոհեր, և Վողդոթայի
աեղլոյն նայած ժամանակ խոյը Ասքեկոյ ծա-
ռէն կախեալ տեսաւ, զոր վախանակ Իսահակոյ
զոհ մատոյց Ատուծոյ. վասն որոյ և եկեղեցին
Հայր Աքրահամու անուանը նուիրուած է: Իսկ
միւս եկեղեցին է յանուն սրբազնն Առաքելոց,
Յիշեալ վանքին ներքեւը փոքրիկ եկեղեցի մ'ալ
կոյ յանուն Յովհաննու աւետարանչին. ուր որ
ի ժամ խաչելութեանն Վրիստոսի կոյնած էր
սուրբ Աւետարանից հանդերձ սուրբ Աստուա-
ծածնիւ, ինչպէս որ կը վիրայէ Աւետարանիցը ը-
սելով. « Եմին դու, ահա որդին քո »: Եւ այս
եկեղեցիս երեք խորան ունի. աւագ խորանն է
յանուն Յովհաննու աւետարանչի, աջակողմինը
յանուն չարչարանաց և կապանաց Վրիստոսի,
որովհետեւ Յիսուսի կապած սիւնէն մասմը կոյ
ոսյն սեղանին մշշ արծամթով պատեալ, և այս
սիւնը Կայիսակայ քահանայապետին տունէն բե-
րուած է. և ձախակողմնան սեղանն է կառու-
ցեալ յանուն Աքրահամու և Իսահակոյ: Այս
եկեղեցիս Հայոց աղդին ձեռքն է:

Սուրբ Յովհաննու եկեղեցւոյն աջակողմը
դուռ մը կոյ, որ խմաւոց եկեղեցին է՝ յանուն
Ակրայէլի հրեշտակապետին. և նոյն եկեղեցւոյն
անկիւնէն վեր ելլելով սակաւ ինչ, դարձեալ

ուրիշ եկեղեցի մը կայ Հապէշից, յանուն չորից
կենդանեաց կամ քառակերպեան . և սակաւ
ինչ գարձեալ դէպ ՚ի վեր երթալով կ'ելաց մեր
սուրբ | ուստաւորիչ եկեղեցւոյն Դիւտ խաչ
տանիքը, որ սուրբ Յարութեան տաճարին մէջն
է . որուն տանիքը և կաթուղիկէն Վրիտոր շող
թոյակիր հայրապետը նօրոգեց Հայոց ԱԿԸ, Թը
ւականին, և այս տանիքիս արեւմտեան հարա-
ւակողմը տասն և վեց սենեակի՛ բաղկացեալ
վանք մը կայ, ուր տեղ կը բնակին Հապէշից
աղքատ կրօնաւորները, որը ՚ի սուրբ Յակոբայ
վանիքէն կ'ընդունին իրենց հոգէալահիկն ալ:
Դարձեալ յետ դառնալով սուրբ Յարութեան
գաւիթը՝ կից սուրբ Վողդոթային հարաւակող-
մը փոկրիկ մասուռ մը կայ յանուն սուրբ Առ-
տուածածնի, որ նախ Հապէշից էր . և ժամա-
նակ մը եւս մեր ձեռքը մնաց, բայց հիմաց Յու-
նաց քաղաքացի ժողովրդոց ձեռքն է: Ոյն եկե-
ղեցւոյս վասյ դարձեալ եկեղեցի մը կայ | ատի-
նաց ձեռքը, յանուն սգաւոր Աստուածածնի,
որուն լուսամուար Տաղածման տեղւոյն վրայ
կը նայի:

Սուրբ Յարութեան գաւթին արեւմտեան
կողմը Յունաց սուրբ Յակոբ անուամբ եկեղե-
ցին է՝ դարձեալ քաղաքացի ժողովրդոց յատ-
կացեալ. և երեք զատ եկեղեցիներ են, մին յա-
նուն սուրբ Յակոբայ արդար առաքելցն, որ
վ բայց սուրբ Յակոբ ալ կըկոչուի Յունաց մէջ.
ունանիք կ'ըսեն՝ թէ Տեղասնելքօր Յակոբայ ար-
գար սուաքելցն մարմինը հոս թաղուած է, բայց

Վարինոս լատինաց պատմիցը անսոց ստութիւնը
ցրելու համար կ'ըսէ երրորդ գլոբին մէջ Խօ գը-
լուխը թէ, « Յէպէտ կ'ըսէն սմանք, թէ Տեառն
եղացը՝ որ է առաջին Հաղիսկոպոսապետն Երու-
սաղէմի, մերձ սուրբ Յարութեան Յունաց
սուրբ Յակոբայ եկեղեցին նատեցաւ առաջին
Պատրիարք, բայց չէ հաւանական, վասն զի աւ-
ռաքեալները իրենց սովորութեան համեմատ՝
Միօն լերան վրայ կը նառէին . ուր որ նոյն ար-
դարսին տուններ՝ և հոն եղաւ նորին եպիսկո-
պոսութիւննե և եպիսկոպոսարանն : Երկրորդ ե-
կեղեցին է յանուն Քառասուն մանկանց, և եր-
րորդը յանուն Վարիամ Վագդաղէնացւայն :
Այս վանքիս մէջէն յատուկ գուռ ունին Յոյնք
որ իրենց սուրբ Կոստանդինոս կոչուած մէծ
վանքը կ'երթան, ուր անզ է նաեւ իրենց Պատ-
րիարքարանը, և սուրբ Յարութեան զանգակա-
տունը : Յիշեալ վանքն ալ ունի զատ եկեղեցի
մի սուրբ Յարութեան կից, որուն պատու-
հաննելը սուրբ Յարութեան տաճարին մէջ
կը նայի . և կ'ըսուի թէ այս եկեղեցին նախ
Վրաց աղդինն էր :

Սուրբ Յարութեան մէջ գանուած ուժուատեցիրները :

142

Սուրբ Յարութեան երկնանման տաճարին
մէջ կան շատ սուրբ Տեղիք . նախ՝ աւագ գը-
նէն ներա մտած ժամանակ դիմացն է՝ Քրիստոսի
ամենափառաւոր և հրաշալի Պատանատեղին,
որուն վրոյ Յովսէփի արեմաթացին և՝ Նիկողիւ-

մոս պատճեցին սուրբ կտաւով՝ Վրիստոս Տէրն
մեր . և այս փառաւոր տեղւոյս վրայ ութիւնը մըշ-
տավառ կանթեղ կան , որոնց չորաք Յունաց է ,
Երկուքը Հայոց , մին և ատինաց , և մին Դ փա-
ւոց . և Երկու կողմերը Երկուասան աշտարակ-
ներ կան , որոնց վեցը խիստ մեծ են , և վեցը
միջակ . Երկու մեծ և Երկու փոքրը Հայոցն է ,
նմանապէս և ատինը և Յոյնք ունին Երկու մեծ
և Երկու փոքր . և այս Պատանատեղւոյն դիմա-
ցը Յունաց տաճարին հիման տակը Խաչակիք
թագաւորաց գերեզմաներն են , որ առաջ դուրսն
էին , ու Տաճարին այրելէն Ետքը (1808) Երբ
Յոյնք հրաման առին շինելու , իրենց տաճարը
ընդարձակելով՝ յիշեալ գերեզմանները ներս ա-
ռին ու պատին տակը մնացին :

Երկրորդ ուխտատեղին է՝ Պատանատեղին
դէպ արեւմօւտք քիչ մը յառաջանալով՝ աջա-
կողմեան պատին կից Խւզաբեր կտնանց սեղա-
նը որ Հայոց ձեռքն է : Կանայք՝ որ Յիսուսի
մարմինը օծանելու եկան և կը խորհին՝ թէ ովլ
թաւալեցուսցէ մեզ զվէմն , այս սուրբ սեղա-
նոյս տեղը կայնած էին :

Երրորդ ուխտատեղին է այս սուրբ սեղա-
նոյս հարաւակողմը , մեր տեսչին սենեկին առ-
ջեւն եղած սուրբ Աստուածածնայ ուժաթափ-
ման տեղը , որուն շրջապատը Երկաթեայ ճա-
ղավ պահպանուած է՝ վրան մեծ ջահ մը կա-
խուած հանդերձ կանթեղներով , որոնց մէկը
մշտավառ է՝ ի պատիւ սուրբ տեղւոյն : Այս
սուրբ տեղւոյս համար կը գրէ Շնորհալի հայրն

մեր ըսելով . “ Ճօղէր արտօսր ցաւագին , մայր Տեառն որ կայր մերձ առ խաչին ” . որովհետեւ այս տեղ Վողդովմայի դիմացն է , և յատուկ Հայոց ազդին ձեռքին է : Յիշեալ տեղւոյն հարաւային կողմն է սուրբ Յարութեան Տաճարին Հայոց տեսչին սենեակը , որուն առջեւէն անցնելով և սանդուղին վեր ելքելով սենեակ մը կայ նոյն տեսչին սենեկին վրայ , որ հիւրանոց է ջերմեռանդ ուխտաւորաց . նոյն սանդուղին գեպ ’ի հարաւ շարունակելով՝ մեր վերնատան եկեղեցին կ’ելլուի , որուն աւագ խորանին կ’ըսուի երկրորդ Վողդովմայ , Վողդովմայի դիմացը ըլլալուն համար . այս խորանին հիւսիսակողմը սենեակ մը կայ , ուր տեղւոյն լուսարարը կը բնակի . աւագ սեղանի ետեւը երեք պատուհան կան , որոնք Պատանատեղւոյնն և Վողդովմայի վրայ կը նային . և կամարին հարաւային կողմը դարձեալ զատ եկեղեցին է , և ունի սեղանն պատարադամատոյց յանունն սուրբ Առածուածածնի , ուր երաշխաւոր եղաւ սուրբ Առածուածածին առ միածին որդին խւր , և եթող եկիպատացի Արքիամին մեղքերը : Տես Յայսմաւուրը և Հաննոայի պատմութիւնը :

Այս սուրբ սեղանին ետեւը գուռ մը կայ , որ փոքր սենեակի մը մէջ կը բացուի , և նոյն սենեկին քանի մը աստիճանաւ վեր սեղանատունը կ’ելլուի , որ ունի փառաւոր մէծ պատուհան մը սուրբ Յարութեան դաւթին վրայ և ուրիշ պատուհան մը սուրբ Պատանատեղւոյն վրայ : Այս վերնատան եկեղեցին փոքր ըլլալով՝ 1639 թուա-

կանին Գրիգոր Պարտներ սուրբ հայրապետը
| ասինսց միաբանութենէ Երեք կամար առնե-
լով ընդարձակեց . և այս Երեք կամարին փոխա-
րեն՝ սուրբ Պարտեզի մեր Երկու կանթեղներեն
մէկը և անոնց արդի Երգեհնին տակի սենեա-
կը սուաւ : ‘Իարձեալ շղթայակիր սուրբ Հայ-
րապետը մեր վիճակը նորոգած ժամանակը քա-
ռանկիւնի սիւնը , որ վերնատան աւագ խորանին
դիմացն էր՝ վերցուց . և 1808 թուականին այրե-
լէն Ետքը Ա անեցի Յակովոս պատրիարքը մեր
սեփական տեղը ըստ հին գրութեան վերստիննո-
րոգեց , զոր Յայնք յունական ձեւալ շնչած էին .
բայց վերնատան տակը Երեք սիւներուն միջոցի
ներքնատունը , որ հրդեհէն առաջ Հապէներեն
մեզ անցած և փոքրիկ մատուռ մի էր մեր ձեռ-
քը , Յայնք յափշտակեցին , որ այժմ անոնց լու-
սարարի խուցն է , և ուխտաւորաց բնակարան :

Չորրորդ ուխտատեղին է Յովսէփ արեմա-
թացւոյն Եկեղեցին , որ Երկու գուռ ունի , և
նոյն սրբոյն գերեղմանն ալ հնի է , թէ և մեռ-
նելին Ետքը հնն չժաղուեցաւ , բայց անոր ան-
ուամբը կը յիշուի : Խակ Եկեղեցին է յանուն
սուրբ Կոստածածնի , և ունի սեղան պատա-
րագամատոց , ուր Հայք և Կոստիք անխափիր
կը պատարագեն : Կյա Եկեղեցւոյս վրան մեծ
սենեակ մը կայ , ուր մեր պաշտօնատար ժամա-
րանները կը բնակին հանդերձ սարկաւալոք .
բայց ծագկապարդին և յարութեան շաբաթ և
կիւրակէ օրերը Կոստոց կուտամք , իրենք օրի-
նուոր տեղ մը ըսւնենալնուն համար :

Հինգերորդ ու խտատեղին է՝ 'Վ վառոց մատուռը, որ Յովսէփի արեմաթացւոյն դրան առաջն է, կենսատու տուրբ Գերեզմանին արեւմտեան կողմէն կցուած, որուն պատարագամատոյց սեղանը սնարից հրեշտակի վիմին վաս կառացեալ է, ուր 'Վ վաճները կը պատարագեն: Կը պատմեն, թէ այս սեղանը Բ. Հեթումթագաւորը շնեց առանց ծածկութի. բայց յետժամանակաց մեր նախնիքը 'Վ վառոց տուին, և անոր վախարէն Հագիպտոսի մէջ եկեղեցի մը առին իրենցմէ Հայ ժողովրդոց համար:

Վ եցերորդ ու խտատեղին է՝ Պարտէզը, ուր յարութենեն ետքը երեւեցաւ Կիւնարարն Յիւսուս Ուարիամ մագդաղենացւոյն: Եյտ աեղւացա վաս վաս որ Պարտէզ կ'ըստի ըստ Աւետարանի, երկու մշտավառ կանթեղ կախուած էն, որսնց մին մերն է, և միւսը Հատինաց տուած է՝ Պարմտէր ինչպէս վերը ըսինք. և հանդէպ սուրբ տեղւոյս արեւելեան կողմը պատարագամատոյց սեղան կայ Հատինաց ձեռքը յանուն Ուարիամու Ուագդաղենացւոյ. և անոր հիւսիսակողմին է Հատինաց եկեղեցին, որ երեւ խորան ունի, մին Զարշարանաց, ուր ամփոփեալ կայ Կայիաիայի տունէն բերուած սետն մէկ մնար, որուն ըզ Քրիստոս կապեցին, և որուն մէկ կոտորն ալ մէր սուրբ Յօվհաննու եկեղեցւոյն մէջն է ըսինք. իսկ միջին խորանն է յանուն սուրբ Աստուածածնի. և աջակողմեանը յանուն սրբայ խաչին. և սեղանին մօտ գուռ մը կայ, ուրիշ իւրեանց յաստեկ վանիքը կ'երթուի, ուր կը բնակին սուրբ

Յարտ-թեան մէջ եղող իրենց միարանները :

Եօթներորդ ուխտատեղին է Յիսուսի չորրորդ բանաը, որ Յունաց ձեռքն է : Յայտնի է որ Յիսուսի առաջին բանաը Աննա քահանայակետի տունն էր, որ է սուրբ Հրեշտակապետաց վանքը . Երկրորդը Կայիսրավոսի, այն է Փրկչավանքը, որտեղ Երկուքն ալ մեր ձեռքն են . Երրորդն է Պիղատոսի պալատին մէջ, որ Տաճկաց ձեռքն է . և չորրորդը՝ այս սուրբ Յարտ-թեան Տաճարին մէջի յիշեալ սուրբ տեղը, ուր շատ քիչ միջոց մնաց Յիսուս մինչեւ որ խաչելութեան գործիքները պատրաստուեցան : Այս սուրբ տեղս ժամանակաւ Հապէշից ձեռքն էր, բայց այժմ Յունաց է . և մերձ այս սուրբ տեղւոյս է սեղան Յունաց՝ յանուն 'Կունկիանոսի', որ նոյնպէս Հապէշից ձեռքն էր առաջ :

Խններորդ ուխտատեղին է, Յիսուսի Տեառն մերս հանդերձ բաժանման սեղանը, որ Հայոց ազգին ձեռքն է . Հոս Վրիտառի խաչելութեանէն չորս զինուորներ հանդերձները բերելով, բաժանեցին իրենց մէջ, և անկար պատմուճանին վրան ալ վիճակ ձգեցին :

Տասներորդ ուխտատեղին, այս սուրբ տեղէս արեւելեան կողմը դառնալով, քարէ աստիճաններէն | ուստաւորչաց Եկեղեցին կ'իջանեմք, որ Հայոց ազգին է և չորս սիւներու վրայ շնուած է, և ունի կաթուղիկէ վեց պայծառ լուսամուտներով, և Երկու խորան . մին յանուն որբայ խաչին, և միւսը յանուն 'Կեմասաց աջակողմեան աւաղակին : Բայց վերջի ժամանակիր

սուրբ Աթոռոյս Հայրապետք նորոգելով, խաչի
սեղանին անունը սուրբ | ուստաւորչի փոխեցին,
և Դեմասայն՝ սուրբ Կարապետի, որոց մասուն-
քէն մաս մը ամփափեալ կայ նոյն սեղանին տա-
կը : | շւ եկեղեցւոյ ձախակողմը պատուհան մը
կայ, ուր երեք կանթեղք կը վառին . ոյն պա-
տուհանին մէջ նստած էր կ'ըսեն դշխոյն Հե-
ղինէ, և շատ գանձեր ցրուելով կենաստուխա-
չին թաղուած տեղւոյն աղբիւները փորել կու-
տար, ուսիէ գտնուեցաւ անդին գանձն Փրքի-
չական, որ երեք հարիւր տարւոյ չափ նոյն աղ-
բիւներուն տակը մնացած էր : | շւ ասոր հա-
մար այս տեղւոյս կ'ըսուի Գիւտ խաչ, և է ուխ-
տառեղի ամենայն հաւատացելոց : Հոս | ա-
մինք սեղան մի ունին պատարագամատոց, ո-
րուն վրայ շատ ժամանակ չէ Հեղինէի արձա-
նը կանգնեցին . գիրկը խաչ մը բռնած :

Ուստասաներորդ ուխտառեղին է Փուշպա-
կը, որ Յունաց ձեռքն է . որոյ սեղանին տա-
կը ամփափեալ է ձաղանաց սիւնին մէկ մասը,
որուն վրայ Փրկիչն մեր նստեցունելով՝ կտրմիր
քղամիդ հաղցուցին, և ստառածացին գլուխը
փշեայ պատկ դնելով՝ և եղէգը աջ ձեռքը տա-
լով կը ծազրէին : | շւ այս սիւնս Պիղատոսի պա-
լստէն եկած է . և յիշեալ Փուշպակի սեղա-
նը նախ Հապէշից ձեռքն էր :

Եղկատասաներորդ ուխտառեղին է սուրբ
Գողգոթայն, ուր տարածեցաւ և խաչեցաւ
կենդանաստուն ամենեցուն . և այս սուրբ տեղու-
երկու մաս բաժնուած է . մէկն է բռն խաչե-

լութեան տեղը , ուր կանգնեցուցին Յիսուսի խաչախայտը , և է սեղան պատարագամատոց չորս կճեայ պատուական սեանց վրայ հիմնեալ . Հարաւակողմն է պատառեալ վէմք , և սուրբ տեղւոյս վրայ կանգնեալ է ահարկու պատկեր խաչելութեանն Քրիստոսի , և երկու կողմէն կրկին պատկերներ սուրբ Աստուածածնի , և Յովհաննու աւետարանչի : Ամէշ գուռ մը կայ որ Յունաց եկեղեցին կ'իջնէ . և ասոնք ամենքն ալ այժմ Յունաց ձեռքն են : Խակ երկրորդ մասն է տարածման տեղը , որ խաչելութեան տեղւոյն կից և անոր Հարաւակողմն է . ունի սեղան պատարագամատոց , որուն առաջն է Տարածման տեղը , ուր որ կենարարն մեր գետինը խաչն վրայ տարածելով պրկեցին . և այս տեղւոյս հիւսիսակողմը գարձեալ կայ փաքրիկ սեղան պատարագամատոց : Այս տարածման տեղը Աստինաց ձեռքն է :

Այս սուրբ Գողգոթայն ամբողջ , ինչպէս որ առաջին հատորին մէջ յիշեցինք , ըստ պատմութեան Հաննայի , Հայր Վելքայէլի Չամչեան և Ագաթանգեղոսի , շնութեան սկիզբէն Հայոց ազդին եր՝ համահաճութեամբ սրբազն հայրապետացն Աեղքեսարտոսի և Առասւորչի , և բարեպաշտ թագաւորացն Կոստանդիանուսի և Տիգրանայ . մանաւանդ Աեղքեսարտոս սուրբ հայրապետն , ինչպէս գրուած է ՚ի գիրս գաշնց 419 , 420 երեսը , և ՚ի Հայոց պատմութեան Ա հատոր 650 երես . «Պարգեւեցի , կ'ըսէ , նորասպասի Պարթեւիս մերս (սցսինքն Կրի-

գորի | ուստաւորչին) յիշատակ ազգաց յաղգս յիշաւագէմ քաղաքի իջեւանք Հայոց ազօթականաց զվկայարան սրբոյն Յակոբայ եղբօրն Յովլ հաննու . . . պատրաստեցի՛ւ տեղի պատարագի ՚ի Յարութեան մեծի եկեղեցւոջն զԴողգոթայ խաչելութեան տեղին և զնարից կուպայն, և զմիջի կանթեղի մշտավառ, որ երեք կանթեղը են ՚ի վերայ Գերեզմանին Քրիստոսի յիշատակ | ատինացւոց, Հայոց և Հելենացւոց” :

Եւտ ժամանակաց 1434 ին, ինչպէս սուրբ Աթոռոցս Վարտիրոս պատրիարքի յիշատակարանէն և ուրիշ արձանադրութիւններէն առնելով ծանօթութիւն կուտայ մեղի սուրբ Գողգոթայի յափշտակութեանը վրայ ըսելով յերես 187. 225. 227. “ Հգիպտացի ոմն վաճառական ՚այխպի անուն, գնաց ՚ի Վրաց տունն յաղագս վաճառականութեան. և էր սա բարեկամ սուլթանին Հգիպտասի Վելէք Հշրէֆայ, որ արիէր Կրուսաղէմայ. և մինչ վերոցիշեալ վաճառականն գնաց ՚ի Վրաց տունն, Վրաց խանն Խւվանէ անուն խմացեալ զառաջակայութիւնն վաճառականին առ սուլթանն Հգիպտասի, բազում շողոքոթութեամբ և կաշառօք աղերսեաց, զիմիջնորդ լիցի առ սուլթանն առնուլ զառը Գողգոթային ՚ի Հայոց և տալ Վրաց, և խոստացաւ տալ ամ յամէ ՚ի Վրաց տունէն քսան աղջկունս յագգէ իւրմէ ընծոյ Սուլթանին. Վմին իրի և հաւանեցոց զԴայխպի վաճառականն, ՚ի ձեռն բաղկամ կաշառաց հաւանեցու-

ցանել զառւլթանն . ուստի բաղում աղախնովք և ընծայիսք դարձաւ Աշուապտոս , և ծանոց սուլթանին զաղերս Վրաց խանին , թէ այսքան ընծայ և վրացի ծառայս յղեաց և ամ յամէ յղերց է . և այսպիսի խարդախութեամբ էառ զառւրբ տեղին զՎաղգոթայն 'ի ձեռաց Հայոց և ետ Վրաց : Խակ Վարսիրոս պատրիարքն է , բուսաղէմի , էջ Աշուապտոս առ Վելք Կշռէֆ և էառ կրկին զՎաղգոթայն . բայց նոյն վաճառականն վերստին շրջեաց զմիսս սուլթանին և ետ Վրաց . և դարձեալ էջ Աշուապտոս Վարսիրոս պատրիարքն , և էառ զառւրբ տեղին մինչեւ ցհինգ ամ . և յետ վերստին գրգռմանն առէ սուլթանն ցՀայրապետն մեր . “Վրաց խանն ինձ քսան աղախին ծառայս յղէ , թող զընծայս , ուստի չ հնար տալ քեզ զՎաղգոթայն . այլ երթ և ընտրեա քեզ տեղի մի 'ի մէջ սուրբ Յարութեան , և ես վաճառեցից քեզ իբրեւ սեպհական միւլք , և ոչ ոք յայլոց աղգաց կարիցէ ներհակել քեզ” : Եւ Վարսիրոս հայրապետն եկեալ ընտրեաց զայժմեան վերնառունն մեր , որ ասի թէ է տեղի թռագաւորաց , և դրամօք գնեաց զայն և արար եկեղեցի , և անուանեաց երկրորդ Գողգոթայ : Բայց յետ քսան և հինգ ամաց բնաջինջ եղեն Վրացիք Աշուասաղէմէ , և Յոյնք տիրեցին ամենայն վանորեից նոյա և Գողգոթային , և յետոց Կատինք բռնութեամբ զկէսն Գողգոթայի այսինքն զտարածման տեղին առին 'ի ձեռաց Յունաց” :

Արեքտասաներորդ ու խոտառեղին, սուրբ
 Գողգոթայէն իջանելով, և Պատանատեղէն անց-
 նելով և կամարի տակէն ու սիւներու մէջէն
 անցնելով, Քրիստոսի Տետոն մերոց երկրապա-
 գելի և պաշտելի Վերեզմանն է արձճապատ-
 գմբէթով Տաճարին մէջ տեղը, որ երկու մասի
 բաժնուած է: Առաջին մասն է արեւելեան
 կողմը սուրբ Վերեզմանին, քառակուսի ձեւով
 և գուռը դէպ կարեւելը Յունաց աշխարհա-
 մատրան եկեղեցւոյն դիմացն է և տար մէջուե-
 ղը մարմարեաց սիւնաձեւ և կէս մարդաշտի
 բարձրութեամբ քար մի կայ, որ հրեշտակին կայ-
 նած տեղն է. մեր ազգը կենսատու Վերեզ-
 մանին վրաց պատարագ մատուցած ժամանակը՝
 վերաբերման ատեն սկիհը անօր վրան կը դնէ:
 Եւ արտաքսյ դրան երկու կողմէն բազմոցներ
 կան, որոց շրջապատը երկոտասան աշտանակ-
 ներ կան, որոց վեցը խիստ մեծ են, և վեցը
 միջակ. և այս աշտանակաց երկու մեծ և երկու
 փոքրը Հայոցն է. նմանապէս երկու մեծ և եր-
 կու փոքրը Յունաց է, և նոյն թուով դար-
 ձեալ լատինաց: Եւ սոյն դրան ճակատը երեք
 ազգաց երեք պատկերներ և երեք ալ մշտավառ
 կանթեղներ կան. առաջինը՝ որ անմիջապէս դր-
 բան վրայ է հանդերձ կանթեղով, Հայոցն է.
 միջինը Յունաց և վերինը լատինաց: Իսց
 հանդիսաւոր օրերուն սահմանն չկայ. որչափ ու-
 ղէ իւրաքանչլւր ազգ իւր սահմանը կը պարզա-
 րէ և կը պայծառացունէ: Եւ սոյն երկրացիկ
 դրան ներսի կողմէն, յանոտաից հրեշտակին վե-

մին վրայօք տան և հինգ մշտակառ կանթեղ
ներ կան , որսնց չորսը մերն է , մեկը՝ Վ փուլոց ,
հինգը Յաւնաց և հինգը Ա ատինաց : Երկու
կողմեն փոքրիկ լուսամուտաներ ունի , ուրկէ
յարութեան ճրագալոցի ժամանակ , ըստ սո-
վորութեան Հայաստանեաց Եկեղեցւոց լուսա-
ւորեայի լոյսը վառելով , դուրսի գանուող ժողո-
վըրդեան կը հաղորդեն , և ոչ թէ Գերեզմա-
նէն լոյս կը բղիսի ինչպէս ամանք կարծել կ'ու-
զեն : Այս Քրիստոսի կենաւառ գերեզմանը ես
հաւատոց աջօք միշտ լոյս ըլլալը կը հաւատամ ,
և կ'երկրապագեմ անտեսին Աստուծոյ՝ որ միշտ
անմեկնելի է այն սուրբ տեղէն . բայց ճրագա-
լոցի ժամանակ լոյս կը բղիսի ըսելը՝ ժողովրդոց
անմտութիւն է , և հաւատոց թերութիւն :
Այս , ճշմարիտ լոյն Քրիստոս ՚ի ժամանակի
յարութեան ինքնազօր կարողութեամբ բղխե-
ցաւ այն գերեզմանէս , և եղեւ լուսասու ու-
մենայն հոգւոց հաւատացելոց . և ոչ թէ միայն
անոնց՝ որնք ճրագալոցի ժամանակ նոյն սուրբ
տեղը ներկայ կը գտնուին : Ահա այս մոտք է
Հայաստանեաց Եկեղեցւոց լուսաւորեայն՝ զար
կը կատարեմք . և թէ՝ Խնարարն մեր Յի-
սուս այն միջոցին յառնելով սուրբ Գերեզմա-
նէն , վկիսւթեան արժանի հոգիք , որնք ան-
լոյս դժոխոց խաւար բանտին մէջը փակուած
կացին , զանոնք իւր յարութեան շնորհիւը խա-
ւար դժոխքէն արքայութեան լուսոյն մէջ փո-
խարկեց . ուր կը զուարձանան անմահ խնդու-
թեամբ ։ Արդ՝ դառնամք մեր պատմութիւնիր

շարունակելու . Նոյն սուրբ Գերեզմանի դուռ
որ ոչ տակաւ խոնարհագոյն է վերին դռնէն ,
և դարձեալ առ արեւելքն կը նայի . ուրկէ ներս
մտած ժամանակ երկրոպագելի Գերեզմանն է ,
որուն վրայ 43 մշտավառ կանթեղ կան , որոնց
13ը Հայոցն է , 13ը Ատինաց և 13ը Վրիաւ
ոց : Եւս և երեք յարութեան պատկեր կայ
հիւսիսացին որմը . յանուախ՝ արծաթեայ շրջաւ
նակավը Հայոցն է , միջննը՝ որ մարմարեայ քա-
րին վրայ փորագրեալ է՝ Յունացն է , և մնաւ
րեց կողմինը Ատինաց . և այս պատկերաց առաջեւը իւրաքանչիւր ազգ վեց մնմակալ և չորս
ծաղկանոց ունին . և սուրբ Գերեզմանին գրմէ-
բեթն ալ երկոտասան սեանց վրայ հաստա-
տուած է . և շատ զարդեր և կանթեղներ կան
հաւասար իւրաքանչիւր ազգաց , որոնք ըստ
պատշաճի աւուր կը վառուին . բայց վերին ար-
ձրձապատ գմբէթը քսան կամարներու վրայ
շնուռած է : Եւ Յունաց եկեղեցին հանդէպ
Գերեզմանին է արեւելքան կրղմը և ութ կա-
մարներու վրայ կառուցեալ է սոյն եկեղեցւոյ
գմբէթը , և եկեղեցին չորս դռւու ունի . մին
արեւմտահայեաց՝ Գերեզմանին վրայ , երկրոր-
դը հիւսիսակրղմը՝ բանախն վրայ կը նայի . խոկ
միւս երկուքն հարաւակրղմը , որոնց մին ճա-
նապարհին վրայ կը նայի , և միւսը սուրբ Կող-
դոթոյ կ'ելլէ : Ահա ասոնք են սուրբ Յարու-
թեան երկնաման Տաճարին մէջ գտնուած
սուրբ սեղմիքը :

Այս հրաշալի և ամենախառաւոր եկեղեցին

նախ բարեպաշտ և աստուածամեր Աքդարու կին Հեղինէէն նշանակուեցաւ շինելու փոքր փոքր մատուռներով. Երկրորդ՝ Կրտսանդիանս թագաւորէն և իւր բարեպաշտ Հեղինեայ մօրմէն. և այս փառաւոր շինութիւնը Պարսից Խոսրով թագաւորը 615 թուականին աւերեց, իսկ քրիստոնեայք 638 թուականին Վարձեալ նորոգեցին. Իսկ 673 թուականին Վագիպոտոսի Գուէմ խալիֆան ալտերել տուաւ. դարձեալ նորոգեցին քրիստոնեայք սակաւ միջոցի մէջ: Եւ դարձեալ Հաքէմ իշխանն ալ 1009 թուականին Հաքէմից թախանձանօրը եկաւ սուրբ Յարութեան տաճարը աւրեց, ինչպէս որ Վատինաց Գոււաւէզիսար կը գրէ: Վւթէպէտ սոյն իշխանը աւրեց սուրբ Յարութեան տաճարը, բայց 1031 թուականին իւր մօրը հրամանաւը, վերստին շինեցին քրիստոնեայք սոյն գերահրաշ Տաճարը, և ասոր համար Պարսիկոս պատմիչն ալ կը վկայէ: Այլ և Վարինոսի պատմութեան համեմատ 1235 թուականին վերստին նորոգեցաւ կենսաստ Վերեզմանն Քրիստոսի և Երկնանոման տաճարը. և Պոնիֆաչոս որ գործոյն գլուխ էր, Վերեզմանը քանդելով վար կ'իջնայ սյրին մէջ որ է բուն գերեզմանը, և հօն Երկու հրեշտուակներ նկարաւած տեսած է, որոնք խիստ հնաւթեան պատճառաւ խկոյն հող դարձած են. և վարշամակով պատեալ տախտակ մը տեսած է, որուն վրայի եղծուած գիրը այսչափ միացն կարդացուեր է. “Եկշտակ Հեղինէէն չ աս՝ այլ յարեաւ, ահաստիկ ու եւ եւ հարմին”

նորա ու . և միւսները եղծուած լինելով չեն կրցած
կարդալ : Եւ սոյն պատմիզը ծանօթութիւն
կուտայ թէ , իրենց տաճարին մէջի Պրիառասի
կապանաց սիւնը թուլմայի տունէն եկած է , որ
Հայոց ձեռքն էր , և ինքն ալ ականատես է եւ
զեր սեան նոյն վանուց մէջ լինելոյն : Եւ այս
փառաւոր տաճարը առաջ շատ գեղեցիկ ձեւ
էր ունեցեր է , և հիանալի բազմաթիւ դրու-
ներ . բայց պատմութեանց մէջ չանցնելուն
համար , ամէնն ալ հիմայ մեղ անծանօթ են ,
թէ և մէկ քանի դռները դեռեւս կ'երեւին .
բայց բարամբ հիւսեալ են . և հիմայ մէկ դռուո
միայն ունիմք երեք ազգքս , ուրիէ ել և մուտ
կ'ընեմք : Այս երկնանման տաճարիս մէջ երեք
ազգաց պաշտօնատար միաբանութիւնք կան ,
այսինքն՝ Հայոց , Յունաց և Վատինաց , և մի
լուսարար Վ փառոց , որք անխռափան խրաքան-
չիւր ծխից և արարողութեանց համեմատ՝ ա-
մէն օր ըստ սովորութեան ժամերգութիւնք և
սուրբ Պատարագի խորհուրդը կը կատարեն
կենաստու Պերեղմանին վրայ՝ ՚ի փառս Արար-
ցին և ՚ի քաւութիւն ամենայն հաւատացելոց :

143

Այս սուրբ Տաճարիս արեւելեան գաւթի
դռնեն ելլելով սակաւ ինչ դէսլ ի արեւելք և
հիւսիս գնարով վաճառանոցին քառակուսի ճա-
ռապարհին վրայ սիւն մը կայ կայնեցուցած , որ
հիմայ չէնքին մէջն է , այս սիւնիս վրայ դրին

Յիսուսի Տեսուն մերս մահուան վճիռը, և
այն տախտակը՝ որուն վրայ գրուած էր Երեք
լեզուաւ և Յիսուս նաղովբեցի թագաւոր Նր-
քեից ։ (Յու. ձթ. 19.) ։ Եւ սոյն տեղւոյս
հիւսիսակողմը ճանապարհին վրայ կամարներ
կան, որոնց վրայ շատ տաւներ շնուռած է . այս
տեղերս նաստած էին կանայք, որոնք Յիսուսի
վրայ կու լսյին . բայց Յիսուս անսնց դառնա-
լով լսաւ . “‘Կատեբք Երանաղէմի, մի լաք ՚ի
վերայ իմ, այլ լսցէք ՚ի վերայ անձանց ձերոց
և որդւոց . . . զի եթէ ընդ փայտ դալար զայտ
առնեն, ընդ չորն զի՞նչ լինիցի ։” (Ղուկ. ԷԳ.
28, 31.) ։ Եւ սոյն տեղւոյս արեւելեան կող-
մէն երկրորդ կամարին աջակողմը նորակերտ
տուն մը կայ, որ նախ հացի փուռ էր, ուր
ձգեցին Նրեայք Վերոնիքա կինը՝ ըստ Վարիւ
նոսի պատմութեան, և կ’ըսէ թէ այս այն տե-
ռատես կինն է որ Յիսուսէն բժշկեցաւ . և
այն կետք տունը հու լինելով՝ կենարաբն մէր
Յիսուս ծանրագոյն խաչը ուսը անցնելու ժա-
մանակ, այս բարեսպաշտ կինը անոր քրտունք-
ները տեսնելով՝ վարշամակը երկնցուց իրեն,
որ իւր քրտունքը սրբած ժամանակ աստուա-
ծային երեսին պատուական պատկերը նկարուե-
ցաւ նոյն վարշամակին վրայ . ուստի Նրեայք
այս հրաշքը տեսածնուն պէս նոյն կինը հացին
փուռը ձգելով այրեցին : Այս տեղէն ուղղակի
վար իջնելով, պողոտացին գլուխը և սակաւ ինչ
հիւսիսակողմը պալատ մը կայ, զոր հռովմէա-
կան Նրեայք այլազգաց ձեռքէն դրամով գնեցին

եկեղեցի շինելու համար . և սոյն եկեղեցւոյս
դռւրսի կողմէն երկու սեան կատը կայ ընկողմա-
նեալ , որոնց համար կը պատմուի . թէ խաջա-
փայտը Յիսուսի ուսէն առնելով՝ սոյն սեան
վրայ գրին . ուր տեղ հանդիպեցաւ Ախմոն կիւ-
րենացին , և բռնելով զինքը խաջը ուսը տուին
որ տանի . (Վարի . ժե . 21 .) : Այս տեղւոյս դի-
մացը հիւսիսակողմը Վեմցէի նորաշէն հիւպա-
տոսարանն է , և ունի վայելչագեղ եկեղեցի մի ,
և սեղան պատարագամատոյց և քանի մի աւստ-
րիացի կարգաւորք :

Փուշ դասի եկեղեցին:

144

Արտաքյ տանն Պիղատոսի , և անոր կամա-
րին խորսիսին կից է Փուշպատկի եկեղեցին :
Այս սուրբ տեղս աւերակ էր առաջ և 1838
թուականին լատինք առին և եկեղեցի շինե-
ցին յանուն Փուշպատկի և ձաղանաց : Յետոյ
նոյն տեղւոյն արեւմտեան կողմէն ալ աւերակ
տեղեր առնելով , 1861 թուականին փառաւոր
ամրաշէն կուսանաց վանք մ'ալ շինեցին :

Ընդակիմայ և . Աննայի տունը ,
ուր ձնաւ . կոյսն Մարիամ Առաւածածին :

145

Պիղատոֆիկէ աւաղանին և քաղաքի արե-
ւելեան դրան մօտ փառաւոր վանք մի է Յո-
վակիմաց և Աննայի տունը , զօր Հայոց Արշա-
կունի նախարարները շինեցին . յետոյ խաջո-

կրաց ժամանակ | ատինաց ձեռքն անցաւ , և
կուսանաց վանք ըրբն : Իսկ 1187 թուականին
Եղուստք Ալահատափին Երուսաղէմին առած
ժամանակ յափշտակեց սոյն վանքն ալ | ատինաց
ձեռքէն , և իւր ազգին վարժարան շինեց : Իսկոց
1857 թուականին | ատինները իրենց իրենց
սեսլհական ստացուած՝ խնդրեցին այլազգնե-
րէն , և մինչեւ 1862 թուականին հաղիւ կա-
րսղացան իրաւանց տէր լինել , և ակսեցին նոյն
հռչակաւոր վանքը նորոգել և սպայծառացուցա-
նել 'ի փառս Անեղին և 'ի պարծանս հաւասա-
ցելոց :

Բեկինչըդայ:

146

Այս վանքիս հարաւային կողմի է Վեդհեղ
դան , այն է հինգ սրահը , որուն մէջ կ'իջնեին
ախտացեալը , հիւանդ.ք , կաղեր , կօյրեր , գո-
